

7728

33

F-21

2010

~~339~~

U. S. U.

ՀԱՐՈՒՏԵՐ

b h

U. S. A. S. T. B. P.

ԵՐԿՐՆՐԴ ՄԱՍ

ԹԱՐԳՄ. Ա. 2

lytig 1 pmphylax



ТИФЛИСЪ
тн „Г Е Р М Е С Ъ“ С. И. Едигарова
Шонцшр. фнц. № 5. 1907

(19)

30795-42

«Հարուսմների և աղքատների» Առաջին մասում մենք աշխատեցինք պարզել կապիտալիստական կարգերի ծագումը և հիմքերը: Այստեղ մենք ցոյց տվինք, թէ ինչպէս աշխատանքի հասարակական բաժանման և ապրանքային առդիւնագործութեան հողի վրայ արդիւնագործողը կտրւեց արդիւնարերութեան միջոցներից. ինչպէս ինքնուրոյն արհեստաւորները «աշխատաւոր ձեռքեր» գարձան մանուֆակտուրիստի համար, և ինչպէս հողագործները՝ աղաւնողատէրերի համար աշխատող կիսաքաղց մշակներ գտարձան. տեսանք, ինչպէս մանուֆակտուրաների մրցումը արհեստաւորների հետ և իրար մէջ ստեղծեց անհրաժեշտութիւն աշխատանքի արդիւնագործութիւնը շարունակ բարձրացնելու. վերջապէս տեսանք, ինչպէս աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը սկսեց փոխարինել աշխատանքի հասարակական բաժանումը, ինչպէս մարդկային աշխատանքը սկսեց տեղի տալ մեքենային աշխատանքին, այսինքն ինչպէս մանուֆակտուրային արդիւնագործութիւնը ֆարբիկային գարձաւ:

Մենք տեսանք, ինչպէս շնորհիւ այն հանգամանքի, որ արդիւնագործողը կտրւած է արդիւնագործութեան միջոցներից. աշխատավարձի ձեռվ նա ստանում է իր աշխատանքով ստեղծած արժէքի մի մասը, իր գոյութեան միջոցների «անհրաժեշտ արժէքը». մնացած մասը, «յաւելիալ արժէքը», մտնում է կապիտալիստի գրպանը և կազմում է նրա շահի միակ աղբիւրը: Բայց այդ ըուլորը ընդգծում է գլխաւորապէս կապիտալիզմի տնտեսական կողմը:

Սերտ և անքակտելի կապերով կապւած է նրա հետ նրա միւս կողմը—հասարակականը, սօցիալականը, այսինքն այն աղքեցութիւնը, որ կապիտալիզմը գործում է ամբողջ հասարակական կեանքի վրայ: Կապիտալիզմի այդ սօցիալական կողմի ուսումնակրութեամբ է, որ զբաղւելու հնք մենք այժմ:

12001

13731-58

I

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԷՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԱՇԽԱՏԱՀՈՐԱԿԱՆ
ՀԻՄՔԸ

Աշխատանքը եւ արժէքը: Ներկայ տնտեսական և հասարակական կարգերի ամբողջ նշանակութիւնը և ամբողջ գործողութիւնը հասկանալու համար անհրաժեշտ է հաստատապէս իւրացնել այն, թէ որտեղից է ծագում ապրանքների արժէքը, այսինքն ապրանքների այն յատկութիւնը, որի շնորհիւ նրանցից իւրաքանչիւրը որոշ չափով ընդունակ է փոխանակւելու մի ուրիշ ապրանքի կամ փողի հետ: «Հարուստների և աղքատների» առաջին մասում խօսելով ապրանքների արժէքի մասին, մենք անհրաժեշտորէն ստիպւած եինք պարզել նրան ամենահասարակ օրինակով՝ փոխանակութեան սկզբնական շրջանից վեցրած: Երկու արդիւնաբերողներ՝ ջուրհակը և կօշկակարը ցանկացան փոխանակելի, իւրանց ապրանքները: Պահ մի խորհնելուց և բանակցելուց յետոյ նրանք եկան այն եղրակացութեան, որ ապրանքները փոխանակել կարելի է միայն նրանց արդիւնաբերութեան համար անհրաժեշտ աշխատանքի քանակի համաձայն:

Մեր արդիւնաբերողներին գմւար չէր համաձայնութեան գալ: Զուրհակը գիտէր, կարելի է ասել, իր քթանի իւրաքանչիւր վերջոկը, իսկ կօշկակարը յիշում էր իր կարած կօշիկների ամեն: մի կարը: Մինչև իսկ ամեն մի կողմանակի մարդու համար լոյսի պէս պարզ է այս դէպքում արժէքի աշխատաւորական հիմքը: Սակայն քանի աշխատանքի գործարանային բաժանմանը տեղի է տալիս աշխատանքի հասարակական բաժանմումը, այնքան արդիւնաբերողի և նրա ապրանքի միջև եղած կապն աւելի ու աւելի է թուլանում և դրա շնորհիւ աշխատանքի և արժէքի կապը աւելի ու աւելի է քօղարկուում: Երբ արդիւնաբերութեան դեկա-

վարողը կապիտալիստն է, անմիջական արդիւնաբերողը (որից մնացել են այժմ միայն «աշխատաւոր ձեռքերը») ոչինչ արդէն չը գիտէլիք աշխատանքով արտադրւած ապրանքի կամ արդանքի մի մասի արժէքի մասին։ Ապրանքի տէրն ու տիրականը կապիտալիստն է։ Իր արդիւնքի արժէքի տեղ արդիւնաբերողը ստանում է աշխատավարձ, իսկ կապիտալիստը երգւում է, հաերգւում, որ աշխատաւոր ձեռքերին նա վճարում է այն բոլորը, որ նրանք իրաւունք ունին ստանալու իրանց աշխատանքի համար։ Իսկ եթէ նա ամբողջ ձեռնարկութիւնից քաւականաչափ շահ է կորցում, դրա պատճառը ոչ թէ աշխատաւոր ձեռքերն են, այլ սոսկ նրա ընդունակութիւնը և ճարպիկութիւնը։

Աշխատանքի արդիւնաբերութիւնը տասնեակ, երբեմն և հարիւրաւոր անգամներ բարձրացնող մեքենաների ներմուծմամբ իրերի գրութիւնն աւելի է բարդանում և քօղարկում։ Այստեղ արդէն կապիտալիստները իրանց արդանեակների հետ միասին ուղղակի պնդում են, որ մեքենայի վրայ աշխատելով՝ բանուրը արտադրում է արդիւնքի արժէքի միայն մի մասը։ Իսկ մնացած մասը—սա է իբր թէ կապիտալի շահը—արտադրում է մեքենան։ Իսկ մի իմաստուն տնտեսագէտ նոյն իսկ այն միտքը յայտնեց, որ մեքենան ինքն իրան էլ, առանց որ և է մարդկային աշխատանքի, կարող է արժէքներ արտադրել։ Աշխատենք մի բան ըմբռնել հասկացողութիւնների այս խառնաշխութութիւնից։

Արագրում է արդեօք մեքենան արժէքներ։ Ապրում էր չէր ապրում մի կապիտալիստ՝ զիցուք գամերի գործարանի տէր։ Բնութիւնից նա յիմար չէր և ոչ էլ չար, և նոյնիսկ, երբ գործերը լաւ էին գնում, նա չէր խուսափում խօսելու իր բանուրների հետ սօցիալական արդարութեան և այլ բարձր նիւթերի մասին։ Նա կարդում էր և գրքովներ, որոնց մէջ գրւած էր լինում արժէքի աշխատաւորական հիմունքն, աշխատավարձի, յաւելեալ արժէքի և այլ բաների մասին,—կարդում էր, բայց չէր հաւանում—նրա գործատիրական գլխի մէջ չէր կարող մտնել այն միտքը, որ բանուրները ստանում են իրանց աշխատանքի արդիւնք-ամբողջ արժէքը, այլ նրա միայն մի մասը—«անհրաժեշտ արժէքը»։ «Ի՞նչպէս թէ այլպէս—ասում է նա բանուրներին—չէ՞ որ դուք ձեր աշխատանքի համար ստանում էք նրա վաճառանոցային գինը, —այդ էլ հէնց ձեր աշխատավարձն է։

Իսկ իմ ստացած շահը գալիս է իմ կապիտալից։ Յաւելեալ արժէքն արտադրում են իմ մեքենաները և ոչ թէ դուք։

Մի օր մեր կապիտալիստը իմացաւ, որ մեքենաշինող գործարանի մէկը վաճառքի է հանել մեխեր շինելու մի նոր մեքենայ, որը ուղիղ երկու անգամ բարձրացնում է բանւորի աշխատանքի արդիւնաւէտութիւնը։ Եթէ հին մեքենայի վրայ բանւորը կարող էր, օրինակ, 3000 մեխ շինել օրական, նորի վրայ նա արդէն կարող է 6000 մեխ շինել։ Եւ կապիտալիստը, որպէս մի գործնական մարդ, սկսեց հաշիւ անել թէ որքան օգուտ կը ստանայ նա նոր մեքենան ձեռք բերելուց, և այդտեղ նոր գըլխում ծագեց մի փայլուն միտք։ Կանչեց նա իր բանւորներին և ասաց նրանց հետեւեալը։ «Ամեն տեսակ գրքոյներով գուք լցրել էք ձեր գլուխները, և շարունակ կարծում էք, որ ես ձեզ շահագործում եմ, որ ես իւրացնում եմ ձեր աշխատանքի մի մասը։ Ես կարող եմ այժմ և ուզում եմ ձեզ ապացուցել փառտերով, որ բոլոր ձառերը յաւելեալ արժէքի մասին գատարկ խօսքեր են, և որ իմ շահը ձեր աշխատանքից չէ։ Ես կը մտցնեմ նոր մեքենաներ, որոնք ձեր աշխատանքի արդիւնաւէտութիւնը կը կըրկնապատկեն։ Դուք կաշխատէք նոյնքան, որքան և այժմ, և ձեր աշխատանքն աւելի կը հեշտանայ, որովհետեւ նոր մեքենան անհամեմատ աւելի պարզ է հնից։ Սակայն ես ձեզ կը վճարեմ ոչ աշխատավարձ, այլ կը տամ ձեզ արդիւնքից ճիշտ նոյնքան, որքան այժմ էք դուք արտադրում։ Զեղանից իւրաքանչիւրը հին մեքենայի վրայ օրական 3000 շինած մեխ է շինում։ Նոր մեքենայի վրայ օրական 6000 շինած մեխերից նա կը ստանայ 3000. բայց ինքնլսստինքեան պարզ է, որ ես ստիպւած կը լինիմ դուրս գալ նիւթի և մեքենաների մաշւածքի գինը։ Այսպիսով դուք կը ստանաք լիովն ձեր արդիւնքը, որ դուք այժմ արտադրում էք հին մեքենայի վրայ։ Միենոյն ժամանակ ես էլ մնա չեմ անի։ Ես օրական իւրաքանչիւր հոգուց կը ստանամ 3000 մեխ, ինչպէս և առաջ, սակայն աշխատավարձ ես ստիպւած չեմ լինիլ վճարիլ ձեզ, որովհետեւ այդ մեխերը ձեր աշխատանքը չէ, որ տալիս է ինձ, այլ կատարելագործւած մեքենան։ Ակսենք, եղբայրներ, աշխատանքը նոր հիմունքների վրայ և ապացուցենք գործով, որ ոչ-մի հիմական հակամարտութիւն, ոչ մի հիմնական թշնամութիւն աշխատանքի և կապիտալի միջն չը կայ և չի էլ կարող

ինել, որովհետև աշխատանքը և կապիտալը սերտ միացած գործում են ընդհանուր օգտի համար»:

Վերջացրեց կապիտալիստը իր ճառը այնպէս ոգևորւած, որ բանւորներն էլ զգացւեցին: Եւ առանց պատճառի չէր արդէ գործն այնքան պարզ էր, և ինքը կապիտալիստը այնքան էր վայելում ընդհանուրի վստահութիւնը, որ բանւորները չը վարանեցին ընդունել նրա առաջարկութիւնը:

Սկսեցին աշխատել նոր հիմունքներով, և խաղաղութիւնն ու միասնութիւնը թագաւորեցին մեր մեխի գործարանում: Բոլորն էլ երջանիկ են և գոհ, որովհետև և գառներն (աշխատաւոր ձեռքերն) ողջ են և գայլը՝ (կապիտալիստը) կուշտ: Գործատէրը բարեհոգործեամբ հեգնում է յաւելեալ արժէքը, իսկ բանւորները միայն շշելած ժամանում են, որովհետև դուրս էր գալիս, որ իրը թէ իրօք յաւելեալ արժէքը սկսել էր կաղալ երկու ոտքից էլ:

Պատրաստեցին մեխերի մի դէղ և ուղարկեցին շուկայ, — բանւորները՝ իրանց մասը, իսկ կապիտալիստը՝ իր մասը: Բանւորները յոյս ունիէն առաջին անգամն ամբողջովին ստանալ իրանց աշխատանքով արտադրւած արժէքը, իսկ կապիտալիստը մեծ հաճոյքով հաշւում էր կրկնակի շահը, որ նա պիտի ստանալ նոր հիմունքների վրայ դրւած գործից:

Բայց այստեղ պատահեց մի փոքրիկ դժուախտութիւն: Կօմմիսարիներները տեղեկացնում են, որ մեխի գները արտադրով ընկնում են շնորհիւ ապրանքի աւելացած առաջարկի շուկայում: Պարզւեց, որ նոր մեքենայից օգտւել է ոչ միայն նորութիւնների սիրահար մեր կապիտալիստը, այլ և միւս ֆաբրիկաները, որոնք բարեգործութիւններով չեին զբաղւել, այլ զճարել էին բանւորներին ուղղակի աշխատավարձ և սոտցել էին իրանց շահը սովորական ձևով. Շնորհիւ դրան առաջւանից երկու անդամ աւելի մեխ էր արտադրւած. առաջարկը աւելացաւ, պիտի տեղի ունենար մրցում վաճառողների միջն, և ապրանքի վաճառանոցային գինը պիտի ընկնէր (1 մաս, գլուխ IV), ի հարկէ, առաջի զիջողները բանւորները պիտի լինէին, որովհետև սև օրւայ համար շատ քիչ էին հոգացել: Նկատելով, որ գործերը վատ են, նրանք այլևս յոյս չունէին ստանալու իրտնց առդինքի ամբողջ արժէքը և վերջ ի վերջոյ ուրախ էին, որ ստանում էին նրա

համար այնքան, որքան առաջ ստանում էին աշխատավարձի միջոցով: Դրանից ցածր, ինչպէս մենք գիտենք (գլուխ VII), մեխի գինը չէր կարող երկար մնալ: Այսպիսով նոր հիմունքների վրայ գրւած գործը, կապիտալի և աշխատանքի միութիւնը, հասցրեց բանւորներին այն դրութեան, որ նրանք իրանց արտադրած արդիւնքի ամբողջ արժէքի վոխարէն ստացան միայն «անհրաժեշտ արժէքը»—աշխատավարձը—այն էլ դժւարութեամբ:

Սակայն և մեր բարեհոգի կապիտալիստի՝ կրկնակի շահ ստանալու յոյն էլ չքացաւ երազի մնան: Մեխերը նախկին գընով ծախւելու մասին մտածել անգամ նա չէր կարող: Մրցումը ստիպեց նրան, ինչպէս և մեխի միւս ֆաբրիկաներներին, բաւականանալ նախկին շահով: Այսպիսով դուրս եկաւ, որ աշխատանքի արդինաւէտութիւնը կրկնապատկոյ նոր մեքենայի ներմուծումը չըփոխեց էապէս ոչ բանւորների, ոչ էլ կապիտալիստի դրութիւնը,—բանւորները արդիւնքի ընդհանուր արժէքից կարող էին ստանալ միայն նախկին միջակ աշխատավարձը, իսկ կապիտալիստը միայն նախկին միջակ շահը: Արդինքի ընդհանուր արժէքը մնաց նոյնը: Այդ ինչ է նշանակում: Այդ հարցին պատասխանելու համար պէտք է սկսել մի քիչ հեռւէց և մի քանի ընդհանուր նկատողութիւններ անել այն բանի մասին, թէ ինչպէս պէտք է ուսումնասիրել և հասկանալ հասարակական երկոյթները:

Ամբողջի եւ մասի կապը: Երբ մեխանիկին հարկաւոր է ուսումնասիրել որ և է նոր, իրան անյայտ մեքենայի ուժը, նա ամենից առաջ ձգտում է հասկանալ նրա իւրաքանչիւր մասի աշխատանքը առանձին-առանձին: Եթէ, օրինակ, շոգեմեքենայ է այդ, նա տեսնում է, որ շոգին կաթսայից մտնում է գլանի մէջ և հրում մխոցի ծայրը, որ կարող է յետ ու առաջ գնալ գլանը մէջ: Մխոցը լծակի կամ սնիւի միջոցով շարժում է մետաղեայ գլանակը, որի վրայ ամրացրւած է ատամնա: Որ անիւը: Այդ ատամնաւոր անիւն միջոցով շարժումը գլանակի վրայով անցնում է միւս ատամնաւոր անիւն, որը իր կողմից շարժում է այս կամ այն լծակը, և այսպէս մինչեւ մեքենայի վերջին մասը, որը և կատարում է մեքենայի կոչումը—յետ ու առաջ է մղում կկոցը (բարաբը) ջուհակի գազգեահի վրայ, իջեցնում և բարձրացնում է վիթխարի մուրճը կամ յետ ու առաջ է քաշում պողպատէ «ուանդան» մետաղէ տախտակի վրայով: Ինքն ըստ ինքեան պարզ

է, որ մեխանիկը կարող է կատարելապէս հասկանալ և հաշուել մեքենայի ոյժը միայն այն ժամանակ, եթե ճշտութեամբ գիտէ նրա բոլոր մասերի գործողութիւնը նրանց փոխադարձ կապակցութեամբ: Եւ ընդհակառակը, մեքենայի որ և է մասի գործողութիւնը և նշանակութիւնը հասկանալ կարելի է միայն այն ժամանակ, եթե ինկատի է առնւում ամբողջ մեքենայի աշխատանքը: Մեխանիկը տեսնում է, որ մի որ և է ատամնաւոր անիւ շաղկապում է մի ուրիշ հետ, իսկ այդ շարժում է մխոցի ձողը, որը պտոյտ է գալիս մեծ արագութեամբ: Նա առանց զժւարութեան տեսնում է, ինչպէս ատամնաւոր անիւը պտոյտ է բերում մխոցի ձողը, իսկ ինչու է նա այդ անում, մեխանիկը հասկանում է միայն այն ժամանակ, եթե կիմանայ այդ շարժման կապը ամբողջ մեքենայի աշխատանքի հետ:

Վերցնենք մի այլ օրինակ: Կենդանու մարմինը, կենդանու օրգանիզմը բազկացած է մասերից կամ օրգաններից, որոնցից իւրաքանչիւը կատարում է մի նրան միայն յատուկ աշխատանք: Ալտեր գոխադրում են կենդանուն այստեղ, որտեղ նրա համար կերակուր կայ: Ծնոտները ծամում են կերակուրը, ստամոքսը մարսում է նրան և դարձնում է սննդարար նիւթերը ջրալիք: Ստամոքսից սննդարար նիւթերը անցնում են աղիքները, ծծում են աղիքների պատերից ներս և ընկնում արեան մէջ: Իսկ սիրտը քշում է արիւնը և ստիպում սննդարար նիւթերը հասցնել մարմինի բոլոր մասերը: Հասկանալու համար, թէ ինչպէս է ապրում օրգանիզմը, պէտք է գիտենալ, թէ ինչպէս է գործում մարմինի օրգաններից իւրաքանչիւը: Եթէ, օրինակ, մենք չը գիտենք սրտի գոյութեան և աշխատանքի մասին, այդ գէպըում մեզ անհասկանալի կը մնայ և ամբողջ օրգանիզմի աշխատանքը: Եւ հակառակը, եթէ մենք ուզում ենք իմանալ, թէ ինչ նշանակութիւն ունի սրտի աշխատանքը, այդ գէպըում մենք պէտք է ուսումնասիրենք նրան ամբողջ օրգանիզմի աշխատանքը: Մի խօսքով, որ և է բարդ առարկայի կամ բարդ երկոյթի ուսումնասիրութիւն գալիս ենք հետեւալ եղրակացութեան:

Չի կարելի գիտենալ ամբողջը, եթե չը գիտես նրա մասերն առանձին: Եւ հակառակը, որ եւ է մասի նշանակութիւնը կարելի է հաս-

կանալ միայն այն գէպում, եթե ուսումնափրում ես նրան ամբողջի հետ կապելով:

Այս հասարակ ճշմարտութիւնը պէտք է գործադրել հասարական կեանքի ուսումնասիրութեան վերաբերմամբ ճիշտ այնպէս, ինչպէս նրան գործադրում են մեքենայի կամ կենդանու օրգանիզմի նկատմամբ: Հասարակական կեանքի, որ երեսյթն էլ վերցնենք, նա միշտ կու լինի ամբողջ հասարակական կեանքի միայն մի մասը: Եթե մենք գիտում ենք ապրանքների արտադրութիւնը հասարակութեան մէջ, որ հիմնած է աշխատակցութեան և աշխատանքի բաժանման վրայ, մենք չենք կարող չը տեսնել, որ իւրաքանչիւր առանձին ապրանք կը առնում է ամբողջ հասարակութեան գործունէութեան մի մասնիկը:

Ապրանքը, որպէս հասարակական արդիւնք, Դառնանք թէկուզ մեխերի արտադրութեանը: Մի կարևոր բան չէ մեխը, իսկ նայեցէք, թէ որքան բազմատեսակ աշխատանք կայ նրա մէջ: Մեխը շինուում է երկաթից, իսկ երկաթը ձեռք է բերում հանքից: Եւ ահա, ուրեմն, մեխը պարունակում է իր մէջ մի մասն այն հանքահանի աշխատանքի, որ հանեց հանքը գետնի տակից: այն մշակի, որ փոխադրեց հանքը գործարան հալելու համար, այն վարպետի, որ կանգնած է հալոցային վառարանի առաջ. այն բանտորի, որ կանգնած է գլանելու մեքենայի առաջ. երկաթուղային բանտորների, որոնք երկաթը փոխադրեցին այնտեղ, որտեղ գտնուում է մեխի գործարանը: Բայց այդ ի հարկէ, բոլորը չէ գեռ ևս: Հանքահանը հանում է հանքը ոչ մերկ ձեռքով, այլ նա ունի գործիքներ: Հանքահորի մէջ նրան իջեցնում են մեքենայի օգնութեամբ, ջուռո հանքահորի միջից դուրս է քաշում մեքենան, —մի խօսքով հանքը հանելու և նրան երկաթ դարձնելու համար հառկառը են մի շարք միջոցներ, որոնք ներկայացնում են նախընթաց աշխատանքի արդիւնքը և որոնց արժէքը, ընկնում է (ինչքան որ դուքս գայ) երկաթի վրայ, որից մեխեր են շինում: Բացի այդ, հանքի և երկաթի վրայ աշխատողները իրանք ոչ հաց են թիւում, ոչ կօշիկ կարում ոչ էլ քթան պատրաստում: Աշխատանքի տիրող բաժանման շնորհիւ նրանք ստանում են իրանց գոյութեան համար անհրաժեշտ բաները ուրիշ աշխատաւորներից: Ուստի և այդ բոլոր աշխատաւորների աշխատանքն այն չափով: ինչ չափով նրանք միասին մատակարարում էին

գոյութեան միջոցներ հանքահանսերին և գործարանային բանւորաներին, նոյնպէս մտնում է երկաթի արտադրութեան մէջ: Նոյնը տեղի է ունենում և այդ երկաթից շինած մեխերի արտադրութեան վերաբերմամբ: Արտադրութեան համար հարկաւոր են շինութիւններ, վառարաններ, մեքենաններ, պահստատեղ և այլն: Արդիւնաբերութեան այդ միջոցները ստեղծող բոլոր մարդկանց աշխատանքը մտնում է մեխի մէջ «նիւթականացած» աշխատանքի մէջ: Այսուհետև գալիս է մեխ շինող րանորի աշխատանքը, և աշխատանքը այն բոլոր արդիւնաբերողների, որոնք կերակրել և պահել են այդ բանւորին այն ժամանակ, երբ նա զբաղւած էր իր անհետաքրքիր գործով: Մի խօսքով, մեխը գործարանային կարգով շինելու համար հարկաւոր է աշխատակցութիւնը՝ ուղղակի կամ անուղղակի՝ հասարակութեան համարեա բոլոր արդիւնաբերողական ոյժերի: Շնորհիւ աշխատանքի բաժանման՝ հասարակութեան մէջ մեխը, ինչպէս և իւրաքանչիւր այլ ապրանք, արտադրում է ոչ անհատական աշխատանքով, այլ հասարական: Նա հասարակական աշխատանքի արդիւնք է:

Մինչև այժմ մենք քննում էինք արդիւնաբերութեան միայն նիւթական կողմը, այսինքն հասարակական աշխատանքի որոշ քանակի ուղղակի մարմացումը ապրանքի մէջ: Այժմ հետեւնք թէ ինչպէս հասարակութեան հոգեոր, այսինքն մտաւոր և բարոյական կեանքը ազգում է ապրանքների արտադրութեան վրայ: Որքան աւելի բարձր է կրթութիւնը հասարակութեան մէջ, որքան աւելի շատ են նրանք կրթւած տեխնիկներ և ինժենեններ, որքան աւելի ճարպիկ են բանւորները, այնքան աւելի արդիւնական է նրանց աշխատանքը: Արտադրութեան ամենածանր և ամենակոպիտ մասը կատարում են մեքենաները, պահանջելով շատ աւելի քիչ մարդկային աշխատանք, քան արդիւնաբերութեան նախնական շրջաններում: Ուստի և նոյն ժամանակի ընթացքում (օր կամ ժամ) մարդկային աշխատանքը արտադրում է օգտակար առարկաների ապրանքների աւելի մեծ քանակ: Այս բոլորը ինքնըստինքեան հասկանալի է և երկար խօսել դրա մասին չարժէ: Հասարակութեան ոչ միայն մոռաւոր, այլ և բարոյական մակերեսոյթը խորապէս ազգում է արդիւնաբերութեան վրայ: Խօսքը նրա մասին չէ, թէ մի որեէ աստւածավախ կապիտալիստ իր գործը «աստւածահաճոյ» կերպով կը տանի, իսկ

մի ուրիշը—աւելի վատը բանւորներից երկու կաշի կը քեռթէ: Ինչպէս մենք մի քիչ առաջ տեսանք, կապիտալիստի բարի կամքը շատ քիչ բան կարող է անել, որովհետև ինքը կապիտալիստը մի ստրուկ է ընդհանուր արդիւնաբերողական գրութեան: Բայց բանւորական մասսայի բարոյական մակերեսոյթը հէնց այն պատճառով, որ նա մասսա է, որ նրա անունը լեգիօն է, անկասկած ազգում է արդիւնաբերութեան ընթացքի վրայ: Որքան աւելի զարգացած է բանւորների մէջ համերաշխութեան զգացմունքը, որքան աւելի եռանդուն կերպով են նրանք պաշտպանում իրար, այնքան աւելի լաւ է նրանց դրութիւնն ոչ միայն նիւթական, այլ և բարոյական տեսակէտից: Անյոզդողդ կերպով տարւած գործագուլի միջոցով բանւորները յաջողեցնում են բարձրացնել աշխատավարձո, զրծատել բանւորական օրը կամ հեռացնել այն վարպետին կամ ինժեներին, որ իր կոպիտ վարմունքով վիրաւորեց նրանց մարդկային արժանապատւութիւնը:

Բանւորական օրւայ կրծատման կամ աշխատավարձի բարձրացման դէմ կապիտալիստը կուռում է ոչ միայն այն պատճառով, որ նա ազան է գլուխ շահը: Յաճախ պատահում է, որ արդիւնաբերութեան պայմանների շնորհիւ նա չի կարող բաւարարութիւն տալ բանւորների պահանջներին, այլապէս նա ինքը կրնկնի դժւար կացութեան մէջ համեմատած միւս կապիտալիստների հետ, որոնց բանւորները յուղնի են էշի խոնարհութեամբ և համբերութեամբ: Եթէ նա այնուամենայնիւ ստիպւած է լինում զիջել, այդ ստիպում է նրան նոր ճանապարհներ լինուել, կատարելազործել կամ փոփոխել արդիւնաբերութիւնը: Նոյնը կարելի է ասել և կոպիտ ինժեների մասին: Երբեմն այդպիսի ինժեների յետեւում կապիտալիստը զգում է իրան որպէս քարէ պատի յետեւում,—այնքան նա լաւ զիտէ իր գործը: Բայց ահա նա ստիպւած է բաժանել նրանից, որովհետև այդ պարոնը իր կոպիտ վերաբերմունքով վիրաւորում էր բանւորների մարդկային արժանապատւութիւնը: Մինչև որ կապիտալիստը մի նոր ինժեներ գտնի, արդիւնաբերութիւնը կը կաղի մի քիչ: Միւս կողմից բանւորական մասսայի բարոյական մակերեսոյթը կախւած է ամբողջ հասարակութեան բարոյական մակարդակից: Որքան աւելի շատ են հասարակութեան մէջ լաւ մարդիկ, որոնք իմանալով թէ որտեղ է արդարութիւնը և անարդարութիւնը

մարդկային գործերի, իրանց գիտութիւնը տաճում են դէպի աշխատաւոր մասսան, կրթում և լուսաւորում են նրան,—այնքան աւելի գիտակից է դառնում մասսան, այնքան աւելի բարձրանում է նրա բարոյական և մտաւոր մակարդակը։ Իսկ թէ ինչ հետևանքների է հասցնում գիտակցականութեան զարթնումը մասսաների մէջ, բաւական պարզ կերպով այդ ապացուցեց ուսական կեանքը վերջին տարիների ընթացքում։

Այսպիսով վերոյիշեալից երեւում է, որ նոյնիսկ առանձին ապահովի արտադրութիւնը հազարումի թելերով կապւած է հասարակական կեանքի այլ արտայայտութիւնների հետ։ Իսկ արդիւնաբերութիւնու ամբողջութեամբ վերցրած՝ ամբողջ հասարակութեան կենսական գործ է կամ գիտնական լեզով ասած՝ նրա օրդանական ֆունկցիան է։ Ուստի իւրաքանչիւր արդիւնաբերած ապրանքներկայանում է որպէս հասարակական արդիւնքի մի մասը։ Նրան արտադրել է ոչ անհատական աշխատանքը այս կամ այն արդիւնաբերողի, այլ միահամուռ գործակցութիւնը հասարակութեան բոլոր արդիւնաբերող ոյժերի։ Ամեն մի ապրանքի մէջ պարունակում են, նվազականանում են ամենաբազմատեսակ աշխատանքի մասնիկները։ Այդ աշխատանքի ամբողջ գումարը ուղղված է մի նպատակի—ապրանքի արտադրութեան։ Բայց երբ ապրանքը արդիւնաբերած է, նրա արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանքի բոլոր առանձին տեսակները կորչում են նրա մէջ և փոխարինում մի տեսակով—հասարակական աշխատանքով։ Պատրաստի մեխի մէջ դուք չէք կարող զանազանել, թէ որտեղ է հանքագործի աշխատանքը, որ երկաթէ հանքը հանեց գետնի տակից, որտեղ է մեխանիկի աշխատանքը, որ կանգնած էր բարձրացնող մեքենայի առաջ, որտեղ է բանւորի աշխատանքը, որ երկաթից թեւեր էր շինում և այն։ Պատրաստի մեխի մէջ դուք տեսնում էք միայն որոշ քանակութիւն միջին մարդկային աշխատանքի, այն էլ ոչ անհատական, այլ հասարակական աշխատանքի։ Այսպիսով ապրանքի արժեքը որոշում է նրա արտադրութեան համար անհրաժեշտ միջին հասարակական աշխատանքի քանակով։

Այժմ մեզ համար հասկանալի է, թէ ինչու աշխատանքի արդիւնաւէտութիւնը կրկնապատկող նոր մեքենայի ներմուծումը չը փոխեց ոչ բանւորների, ոչ էլ կապիտալիստի դրութիւնը։ Ինչու բանւորների աշխատանքով արդիւնաբերած ապրանք-

ների ընդհանուր արժէքը մնաց նոյնը—ինչ որ էր հին մեքենայի ժամանակ։ Մեխերի արժէքը որոշում է նրանց արտադրութեան համար անհրաժեշտ միջին հասարակական աշխատանքի քանակով։ Հին մեքենայի ժամանակ, որը օրական մարդու վրայ տալիս էր 3000-ական մեխ, միջին հասարակական-բանւորական ոյժի ուռայ աշխատանքը տարածւում էր 3000 մեխի վրայ, երբ նոր մեքենան կրկնապատկեց աշխատանքի արդիւնաւէտութիւնը, միջին հասարակական բանւորական ոյժի նոյն օրական աշխատանքը սկսեց տարածւել 6000 մեխի վրայ, երկու անգամ աւելի մեխ արտադրեց, բայց դրա փոխարէն իւրաքանչիւր մեխի արժէքը առանձին վերցրած պակասեց երկու անգամ, այդ պատճառով էլ օրական արդիւնքի բնդկանուր արժէքը մնաց անփոփոխ։

Սրանից պէտք է հետեւցնել, որ մեքենան չի ստեղծում արժէքների և որ միայն մարդկային աշխատանքը, այն էլ միջին հասարակական աշխատանքն է կազմում ապրանքների արժէքի հիմքը։

Դժւար չէ նկատել, որ իրերի գրութիւնը ընաւ չէր փոխվի, եթէ ֆարբիկանաները, իրանց գործարաններում նոր մեքենաներ մացնելով, բանւորների թիւը կրկնակի կրծատէին։ Աշխատանքի կրկնապատկւած արդիւնաւէտութեան շնորհիւ արտադրող մեխերի քանակը կրմնար նոյնը, ինչ որ էր առաջ։ Այդ պատճառով մեխերի գինը չէր ընկնի իսկոյն եթ, և նրանք կրծախւէին իրանց իսկական արժէքից թանկ։ Բայց այդ գէպքում մեխի ֆարբիկանաները կըստանային այնպիսի բարձր շահ, որ կոստիպէր և ուրիշ կապիտալիստներին ձեռք զարնել նոյն գործին, և մըցումը չէր յապարի իջեցնել այդ ձեռնարկողների շահը մինչեւ նախկին միջին մակերեսոյթը։

Արժէքը մնավաճառ արդիւնաբերութեան ժամանակ։ Սակայն ինչ կըլինէր, եթէ մեխի որ և է ֆարբիկանտ հնարէր կամ ձեռք բերէր աշխատանքի արդիւնաւէտութիւնը կրկնապատկող մի մեքենայ և իր արդիւնաբերութիւնը պահէր, որպէս գաղտնիք։ Զէ որ այդ գէպքում նա իր ապրանքը կրծախւէր նրա իսկական արժէքից բարձր։ Անկասկած։ Մեխի ուրիշ ֆարբիկանաների հետ համեմատած՝ ճակատագրից բառերարւած այդ կապիտալիստը կըստանար յաւելեալ շահ, որին եթէ ուզենար՝ նա կարող էր նոյնիսկ մասնակից անել և իր բանւորներին։ Եւ այդ բնաւ չէր հակասի արժէքի աշխատաւրական հիմքին, որովհետեւ կապիտա-

լիստը մենավաճառութեան տէր կըլինէր: Մենավաճառութիւնը մըր-
ցումով չը շահմանափակող և իր գրութեան յարմարութիւններից,
առաւելութիւններից օգտակար հարաւորութիւնն է: Իսկ թէ ի՞նչ
հետեանքների է հասցնում մենավաճառութիւնը արդիւնաբերու-
թեան մէջ, դուա մասին կըխօսենք այժմ:

Կապիտալիզմի գիտնական և կիսագիտնական արբանեակները
շատ յաւ գիտակցում են, որ արժէքի աշխատաւորական հիմունքը
պայծառ լրյունի լուսաւորում է ներկայ կապիտալիստական կար-
գերի ամբողջ քօղարկւած կազմւածքը: Իսկ որովհետև այդպիսի
պայծառ լուսաւորութիւնը պ. պ. կապիտալիստաների համար այն-
քան էլ ցանկալի չէր, ուստի նրանց փաստաբանները ոյժերը նե-
րածին չափ աշխատում են մթնացնել գործը: Արժէքի աշխատա-
ւորական հիմունքի դէմ նրանք բերում են ի միջի այլոց այսպի-
սի առարկութիւնն: «Դուք պիզում էք», ասում են նրանք սօցիա-
լիստներին, «որ ապրանքի արժէքը չափում է նրա արտադրու-
թեան համար անհրաժեշտ աշխատանքի քանակով: Բայց ահա ձեզ
մի օրինակ, —երկու հողագործներ աշխատում են միատեսակ գոր-
ծիքներով, մեծութեամբ միատեսակ հողաբաժինների վրայ և մի-
ևնոյն ժամանակի լնթացքում: Երկուսն էլ ցորեն ցանեցին: Բայց
մէկինը սեահող է, իսկ միւսինը շատ վատ վարելանող: Երբ հասաւ
ժամանակը բերքը հաւաքելու, առաջինը գեսեատինից ստացաւ 150
պուդ ցորեն, իսկ երկրորդը միայն 50: Չեր կարծիքով դուրս է գալիս,
որ վատ հողից ստացած ցորենը պէտք է աւելի թանկ ծախւի, քան
լաւ հողիցը: Մինչդեռ շուկայում ցորենի գինը նոյնն է: Ուր մնաց ար-
ժէքի աշխատաւորական հիմունքը: Քննենք այս օրինակը: Անկաս-
կած պտղաբեր հողից հաւաքած մի պուդ ցորենի արժէքը պէտք է
աւելի ցածր լինի, քան վատ հողից ստացւած ցորենի արժէքը:
Եւ եթէ երկու ցորեններն էլ ծախւում են շուկայում մինչոյն
գնով, դա նշանակում է, որ նրանցից որ և մէկը ծախւում է
ոչ իր իսկական արժէքի համաձայն, այսինքն կամ վատ հողի ցո-
րենը ծախւում է իր արժէքից ցածր, կամ պտղաբեր հողի ցորենը
ծախւում է իր իսկական արժէքից բարձր: Դժւար չէ նկատել, որ
վատ հողի ցորենն իր իսկական արժէքից ցածր չի կարող ծախւել, ո-
րովհետև ոչ ոք չի համաձայնի շարունակ նշանատել ի վաս իրան,
երբ նա կարող է որ եւ է այլ անպարէզզութ իր աշխատանքի լիա-
կատար արժէքը ստանալ: Ուրեմն ցորենի արժէքը շուկայում

որոշում է նրա աշխատադրութեան համար անհրաժեշտ աշխատան-
քի քանակով մշակող հողերից ամենափատի վրայ: Այլապէս, կրկնում
եմ, ստորին որակի հողերո չէին կարող մշակուել: Բայց որովհե-
տեւ պտղաբեր հողի ցորենը ծախւում է նոյն գնով, ինչոր միւ-
սինը, —սրանից կարելի է հետեցնել, որ սեահողի տէրը իր ցո-
րենը ծախւում է վերջինիս իսկական արժէքից բարձր: Խօժ երկն-
քից չընկաւ այդ բարիքը: Եթէ վատ հողաբաժնի տէրը ուզէր իր
ցորենը նրա իսկական արժէքից բարձր ծախւել, —նրան այդ չէր
յաջողւի: Նախառաջ նա պիտի բնդիարւէր այն արդիւնաբե-
րովների մրցման հետ, որոնք մշակում են նոյն որակի հողաբա-
ժիններ, ինչ որ ինքը, երկորսդ, շնորհիւ ցորենի բարձրացած
գնին, մշակման կենթարկւէին վատ տեսակի հողերը և մեր շա-
համոլ արդիւնաբերողը ստիպւած պիտի լինէր գիմանալ մրցման
և այդ կողմից: Իսկ մենք արդէն գիտենք (I մաս, IV գլուխ), որ
մրցումը մօտեցնում է ապոանքների վաճառանոցային գինը նը-
րանց իսկական արժէքին: Բոլորովին այլ է սեահողի տիրոջ դրու-
թիւնը, —նա կարող է իր ցորենը ծախւել նրա իսկական արժէքից
բարձր, որովհետև պտղաբեր հողերը աւելի քիչ են, քան հարկա-
ւոր է, և մրցումը նրանց մէջ չի կարող ցորենի վաճառանոցային
գինը իջեցնել մինչեւ այդ արդիւնքի իսկական արժէքը. Իսկ որով-
հետև նա կարող է, ուստի նա այդպէս էլ անում է, որովհետև ար-
դիւնաբերող մարդը այդպէս է ստեղծւած, որ այնտեղ, որտեղ
հնարաւոր է, շահը ձեռից չի կարող բաց թողնել: Սկառողերի
տէրերը հաճութեամբ կըբարձրացնէին ցորենի գինը նրա արդիւ-
նաբերութեան արժէքից վեր վատ հողաբաժինների վրայ, բայց
ալդ նրանց չի յաջողում նոյն պատճառով, ինչ պատճառով որ
իրանք, վատ հողաբաժինների տէրերը չեն կարող այդ անել: Այս-
պիսով մենք տեսնում ենք, որ պտղաբեր հողի տիրոջ շահը ծա-
գում է նրանից, որ նա ապահովւած է ցորենի գնի ընկնելու
վաճանգից մինչեւ նրա իսկական արժէքը, շնորհիւ այն հանգաման-
քին, որ պարարտ հող շատ աւելի քիչ կայ, քան հարկաւոր է
ցորենի պահանջին բաւարարութիւն տալու համար: Նա ար-
դիւնաբերողական տեսակէտից գտնում է նոյն զրութեան
մէջ, ինչ զրութեան մէջ մենք տեսանք մեխի երկակայական
մէջ, ինչ զրութեան մէջ մեխի երկակայական գիւղի կանոնական
գաղաքարիկանտին, որի միամաս գործուոց է նոր և շահաւէտ գիւ-
ղաքարիկանտին, որի միամաս գործուոց է նոր և շահաւէտ գիւ-

37731-88

30408

նառ զներով շնորհիւ արդիւնաբերութեան՝ նոռանց համար բացառապէս նպաստաւոր, իսկ ուրիշներին անմատչելի պայմաններին։ Բայց և մենավաճառ գները չեն կարող բարձրանալ որոշ ապրանքի իսկական գնից վեր, որ համապատասխանում է արդիւնաբերութեան միջին (և ոչ բացափկի) պայմաններին։ Պատգարեր հողի տէու չի կարող իր ցորենը ծախել աւելի թանկ, քան միջին հողաբաժնի տէրը, ճիշտ այնպէս, ինչպէս արդիւնաբերութեան նոր և շահաւետ գիւտի գաղտնիքի տէր ֆաբրիկանալը չի կարող իր ապրանքը ծախել աւելի թանկ գնով, քան ֆաբրիկանաները, որոնք շահագործում են բոլորին մատչելի ձևով։ Այսպիսով, եթէ ի նկատի առնենք ոչ առանձին արդիւնաբերողին և ոչ առանձին ապրանքը, այլ որոշ ճիւղի ամբողջ արդիւնաբերութիւնը (ոչ բախտաւոր-գործարանատիրոջ գաղտնիքի միջոցով արտադրւած մեխերը, այլ ընդհանրապէս բոլոր գործարանատէրերի արդիւնաբերած մեխերը), գուրս է գալիս, որ կապիտալիստական կարգերում ապրանքների արժեքը որոշում է նրանց արդիւնաբերութեան համար անհրաժեշտ միջին հասարակական աշխատանքով։ Միայն այս է առում արժեքը աշխատաւորանան թէօրիան։ Նա պարզաբանում է, թէ որն է աղբիւրը ապրանքների արժեքի արդիւնաբերութեան այն ձևի ժամանակ, որ թագաւորում է այժմ կապիտալիստական երկիրներում։ Բայց նա բնաւ նպատակ չունի տալու մի ընդհանուր չափ, որով հնարաւոր լինի որոշել արժեքը այն բոլոր բաների, որոնք կարող են ծախսել և գնել։ Ոսովհետեւ, եթէ ապրանքային արդիւնաբերութիւնից գէթ մի քիչ հեռու գնանք, այդ գէպքում գնուող և ծախսող իրերի արժեքը յաճախ կորցնում է իսպառ իր տնտեսական իմաստը։ Օրինակ դժւար չէ բերել Յայտնի է, որ վերջին 20—30 տարիների ընթացքում վիթխարի չափերի է հասել հին մարկաներ հաւաքելու սովորութիւնը։ Օրինակ մի որեւ է տձեւ, բայց հաջուագիւտ մարկայի համար բիրժայում (կայ առանձին ոիրժա այդ «ապրանքի» համար) վճարում են չը տեսնւած փողեր—հաղարաւոր ուրիշներ։ Հարց է առաջ գալիս, թէ ինչո՞վ է որոշում հին մարկաների արժեքը։ Այդ հարցին կարելի է պատասխանել մի ուրիշ հասցով։ Ինչո՞վ է որոշում և որքան մեծ է ցանկութիւնը անմիտ կերպով շուալելու փողերը այն մարդկանց մօտ, որոնց համար «արժեքները» ձեռք են բերում առանց

որևէ աշխատանքի։ Իւրաքանչիւրի համար պարզ է, որ այդ հարցի լուծման համար անհրաժեշտ է դիմել հոգեկան հիւանդների բժշկին և ոչ տնտեսագէտին։ Որովհետև արդիւնաբերութեան հետ հին մարկաների արժեքը ոչ մի առնչութիւն չունի։ Այն, ինչ որ մենք ասացինք պօստային մարկաների մասին, կարելի է կիրառել աւելի կամ պակաս չափով մի շաբթ այլ «ապրանքների» վերաբերմամբ, որոնք, չը լինելով ապրանքային արդիւնաբերութեան առարկայ, ունին սակայն վաճառանոցային գին։

Այս գլխում մեր ասածից կարելի էր հզորակացնել հետեւալը։

Արդիւնաբերութեան կապիտալիստական կարգերում հասարակական աշխատանքն է միակ աղբիւրը ապրանքների արժեքի։

Ապրանքների արժեքը որոշում է նրանց արդիւնաբերութեան համար անհրաժեշտ միջին հասարակական աշխատանքի քանակով։

II

Ա. Բ. Ժ. Է. Բ. Ի. Բ. Ա. Շ. Խ. Ո. Ի. Մ. Հ.

Մենք աեսանք թէ ինչպէս և ում միջոցով են ստեղծւում արդիւնաբերութեան առարկայ կազմող արժեքները ժամանակակից հասարակութեան մէջ։ Այժմ նայենք, թէ ինչ հափով և ում ձեռքն են ընկուում, ի՞նչպէս են բաշխում ստեղծւած արժեքները հասարակութեան մէջ։

Որովհետև բաշխումը սերտ կերպով կապւած է արդիւնաբերութեան հետ, ուստի արդիւնաբերութիւնն ուսումնասիրելու ժամանակ մենք արդէն քիչ-շատ ծանօթանանք և բաշխման հետ։ Մենք իմացանք, որ իր աշխատանքով արդիւնաբերւած արժեքներից բանուրը ստանում է անհրաժեշտ արժեքը, ճիշտ այնքան, որքան հարկաւոր է նրան՝ իրան և իր ընտանիքը պահելու համար։ Անացածը, յաւելեալ արժեքը մտնում է կապիտալիստի գրպանը։ Բայց բաշխման էութիւնը ըմբռնելու, պարզելու համար այն ազգեցութիւնը, որ նա գործում է հասարակութեան ամբողջ կազմի վրայ, — մենք նոյնպէս ստիպւած ենք ուսումնասիրել արժեքների բաշխումը արդիւնաբերութեան ոչ այս կամ այն ճիւղում, այլ հասարակութեան մէջ՝ վերցրած ամբողջութեամբ։ Արդիւնաբերութիւնն ամբողջ հասարակութեան կենսական գործն է,

օրգանական ֆունկցիան: Ուստի և բաշխումը, որը սերտ կերպով կապւած է արդիւնաբերութեան հետ, պէտք է քննել ամրող հասարակութեան մէջ: Եթէ մենք կանգնենք այդ տեսակէտի վրայ, կը տեսնենք, որ աշխատանքով արդիւնաբերւած արժէքները բաշխում են հասարակութեան մէջ հետեւալ կերպով:

Արդիւնաբերութեան գործիքների եւ միջոցների պահպանումը կանոնաւոր դրութեան մէջ: Արժէքների մի մասը գնում է արդիւնաբերութեան գործիքները և միջոցները կանոնաւոր գրութեան մէջ պահպանելու և վերանորոգելու համար: Մաշւած մեքենայի փոխարինումը նորով, գործիքների և շէնքերի վերանորոգումը, հացահատիկների պաշարի համար արւած նախապատրաստութիւնները, անտառների պահպանումը և այլն, կլանում է տարեկան արդիւնաբերութիւնը արդիւնքների որոշ մասը: Նա կազմում է արդիւնաբերութեան գործիքների և միջոցների հետ ամրող հասարակութեան հարստութիւնը, թէև այժմ արդիւնաբերութեան այդ գործիքները և միջոցները կարգադրում են մասնաւոր սեփականութեան իրաւունքներով հասարակութեան միայն որոշ անդամները, կապիտալիստները, Լիներով սեփականատէր, կապիտալիստը օգտում է նրանցից, որպէս զի բանտօրից շամ կորզէնա կարող է ծախել նրանց ուրիշ կապիտալիստի կամ յանձնել ժառանգաբար իր ազգականներին: Բայց ոչ մի կապիտալիստ չի կարող իր հետ գերեզման տանել գործարանը կամ նոյնիսկ ոչնչացնել նրան: Կապիտալիստները փոփոխում են, ապրում են մեռնում, իսկ արդիւնաբերութեան միջոցները մնում: Արդիւնաբերութեան միջոցները հասարակութեան հարստութիւնն են կազմում, որովհետև նրանք ծառայում են ամրող հասարակութեան, նրանցով ապրում է ամբողջ հասարակութիւնը: Շնորհիւ հասարակական վատթար կարգերի, նրանք այժմ հնարաւորութիւնն են տալիս հասարակութեան չնչին փոքրամասնութեան, կապիտալիստներին, ստրկացնել և ճնշել հասարակութեան անագին մեծամասնութիւնը, այսինքն բոլոր աշխատաւորներին, բայց երբ կապիտալիստական կարգերը տեղի կը տան սօցիալիստական կարգերին, արդիւնաբերութեան միջոցները կը լինեն ոչ միայն հասարակական հարստութիւնը, այլև և կը գտնին հասարակութեան շահեցողութեան տակ,—այն շահը, որ այժմ կապիտալիստ-

ները դուրս են բերում նրանցից և ծախսում յաճախ վասարակար և խելագար փարթամութեան վրայ, կը գնաւ հասարակութեան բոլոր անդամների կարիքների աւելի հաւասար բաւարարութեան համար: Այս ժամանակ կը փոխէի արդիւնաբերութեան միջոցների շահեցողութեան ձեր, իսե նրանց հասարակական էլութիւնը կը մնայ նոյնը *): Լինելով հասարակութեան նիւթական հիմքը արդիւնաբերութեան միջոցները, գոյութիւն ունեն անկախ նրանից, թէ ով և ինչպէս է նրանցից օգտում,—գոյութիւն ունեն մինչև այն ժամանակ, քանի որ գոյութիւն ունի ինքը հասարակութիւնը: Ահա թէ ինչու արժէքների այն մասը, որ ծախսում է արդիւնաբերութեան միջոցների և գործիքների պահպանութեան համար կանոնաւոր գրութեան մէջ, քիչ է ազդում հասարակութեան կարգերի վրայ: Ոչ ոք չի կարող գնել նոա վրայ իր թաթը և իւրացնել նրան, այլապէս հասարակութեան ամբողջ հիմքը կը մատնի քայլայման և հասարակութիւնն անխուսափելիորէն կը կործանվի: Անհամեմատ աւելի ուժեղ կերպով է ազդում հասարակութեան կազմւածքի վրայ այն արժէքների բաշխումը, որոնք մնում են արդիւնաբերութեան միջոցների և գործիքների պահպանման համար ծախսում գումարները դուրս գալուց յետոյ: Այստեղ արդէն խօսքը երկրային բարիքների բաշխման մասին է կենդանի մարդկանց—հասարակութեան անդամների միջև, որոնցից իւրաքանչիւը ձգտում է ստանալ իր համար ոոքան կարելի է շատ: Յետոյ մենք կը տեսնենք թէ ինչպիսի հասարակական հետեւանքների է հասցնում այս հասարակ և կատարելապէս բնական դրութիւնը:

Արժէքների այդ մնացած մասը բաշխում է իր կողմից երկու հաւասար մասերի:

Մի մասը գնում է անմիջական արդիւնաբերողների ապրուստի համար, նա պարունակում է իր մէջ արդիւնաբերողների և նրանց ընտանիքների գոյութեան համար անհրաժեշտ արժէք-

*) Երբ մեր գիւղացները ասում են, որ հողը «Աստծուն» է, որ նա պէտք է մատչելի լինի իւրաքանչիւը մարդու, որ կուզ նրան մշակել և ոչ թէ լինի ամեն տեսակ ձրիակերների ձեռքում,—այդ գէպքում նրանք հասարակ խօսքերով միայն արտայատում են իրանց միտքը՝ հողի, որպէս արդիւնաբերութեան միջոցի, հասարակական էլութեան մասին:

Ները: Մենք արդէն գիտենք, որ այդ աշխատավարձն է կամ «անհրաժեշտ արժեքը»: Միւս մասը գնում է արդիւնաբերութեան միջոցների և գործիքների տէրերին և նրանց բազմաթիւ փաստաբաններին և արբանեակներին: Նա կազմում է ամրող «յաւելեալ արժեքը», որը ստեղծում է հասարակութեան մէջ անմիջական արդիւնաբերողների աշխատանքով, բայց ընկնում է մեծ մասամբ ձրիակերների ձեռքը: Քննենք աւելի մանրամասն այդ երկու մասերն էլ առանձին՝ առանձին:

Ա. «ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՐԺԵՔԸ» ԿԱՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Ա.) Աշկարայ աշխատավարձ:—Պարզելու համար, թէ ինչ է աշխատավարձը, «Հարուստների և աղքատների» մասում (գլ. III) բերւած էր մի հասարակ դրութիւն: Դէմադէմ դրւած էին մի կողմից՝ արդիւնաբերութեան բոլոր միջոցներից զրկած արդիւնաբերողները—աշխատաւոր ձեռքերը, միւս կողմից՝ արդիւնաբերութեան այդ էնց միջոցների տէր կապիտալիստները: Յոյց էր տրւած, թէ ինչպէս այդ դրութիւնն անխուսափելիօրէն հասցնում է այն հետևանքին, որ արդիւնաբերողը իր աշխատանքի արդիւնքից ստանում է աշխատավարձի ձեռվ միայն այնքան, որքան անհրաժեշտ է նրա հոգին մարմնի մէջ պահելու համար. իսկ մնացածը մտնում է կապիտալիստի գրպանը: Արդիւնաբերողը գործում է այստեղ միայն, որպէս աշխատաւոր ոյժ. արդիւնաբերութիւնը զեկավարողը նա չէ, արդիւնաբերած ապրանքը նրանը չէ, այլ կապիտալիստինը: Այստեղ ամեն մէկի համար, պարզ է, որ այդպիսի՝ արդիւնաբերութեան միջոցներից բոլորովին զրկած արդիւնաբերողները — «պոլետարիները» — ընդհանուր աշխատանքով արդիւնաբերւած արժեքների գումարից ստանում են այնքան, որքան անհրաժեշտ է նրանց բանւորական ոյժի պահպանման համար, այսինքն աշխատավարձը: Բաշխման հնթարկւած արժեքների այդ մասը կարելի է անւանել աշկարայ աշխատավարձ:

Բ.) Գոլարկած աշխատավարձ: Արդիւնաբերութեան միջոցներից բոլորովին զրկած արդիւնաբերողները, պրօլետարները կազմում են բոլոր արդիւնաբերողների միայն մի չնչին մասը, նոյնիսկ կապիտալիզմի առաջաւոր երկիրներում, իսկ մեզանում,

Ռուսաստանում, աւելի ևս: Եթէ հաշեկու լինենք բոլոր քաղաքացին բանոր-պրօլետարներին և բոլոր գիւղական բանտորներին, որոնք ոչնչից ոչինչ չունեն և աշխատում են, որպէս մշակներ, կալածատիրոջ կամ «կուլակի» համար, այդ գէպքում նըրանք բոլորը միասին հազիւ կազմեն ամբողջ աշխատաւոր ժողովրդի մի տասերորդ մասը: Հարց է ծագում, — ի՞նչ դրութեան մէջ են գտնուում մնացած արդիւնաբերողները, որոնք չեն զրկել արդիւնաբերութեան միջոցներից: Աշխատանքով արդիւնաբերւած արժեքների ընդհանուր գումարի որ մասն է ընկնում նըրանց ձեռքը բաշխման ժամանակ: Միթէ դեռ պրօլետար չը դառած այդ արդիւնաբերողները, որոնք $\frac{3}{10}$ մասն են կազմում ամբողջ աշխատաւորութեան, ստանում են ամբողջը, որ նրանք արդիւնածին են, և «անհրաժեշտ արժեքը» և «յաւելեալ արժեքը»:

Աւելի, մենք արդէն գիտենք, որ այդ այդպէս չէ: Նախ և առաջ չը պէտք է մոռանալ, որ ինքնուրոյն արդիւնաբերողները, որոնք ունեն իրանց աշխատանքի գործադրման համար անհրաժեշտ արդիւնաբերութեան բոլոր միջոցները, այնքան քիչ են, որ նրանց կարելի է հաշւի չառնել: Մանաւանդ որ մեծ մասամբ այդպիսի ապահովւած ինքնուրոյն արդիւնաբերողները ամեն կերպ ձըգտում են լայնացնել իրանց գործը և գցել իրանց օծի տակ աւելի զրկած արդիւնաբերողներին նրանց աշխատանքից օգտւելու համար: «Խելքը գլխին» փականազործի նման, որի մասին գրւած էր «Հարուստների և աղքատների» առաջին մասում, այդպիսի ինքնուրոյն արդիւնաբերողները հետզիւտէ մտնում են կապիտալիստների գասակարգի մէջ: Բայց մնացած արդիւնաբերողների ահազին մեծամասնութիւնն արդիւնաբերութեան միջոցներ ունի այնքան, որքանը բաւական չէ նրանց աշխատանքը գործադրելու համար: Հասկանալի է, որ արդիւնաբերութեան միջոցների պակասութիւնը զգացող արդիւնաբերողի գրութիւնը շատ քչով է տարբերում այն պրօլետարի գրութիւնից, որը նրանցից բոլորին գուրկ է: Պրօլետարը ընկնում է արդիւնաբերութեան այդ միջոցների տէր՝ կապիտալիստի ճանկը: Նոյն տեղն է ընկնում և այն արդիւնաբերողը, որը արդիւնաբերութեան միջոցների պակաս է զգում, որովհետեւ խօմ նա չի կարող ժամանակի մի մասն աշխատել, իսկ մնացած ժամանակը «ատամնիրը դարակր զնել»: Նրա և պրօլետարի միջև եղած տարբերութիւնը միայն այն է,

որ պրօլետարը ազատ թռչուն է, ստանում է աշխատավարձ, իսկ արդինաբերութեան վրայ նա իր գլուխը չի կոտրում,—այսօր աշխատում է մի գործարանում, դուր չեկաւ—գնաց մի ուղիշ գործարան: Իսկ այն արդինաբերողը, որը ստիպւած է արդինաբերութեան միջոցների մի մասը վերցնել կապիտալիստից, ինքն է դեկավարում իր արդինաբերութիւնը և վերցնում իր վրայ նրա ամբողջ պատասխանատութիւնը: Հենց որ նրա գործը մի քիչ թարս գնաց, գրութիւնը ջուրն ընկնելու չափ վատանում է:

Մենք արդէն քանից անգամ ասել ենք, որ ինքնուրոյն արդինաբերող-արհեստաւորները և արդինաբերող-հողագործները ոչ միայն չեն ստանում յաւելեալ արժէքը, այլ նոյն իսկ յաճախ զրկում են և «անհրաժեշտ արժէքի» մի մասից, այսինքն ստանում են աւելի քիչ, քան պրօլետարները գործարանում: Նրանց ամբողջ ինքնուրոյնութիւնն ոչ այլ ինչ է, բայց եթէ ճակատագրի հեգնանք: Տնախնագործ-կողկարարը, որից վաշխառուվածառականը, որպէս սարդը՝ ճանձից, ծծում է բոլոր հիւթերը. գերձակը, որը օրական 18 ժամ է աշխատում պատրաստի շորերի որևէ ի խանութի համար, նրանք «պրօլետարներ» չեն—չէ որ նրանք տէրեր են արդինաբերութեան իրենց միջոցների՝ մէկը ունի «քիզ», ձիւթած թել, գանակ և մի քանի զոյգ կաղապարներ, իսկ միւսը՝ ասեղներ, մկրատ և արդուկ (ութօ): Բայց երբ գործը հասնում է բաշխման, այդ «ինքնուրոյն արդինաբերողները» հազար անգամ աւելի ուրախ կը լինէին ստանալու նոյնքան, որքան ստանում է գործարանային պրօլետարը, որովհետև «ինքնուրոյն արդինաբերողներ» ել նրանք գառնում են աւելի գառն անհրաժեշտութիւնից, քան պրօլետար լինել չուզենալուց:

Աւելի լաւ դրութեան մէջ է բաշխման ժամանակ և արդինաբերող-հողագործը: Նա տէր է արդինաբերութեան միջոցների—նա ունի հողաբաժին և հող մշակելու գործիքներ: Բայց նրա գժբախտութիւնն այն բանի մէջն է, որ նրա հողաբաժինը սաստիկ փոքր է, որպէսզի կլանի նրու ամբողջ աշխատաւոր ժամանակը և կերակրէ նրան: Եւ ահա արդինաբերող-հողագործը ստիպւած է կապալով հող վերցնել կամ կալածատիրովչից կամ ստիպւած է կապալով հող վերցնել կամ կալածատիրովչից: Իսկ որովհետև հողի պահանջը չափազանց մեծ է և մատչելի հողը՝ քիչ, և ուրիշ ելքը չը կայ, —ուստի նա ստիպւ-

ած է վճարել այն կապալագինը, որ նրանից կը պահանջեն, կամ ստիպւած է աշխատել բերքի մի մասը տալու պայմանով: Այդ պատճառով հասկանալի է, որ նրա աշխատանքով արդինաբերութիւն արժէքներից հողագործին մնում է միայն մասը, որը հազեւ հազ նրան կը փրկէ սովամահից, —այն էլ ոչ միշտ:

Այսպիսով բաշխման ժամանակ անհրաժեշտ արժէքը—աշխատավարձը ընկնում է ոչ միայն արդինաբերող—պրօլետարների ձեռքը, այլ և այն արդինաբերողների, որոնք դեռ իսպառ զրկւած չեն արդինաբերութեան միջոցներից: Տարբերութիւնը միայն նրանումն է, որ պրօլետարը ստանում է աշխատավարձը անմիջապէս (շաբաթ օրը՝ կօնտօրշչիկից), իսկ հողագործի կամ տնայնագործի աշխատավարձը ծածկւած է ինքնուրոյն արդինաբերութեան քօղի տակ: Իսկ երբ այդպիսի «ինքնուրոյն» արդինաբերողները կը թալի իր ապրանքը և կազատի նրան ամեն կողմէ միջոցներից գեռ վերջնականապէս չըզրկւած արդինաբերողներից, կարելի է քօղարկւած աշխատավարձ անւանել: Դըժւար չէ նկատել, որ աշկարայ և քօղարկւած աշխատավարձները հարազատ քոյրեր են, որովհետև նրանց ծագումը նոյնն է, —ծագում են նրանք այն բանից, որ արդինաբերողը կտրում է արդինաբերութեան միջոցներից: Եւ, ինչպէս ասւած է վերեւում, կապիտալի իշխանութեան տակ ընկնում է միատեսակ կերպով, և պրօլետարը և արդինաբերողը, որ իսպառ չէ զրկւել գեռ արդինաբերութեան միջոցներից: Որովհետև եթէ միայն արդինաբերողը չ'ունի բաւականաչափ արդինաբերութեան գործիքներ իր աշխատանքը նրանց միջոցով գործադրելու և դրանով իր ապրուստը հայթնայթելու, —սովոր զցում է նրան կապիտալիստի թաթը նոյնքան անխուսափելիօրէն, որքան և պրօլետարին: Իսկ կապիտալիստը խուզում է նրանց նոյն սանդրով—տալիս է նրանց պյնքան աշխատավարձ—միենոյն է աշկարայ, թէ քօղարկւած, որքան այդ անհրաժեշտ է նրանց կենդանի մնալու համար, իսկ իրան թողնում է մնացածը:

Ներքեւում գեռ խօսք կը լինի այն սերտ կապի մասին, որ

գոյութիւն ունի աշկաբայ և քօղարկւած աշխատավարձի միջն, և
այն ազդեցութեան մասին, որ նրանք գործում են իրար վրայ:

Բ. ՅԱԼԵԼԵԱԼ ԱՐԺԵՔ

Այժմ դառնանք յաւելեալ արժեքի բաշխման՝ բախտից «երես
տւածների» միջն, որոնց համար արդիւնաբերութեան միջոցնե-
րը ներկայացնում են ուրիշի աշխատանքից եկամուտ քամելու
միջոցներ:

Ա.) Փողային կապիտալի եկամուտը: Մեկնութեան պարզու-
թեան համար մենք մինչև այժմ ընդունում էինք, որ կապի-
տալիստական ձեռնարկ կազմող ճարպիկ մարդը, որի նը-
պատակն է «աշխատաւոր ձեռքերից» իր համար եկամուտ կոր-
զելը, ունի ոչ միայն անհրաժեշտ ճարպիկութիւնը, այլ և
ձեռնարկութեան համար հարկաւոր կապիտալը: Բայց այդ պա-
տահում է ոչ միշտ: Իինում է, որ մէկը մեծ կապիտալ ունի—
պապը իր ժամանակին «դատել է»—սակայն հաւի խելք ունի և
չը գիտէ, թէ ինչպէս նրան դցի շրջանառութեան մէջ: Իսկ մի
չը գիտէ, թէ ինչպէս նման իր որսին հաւնելու և կոչելու,—բայց
է վայրի թուշունի նման իր որսին հաւնելու և կոչելու,—պատրաստ
ուրիշը գործնական մեծ հոտառութեան տէր մարդ է—պատրաստ
է վայրի թուշունի նման իր որսին հաւնելու և կոչելու,—բայց
հավիտալ չունի,—դատարկ ձեռքերով որ և է գործի մօտենալ
խօս չես կարող: Սակայն, ինչպէս ասում են, ձկնորսը ձկնորսին
հեռւից կը տեսնի: Թէն ուղեղը հաւի ուղեղ է, բայց կապիտալի
առէրը գիտէ, որ փողը փող պիտի ճնի: Իսկ ձեռնարկողական
տենդով բռնւած ճարպիկ մարդը հենց այն բանի մասին է երա-
գում, թէ ինչպէս լինի, որ նա կարողանայ մի որ և է տեղից ե-
զում չափանական հասկանալի է, որ կապիտալիստական ձեռ-
նարկութիւնից ստացւած շահը պէտք է աւելի մեծ լինի, քան
փողային կապիտալի տոկոսը: Այլապէս ձեռնարկողին բաժին չէր
մնայ, և նա ոչ մի հաշիւ չէր ունենայ գործը սկսելու:

Այսպիսով, կապիտալիստական ձեռնարկութեան շահի մէջ
պէտք է տարբերել երկու մասեր—փողային կապիտալի շահը և
ձեռնարկողական շահը:

Ժամանակակից հասարակութեան մէջ մարդկանց մի ամ-
բողջ բազմութիւն զբաղւած է միայն նրանով, որ փողի ա-
ռետուրով է պարապում, —դրանք բանկիներն են: Բան-
կիրը փոխ է տալիս փողը որոշ ժամանակով, որը անցնելուց
յիսոյ նա ստանում է այդ փողը յետ, բայց արդէն աճումով
միասին: Նա կարող է իր կօնտօրկայի (գրասեղանի) յետեռմ
նայել, ոչնչից էլ չը կախենալով, որովհետև նա կարող է տալ
իր փողերը լաւ գրաւականով և հանգիստ սրտով իր գրպանը դնել
աշխատաւոր ձեռքերով ստեղծւած յաւելեալ արժեքի որոշ
մասը: Պարզ է, որ բանկերը և ձեռնարկողը: արող իրարից
խիստ կերպով բաժանւել: Ոչինչ չի խանգարում բանկերին,
եթէ միայն նրա ուսերի վայ գլուխ կայ և ցանկութիւն ունի իր
կապիտալը ըիսկի ենթարկելու, իր համար ամեն տեսակ ձեռնար-
կութիւններ ստեղծել և շարժել: Եւ եթէ նրա կապիտալը հերիք
չի անի, նա կարող է ուրիշ կապիտալիստների հետ միանալ և
կազմել մի ընդհանուր կապիտալ որը կը պատկանի արդէն ըն-
կերութեանը (կօմպանիային): Այդպիսի կօմպանիաններ (ընկերու-
թիւններ), որոնք երբեմն իրանց արամագրութեան տակ ունեն
հարիւրաւոր և հաղարաւոր միլիոններ, իրանց ձեռքն ին վեր-
ցնում արդիւնաբերութեան ամբողջ ձիւղերը: Նրանց ամբողջ
գործը վարում են վարձու կառավարիչները: Ինտեներները և
բանւորները, իսկ կօմպանիայի մասնակիցները իրանց բազան են
դնում ոչ միայն կապիտալի տոկոսը, այլ և ձեռնարկողական
շահը: Ընդհանրապէս պէտք է ասել, որ չնորհիւ միացեալ կամ
այսպէս կոչւած ակցիօններական կապիտալի մի ո ստեղծւած
կապիտալիստական ձեռնարկութիւններին, իւրաքանչիւր մարդ,
որ տէր է անգամ ամենափոքր փողային կապիտալի, կարող է
խոշոր կապիտալիստական ձեռնարկութեան մասնակից դառ-
նալ: Վճռելով մի որ և է ձեռնարկութիւն կազմել, բան-
կիրները մտցնում են գործի մէջ որոշ կապիտալ և բաժա-
նում են նրանց փայերի կամ ակցիանների: Զեռնարկու-
թեան տւած զուտ եկամուռ բաշխուում է մասնակիցների միջն
նրանց ունեցած փայերի քակի համաձայն: Այդ փայերը կարող
են անցնել մէկից միւսին, բիրժայում ծախւել: Փողային կապի-
տալի այս կամ այն տէրը, փոխանակ նրան բանկը գցելու
և տոկոսներ ստանալու, կարող է գնել նրանով որ և է ձեռնար-

կութեան վայերի կամ ակցիաների որոշ քանակ և ստանալ ոչ
միայն կապիտալի շահը, այլ և ձեռնարկողական շահը: Բայց լի-
նում է յաճախ և այն, որ բանկիրների սարքած ձեռնարկութիւն-
ները ոչ ժիայն եկամուտ չեն տալիս, այլ և տրաքւում են սա-
պոնի բջտիկների նման, կորստեան մատներով ծախւած գումար-
ները ամբողջութեամբ կամ մասամբ: Այն ժամանակ բանկիր
պարոնները «միւֆլիդ» են լինում և ստեղծուում է այն, որի ա-
նունն է բանկային կրախ (մանկութիւն), Այն ժամանակ լալիս
են ոչ միայն ձեռնարկողական շահի սիրուն զոհ գնացած բան-
կիրները և ակցիօներները, այլ և այն անհատները, որոնք ի-
րանց կապիտալը տեղաւորել էին բանկում սովորական տոկոսով,
չը գիտենալով, որ բանկի գործերը վատ են: Այդպիսի բանկային
կրախները (մանկութիւնները) պատահում են բաւական յաճախ,
որովհետև շահի յետեկց ընկած լինելով, շատ բանկիրներ ընկ-
նում են սպեկուլիացեաների, անվատահերի ձեռնարկութիւնների մէջ,
և կորցնում են ոչ միայն իրանց կապիտալները, այլ և ուրիշների
բազմաթիւ դրամագլուխները:

Բ. ԶԵՌՆԱՐԿՈՂԱԿԱՆ ՇԱՀ

Կապիտալի շահից ջոկ կապիտալիստական հիմունքների վրայ
դրւած արդիւնաբերութիւնը տալիս է, ինչպէս ասացինք, և ձեռ-
նարկողական շահ: Դա յաւելեալ արժեքի այն մասն է, որ ընկ-
նում է ճարպիկ մարդու գրպանը, որպէս նույր այն բանի հա-
մար, որ նա է ձեռնարկութեան նախաձեռնողը և նա է իր
բիսկով նրան տանում: Հասկանալի է, որ երբ ձեռնարկութ-
ինքն էլ հէնց կապիտալի տէրն է, նա ստանում է իր գործից և
կապիտալի տոկոսը և ձեռնարկողական շահը: Բայց կապիտալ
չունենալը բնուած գեռ արգելք չէ ճարպիկ մարդու համար ձեռ-
նարկելու որևէ է կապիտալիստական գործ: Բանկիրները իրանց
կրեդիտային (փոխատու) հիմնարկութիւններով հաճութեամբ նը-
րան կօգնեն, եթէ միայն ձեռնարկութիւնը բաւականաչափ շա-
հաւէտ և վստահելի թւայ նրանց:

Այստեղ մենք ստիպւած ենք քննութեան առնելու մի քիչ
հասկանալի հարց, որ վերաբերում է կապիտալիստական ձեռ-
նարկութիւնների տաւած շահին: Դա կապիտալի շահի՝ այսպէս կոչ-

ւած՝ հաւասարման հարցն է արդիւնաբերութեան գանազան միւլերում: Ահա
թէ բանը ինչումն է: Մէնք արդէն գիտենք, որ յաւելեալ արժեք-
քը կապիտալիստական ձեռնարկութիւնների մէջ միակ աղքիւրն
է շահ ստանալու: Որքան աւելի յաւելեալ արժեք է ստանում
կապիտալիստը, այնքան աւելի մեծ է նրա շահը: Իսկ որպէսիւր
յաւելեալ արժեքը ստեղծւում է բանւորների ձեւքով, ուստի որքան
աւելի բանւորներ աշխատեցնէ իր համար կապիտալիստը, այն-
քան աւելի մեծ կըլինի նրա շահը: Հասկանալի բան է, որ
կապիտալիստը խիստ կուզէր լինել որքան կարելի է շատ բան-
ւորներ: Բայց նրա ցանկութիւնը սահման է դնում կապիտալի
այն չափը, որ նա կարող է գործադրել արդիւնաբերութեան հա-
մար: Բանւորների աւելի մեծ քանակ բանեցնելու համար, հար-
կաւոր է լայնացնել արդիւնաբերութիւնը, կառուցանել նոր շէն-
քեր, գնել նոր մեքենաներ և այլն: Իսկ եթէ դրա համար կապի-
տալ չըկայ, ստիպւած ես բաւականանալ ունեցածովդ:

Բայց արդիւնաբերութիւն էլ կայ, արդիւնաբերութիւն էլ:
Մէկի համար հարկաւոր են թանկնոց մեքենաներ և քիչ բան-
ւորներ: Իսկ միւսի համար մեքենաների ծախսը փոքր է, բայց
անհրաժեշտ բանւորների թիւը՝ մեծ: Եթէ ընդունենք, որ այդ
արդիւնաբերութիւնները տանող երկու կապիտալիստներն էլ
ծախսել են միաշափ դրամագլուխ, այդ դէպքում գուրս կը գայ,
որ մէկի համար շատ բանւորներ են աշխատում, իսկ միւսի հա-
մար՝ քիչ: Այն կապիտալիստը, որի մօտ շատ բանւորներ են
աշխատում, պէտք է այդ պատճառով աւելի մեծ շահ ստանար
իր կապիտալից, բան միւսը: Մինչդեռ յայտնի է, որ միաշափ
կապիտալիները բերում են միջին թիւով հաւասար շահ: Ինչումն է
կապիտալի շահի այդ հաւասարման պատճառը: Այդ հարցին պա-
տասխանելու համար, մենք պիտի յրշեցնենք այն, որ մենք ա-
սացինք վերկում մասի եւ ամբողջ կապի մասին: Կապիտալի շահի
հաւասարումը կախուած է ընդհանրապէս արժեքների բաշխումից, իսկ
ինքը բաշխումը ուղղակի կախում ունի որոշ հասարակութեան
ամբողջ արդիւնաբերութիւնից: Ուստի կապիտալի շահի հաւասարումը
կարելի է հասկանալ միայն այն ժամանակ, երբ ի նկատի է
առնում նրա կախումը ամբողջ բաշխումից և ամբողջ արդիւ-
նաբերութիւնից:

Արդիւնաբերութեան կապիտալիստական կարգերում աշխա-

տանքը շաժողութեան է բերւում կապիտալի միջոցով։ Եւ եթէ վերցնենք արդիւնաբերութեան ոչ այս կամ այն ճիւղը, հասարակութեան արդիւնաբերութիւնը վերջինիս ամբողջութեամբ, այդ դէպօռմ դուրս է գալիս, որ միջին հասարակական աշխատանքի իւրաքանչիւր քանակի վրայ ընկնում է կապիտալի որոշ քանակ։ Արդիւնաբերութեան մէջ միջին աշխատաւորական-բանորական ոյժը շարժելու համար անհրաժեշտ է ունենալ շէնքերի, մեքենաների, հում նիւթի, աշխատավարձի և այլ բաների համար տարեկան, գիցուք, 1000 բուրլի։ Արդիւնաբերութեան յարմարեցած միջին հասարակական-բանուորական ոյժը արտադրում է միջին տարեկան արժեքը, որի մեծութիւնն կախւած է հասարակութեան նիւթական և հոգեոր մակերեւոյթից։ Միջին տարեկան այդ արժեքը բաժանուում է երկու մասի՝ միջին աշխատավարձ և միջին յաւելեալ արժեքը, որը մտնում է կապիտալի և նրա արքանեակների գրպանը։ Այս մասը, որ ընկնում է կապիտալիստի ձեռքը, կազմում է 1000 բուրլի կապիտալի և իւրաքանչիւր բանուորական ոյժի միջին շահը։ Ինչ գործի մէջ էլ որ մտցնի կապիտալիստը իր դրամագլուխր, ամենուրեք նրա արդիւնաբերութեան արդիւնքը կը լինի հասարակական արդիւնքի մի մասը։ Նիւթականացած աշխատանք-արդիւնքը կը լինի միջին հասարակական աշխատանքի մի մասը, կը լինի միջին շահը, այսինքն այնպիսի շահ, որ կը ստացվի, եթէ տարւայ ընթացքում ստացած շահը հաւասար կերպով բաշխւի այդ ժամանակամիջոցում գործառնութեան մէջ գոտնող կապիտալի վրայ։

Հասկանալի է, որ այս ամենը, ինչ որ մինք ստացինք կապիտալի շահի հաւասարման մասին, գործադրելի է միմիայն արդիւնաբերութեան այն ճիւղերում, որոնք արդէն կատարելապէս ամրացել են և մօտեցել հասարակութեան արդիւնաբերողական ոյժերի ընդհանուր միջին մակերեւոյթին։ Եթէ մեխի գործարանատէրը յաջողեցրել է ձեռք բերել մի նոր մեքենայ, որ բարձրացնում է նրա բանուորների աշխատանքի արդիւնաւէտութիւնը, այդ դէպօռմ մինչև որ մեխի միւս գործարանատէրերն էլ նոր մեքենաներ չեն մտցնի իրանց գործարանների մէջ, առաջինն իր մեխերը կը ծախէ նրանց իսկական արժեքից թանկ և կըստանայ միջին շահից աւել։ Բայց երբ և միւս ֆաբրիկաները ձեռք կը բերեն նոյն տեսակի մեքենաներ, արդիւնաբերութեան մակե-

րեոյթը կը հաւասարւի այդ ճիւղի մէջ, մրցումը կիջեցնի մեխերի վաճառանոցային գինը մինչև նրանց իսկական արժեքը և ֆաբրիկանաների՝ մեխերից ստացած շահը—մինչև միջին շահը։ Իսկ եթէ մեխի գոլոր ֆաբրիկաներն էլ ստանային միջին շահից աւել, այն ժամանակ այդ գործը այնքան արդիւնաշահ կը լինէր, որ մեխի գործով կըսկսէին պարապել և այլ ճիւղերի կապիտալիստները, և այդ գործութիւնը կը շառունակէր այնքան ժամանակ, մինչև որ մեխերը նոյնքան շահ կոտային, որքան և այլ ճիւղերի արդիւնաբերութիւնը, այսինքն միջին շահ։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ մրցումը հաւասարեցնում է կապիտալի շահը միջին շահի հետ ճիշտ այնպէս, ինչպէս նա հաւասարեցնում է ապրանքի վաճառանոցային գինը նրա իսկական արժեքի հետ, այսինքն նրա արդիւնաբերութեան համար անհրաժեշտ միջին հասարակական աշխատանքի քանակութեան հետ։ Իրօք—դա միենոյն հասարակական երկոյթի երկու տարբեր կողմերն են։ Երբ ապրանքի վաճառանոցային գինը բարձր է նրա իսկական արժեքից, այդ դէպօռմ կապիտալիստի ստացած շահը միջին շահից բարձր է։ Իսկ երբ մրցումը իջեցնում է ապրանքի վաճառանոցային գինը մինչև նրա իսկական արժեքը,—դրանով արդէն նա իջեցնում է կապիտալիստի շահը մինչև միջին շահը։ Ապրանքի արժեքը ստեղծում է ոչ թէ մրցումը, այլ արդիւնաբերութեան հասարակական էութիւնը։ Նոյնպէս և կապիտալի միջին շահը, նրա հաւասարման պատճառը արդիւնաբերութեան գանազան ճիւղերում, պայմանաւորում է բաշխման հասարակական էութեամբ։

Մեքենաները ունեն մի մասնիկ, որը կոչւում է կանոնաւորիչ ճօճանակ—«որիգուլեատօր» և որը մեքենայի աշխատանքը գարձնում է համաչափ։ Հասարակութեան տնտեսական գործունէութեան նոյնպիսի «որեգուլեատօր» է մրցումը։ Նա ճգումը է ապրանքի վաճառանոցային գինը հասցնել մինչև նրա իսկական արժեքը, իսկ կապ տալի շահը՝ մինչև միջին շահը։ Ոչ ոք չի սկսի պնդել, որ մեքենան շարժողը նրա «որեգուլեատօրն» է և ոչ շոգին կամ էլեկտրականութիւնը։ Նոյնպէս և ոչ մի հիմք չը կայ պնդելու, որ ապրանքի արժեքը որոշում է ոչ թէ նրա հասարակական էութեամբ, այլ պահանջի և առաջարկի յարաբերութիւնով, այսինքն մրցումով, կամ ոչ ոք չի պնդի, որ շահի հաւասարման

պատճառը պէտք է փնտուել մրցման և ոչ թէ բաշխման հասարակական էութեան մէջ:

Գ. ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԵԿԱՄՈՒԽԸ

Ապրանքի արդիւնաբերութիւնը դեռ վերջ չի դնումնրա կոչման: Սպառման առարկայ գառնալու համար նա պէտք է ուղարկել այնտեղ, որտեղ ապրում է սպառողը, պէտք է պատրաստ մնայ խառնութներում և ծախւի սպառողի առաջին պահանջով: Ապրանքային արդիւնաբերութեան հողի վրայ առաջ են հկել այսպէս կոչւած միջնորդներ արդիւնաբերուղի և սպառողի մէջ, կամ վաճառականներ: Իր փողային կապիտալը վաճառականը տոկոսով չի տալիս, ինչպէս ձեռնարկողը: Վաճառականը իր փողով գնում է ապրանքներ նրանց արդիւնաբերութեան տեղում և ծախում է նրանց, ի հարկէ, շահով սպառողին: Հարց է ծագում թէ որտեղից է առաջ դալիս վաճառականի շահը, փողային կապիտալի շահը:

Յաւելեալ արժէքի մասին գրւած գլխում (I մաս, գլուխ VI) ցոյց էր տրւած, որ շահը ստեղծւում է ոչ թէ առեւտրի, այլ արտադրութեան ժամանակ, ստեղծւում է ոչ թէ շուկայում, այլ գործարանում: Մինչդեռ երբ վաճառականը գնում է ապրանքը, արտադրութիւնն արդէն վերջացած է, ֆարբիկանան իր ապրանքի համար ստանում է նրա ամբողջ արժէքը, որի մէջ մտնում են նիւթի, շնչքերի, մեքենաների և այլ բաների վրայ արած ծախսերը, բանտորների աշխատավլարձը, կապիտալի միջին շահը և միջին ձեռնարկողական շահը: Ուրեմն որտեղից է գուրս դալիս վաճառականի շահը: Ահա թէ որտեղից:

Ճիշտ է, ապրանքի արտադրութիւնն արդէն վերջացել է, բայց, ինչպէս ասւած է վերևում, չի կատարւած դեռ նրա կոչումը: Իսկ որպէս զի նա կատարւած լինի, անհրաժեշտ է մտցնել ապրանքի մէջ աշխատանքի մի նոր քանակութիւն: Պէտք է արդանքը պատրաստել փոխադրութեան համար, փոխադրել, գարսել խանութներում և յետոյ ծախել սպառողին: Այստեղ պէտք է հաշվի առնել դարսողների, բեռնողների, կառապանների, երկաթուղային ու շոգենաւային բանտորների, գործակատարների, մշակների և այլ մարդկանց աշխատանքը: Այդ ամբողջ աշխատանքի համար վճարւում է միայն անհրաժեշտ արժէքը, աշ-

խատավարձը, և դրանով առաջ է դալիս յաւելեալ արժէքը: Այդ հէնց յաւելեալ արժէքից է, որ ստանում են իրենց շահը և երկաթուղային ընկերութիւնը, և շոգենաւային ընկերութիւնը, և վաճառականը համաձայն ամեն մէկի՝ գործի մէջ դրած կապիտալի քանակութեան:

Այսպիսով փողային կապիտալի շահի, ինչպէս և շահի բոլոր միւս տեսակների, աղբիւրը բանտորների վարձարւած յաւելեալ աշխատանքն է:

Գ. Հ Ո Դ Ա Յ Ի Ն Ռ Ե Ն Տ Ա Ն

Նախորդ գլխում աշխատելով պարզել արժէքի աշխատարկան հիմնքը գիւղատնտեսական արդիւնաբերութիւնից բերւած մի օրինակով, մենք եկանք այն եղրակացութեան, որ ցորենի (ինչպէս և ամեն մի գիւղատնտեսական արդիւնքի) արժէքը բոշուում է աշխատանքի այն քանակով, որ անհրաժեշտ է նրա արտադրութեան համար մշակող հողերից ամենավատերի վրայ: Եթէ ցորենի արժէքը այդ չափից ցածր լինէր, այդ գէպում այդ վատ հողաբաժիններ մշակողները միշտ պիտի աշխատէին ի վկաս իրանց և ի հարկէ, ստիպւած կը լինէին թողնել հողագործութիւնը և պարապել մի որ և է այլ արդիւնաբերութեամբ: Լաւ հողաբաժին մշակողը համեմատած վատ և ողաբաժին մշակողի հետ՝ ունի այն առաւելութիւնը, որ—գործադրելով աշխատանքի նոյն քանակը—նա ստանում է աւելի շատ ցորեն: Բայց որովհետեւ նրա ցորենը ծախում է շուկայում նոյն գնով, ինչ գնով որ ծախում է նրանից աւելի քիչ բախտաւորի ցորենը, ուստի և նա համեմատած վերջինիս հետ՝ ստանում է յաւելեալ եկամուտ: Այդ յաւելեալ եկամուտն առաջ է գալիս ոչ թէ նրա աշխատանքի լաւ յատկութիւնից կամ արդիւնաբերութեան աւելի կատարելագործւած ձերից, այլ միմիայն նրա մշակած հողի լաւ յատկութիւնից, այսինքն նրա, որպէս արդիւնաբերողի, գրութեան աւելի շահաւել լինելուց:

Ինքնըստիրնքեան հասկանալի է, որ երբ արդիւնաբերողը ինքն իր մշակած հողի սեփականատէրն է, այդ գէպում նա ստանում է ամբողջովին իր աշխատանքի արդիւնքը, այսինքն ոչ

միայն աշխատավարձը, կապիտալի միջին շահը և միջին ձեռնարկողական շահը, բայց և այդ յաւելեալ եկամուտը, յաւելեալ շահը: Իսկ երբ արդիւնաբերողը կտրւած է արդիւնաբերութեան միջոցներից, երբ նա ստիպւած է աշխատել ուրիշի հողի վրայ, այդ գէպքում յաւելեալ շահը ընկնում է հողատէրի ձեռքը անկախ նրանից, թէ հւնի որև է մասնակցութիւն արդիւնաբերութեան մէջ, թէ ոչ: Այդ հէնց յաւելեալ շահը, որ լաւ հողերը տալիս են համեմատած վատ հողերի հետ, կազմում է հիմքը այսպէս կոչւած դիմֆերնցիւալ հողային ունուայի: Այդ ունտան կոչում են գիֆֆերենցեալ (տարբերիչ) այն պատճառով, որ նա առաջ է գալիս մշակող հողերի յատկութեան տարբերութիւնից: Երբ ճարպիկ և խորածանկ մարդիկ սկսեցին յափշտակել հողերը և գարճնել նրանց իրանց անձնական սեփականութիւնը, — նրանք ի հարկէ յափշտակումը սկսեցին դիրքի և պտղաբերութեան կողմից ամենալաւ հողաբաժիններից: Մնացած, աւելի վատ հողը դեռ ազատ էր, այսինքն իւրաքանչիւր ցանկացող հողագործ կարող էր հստել նրա վրա, և զրազւել նրա մշակմամբ: Տնտեսական շահաւէտունրա վրա, և զրազւել նրա մշակմամբ: Տնտեսական հողագործի համար միենոյն էր մշակել վատ թեան տեսակէտից հողագործի համար մշակել վատ հողը և ստանալ ամբողջ եկամուտը, որ նա կարող է տալ, կամ հողը և ստանալ ամբողջ եկամուտը, արդիւնքի այն աւելին, որ տալիս է լաւ հողը համեմատած վատի հետ: Եթէ որ և է պատճառով նա համաձայնութեան չեկաւ հողատիրոջ հետ, նա թողնում է նրան և գնում է մշակելու ազատ, աւելի վատ հող: Տնտեսական տեսակէտից այստեղ կորուստ չունի հողագործը: Սրանից երեւում է, որ հասարակական կեանքի սկզբում, երբ դեռ ամբողջ հողը չէր գարձել մասնաւոր սեփականութիւն, ունտան չունէր ուղղակի առնչութիւն արդիւնաբերութեան հետ: Նա հարկինման մի քանի էր, որ հողատէրը, միծ մասամբ երկիրը նւաճողը, վերցնում էր այն հողագործներից, որոնք ուզում էին լաւ հողաբաժիններից շտաւել: Նա վերցնում էր այդ հարկը այն բանի համար, որ լաւ հողաբաժինները յաւելեալ շահ են տալիս, և ոչ թէ հողից, որպէս արդիւնաբերութեան միջոցից, օգտելու իրաւունքի համար: Եթէ հողատէրի խելքին փչէր պահանջել հողից օգտելու համար ունտա, որ յաւելեալ շահից բարձր է, իսկ ունտան աշխատավարձնի առաւելու յաւելեալ շահը ստացում է շնորհիւ լաւ հողաբաժնի առաւելու

թեան համեմատած վատի հետ, այդ գէպքում նրանից ոչ ոք է չէր ուզի հող վերցնել, այն ժամանակ ամեն մէկի համար էլ աւելի ձեռնատու կը լինէր մշակել ազատ հողերը, որոնցից օգտական համար ոչ մի վճար չէր պահանջուում: Մենք արդէն տեսանք, որ յաւելեալ շահն առաջ է գալիս նրանից, որ մի որ և է ձիւղում ապրանքների մի մասն արտադրուում է արդիւնաբերութեան առանձնապէս շահաւէտ, բայց ոչ բոլոր արդիւնաբերողներին մատչելի (մենավանառ) պայմաններում: Եւ ապրանքների այդ մասը ծախւում է նոյն գնով, որով ծախւում են և մնացած ապրանքները, հետեապէս, նրանց իսկական արժեքից բարձր: Բայց ապրանքի արժեքը որոշում է նրա արտադրութեան համար անհրաժեշտ հասարակական աշխատանքի քանակով միջին և ոչ բացառապէս շահաւէտ պայմաններում: Սրանից պէտք է հետեցնել, որ յաւելեալ շահը չի կարող բարձրացնել ապրանքի արժեքը, որովհետև նա արդէն մտնում է (աշխատավարձի և կապիտալի միջին շահի նման) գոյութիւն ունեցող արժեքի մէջ: Ուստի և գիֆֆերենցեալ ունտան (յաւելեալ շահը) նոյնպէս չի բարձրացնում ապրանքների արժեքը: Հետեապէս նա արդիւնաբերութեան հետ ուղղակի արժեքը: Հետեապէս նա արդիւնաբերութեան համար առնչութիւն չունի: Բայց կայ ունտայի մի այլ տեսակը, արսօնիւտ առնչութիւն չունի: Ինչ ստանայի մի այլ տեսակը, արսօնիւտ (բացարձակ) հողային ունտան, որը, ինչպէս կը տեսնենք, շատ ուժեղ աղղեցութիւն է գործում գիւղատնտեսական արդիւնաբերութեան վրայ, գանդաղեցնելով նրա բնական ընթացքը:

Բանի զարգանում էր և ամրանում հասարակութիւնը, տյնքան իշխանատէրերը ձգտում էին գրաւել, որպէս իրանց մասնաւոր սեփականութիւն, հողերի աւելի ու աւելի միծ քանակ՝ նրանց եկամուտի աղբիւր դարձնելու համար: Բանը վերջացաւ նրանց աղբանգիւր հողից աղայական կամ պետական կամ ուղղական կամ ուղիւր և այլն հող գարձաւ: Գտնւեց սեփականատէր տական կամ ուղիւր և այլն հող գարձաւ: Հետանիտէ հողատէրը սկսեց պահանջել ներով կաշկանդւած: Հետանիտէ հողատէրը սկսեց պահանջել, նրանից հողաշահութեան համար ոչ միայն այն յաւելեալ շահը, որ լաւ հողաբաժնը է համեմատած վատի հետ, այլ և որ լաւ հողաբաժնը աղղեցութիւնը տալիս է համեմատած վատի հետ, որպէս միջին շահը, որ հողագործը պէտք է ստանար, որպէս ինքան աղղեցութիւն արդիւնաբերող: Հարկէց գիֆֆերենցեալ ունտան դա-

ռաւ զիւղատնտեսական արդիւնաբերողների ստրկացման միջոց։
Ռենտան սկսեց ազդել արդիւնաբերութեան վրայ։

Մշակման հնթարկող հողի յատկութիւնը ուղղակի կախ-
ւած է հացի պահանջից, հետևապէս և հացի գնից։ Հացի պա-
հանջի իւրաքանչիւր աւելացումն աւելացնում է նրա գինը և
հնարաւոր է դարձնում մշակելու այնպիսի հողաբաժիններ, որոնց
մշակումը շահաւէտ չէր նախկին պայմաններում։ Երբ հողը
իրան արդիւնագործողին է պատկանում, նա կարող է ըսկը-
սել վատ հողաբաժնի մշակումը, հէնց որ յոյս կունհնայ
ստանալու նրանից միջին եկամուտ, այսինքն այնքան, որքան
կարող է տալ նրան նրա աշխատանքը որևէ է այլ ճիւղում։ Բայց
դրութիւնը փոխւում է, երբ հողը պատկանում է այնպիսի ան-
ձի, որը ինքը չի մշակում նրան։ Այդպիսի սեփականատիրոջ հա-
մար հետաքրքիր չէ, թէ նրա հողաբաժնից ինքնուրոյն արդիւնա-
բերողը կարող է միջին եկամուտ դուրս բերել։ Դրանից նրան-
ոչ տաք կը լինի, ոչ պաղ։ Նա թողնում է իր հողն անմշակ, մին-
չն որ նրան չը վճարեն նրանից օգտւելու իրաւունքի համար։
Խոկ այդ կարող է պատահել միայն այն ժամանակ, երբ հացի
գները այնքան կը բարձրանան, որ նոր հողաբաժինները կը տան
արդիւնագործողին ոչ միայն միջինչեկամուտ, այլև այն գումա-
րը, որ պահանջում է նրանից հողի սեփականատէրը։ Այդ հէնց
գումարը, որ ստանում է հողի սեփականատէրը մշակման դեռ
չենթարկւած հողաբաժիններից ամենավատերից օգտւելու իրա-
ւունքի համար, կոչւում է արսօլիւտ (բացարձակ) հողային ունտաւ-
Մենք տեսնում ենք, որ աբսոլիւտ հողային ունտան անմիջապէս
առաջացնում է հացի գների բարձրացում։ Ուրիշ խօսքով, եթէ
հողը մասնաւոր սեփականութիւն չը լինէր, այլ մատչելի լինէր
իւրաքանչիւր արդիւնագործողի, որ կուղենար մշակել նրան, — այդ
գէպքում մշակման կենթարկւեն այնպիսի հողաբաժիններ, ո-
րոնք այժմ անմշակ սպասում են հացի գների բարձրացման։ Այն
ժամանակ աշխատելու հնարաւորութիւն կը արւէր ոչ միայն
ներկայ անգործներին, այլև հացի արժեքը կընկնէր և կարիք
չէր լինի նրա մէջ խառնել յարդ ու փոշի։

Լինի դա դիֆֆերենցեալ (տարբերիչ) թէ աբսոլիւտ (բա-
ցարձակ) — հողային ունտան բղխում է միշտ նոյն աղբիւրից —
ինչպէս և կապիտալի շահը, այսինքն չը վարձատրւած յաւելեալ

աշխատանքից, անմիջական արդիւնագործողների միջոցով ստեղծ-
ւած յաւելեալ արժեքից։ Ժամանակակից կարգերի փաստաբան-
ների բանաւոր մեքենայութիւններն անզօր են այստեղ ծածկե-
լու, քօղարկելու երկորի խսկական դրութիւնը։ Երբ գիւղացին
վերցնում է կալւածատիողից հողը՝ բերքի մի մասը տալու պայ-
մանով, երբ նա հերկում է նրան իր գութանով, ցանում է նրա
վրայ իր հացահատիկը, ինքը հաւաքում է բերքը և յետոյ այդ
բերքի երկու երրորդ մասը, տանում է կալւածատիրոջ ամբարը,
այդ գէպքում միայն կոյրը կամ դիտմամբ աչքերը փակողը չի տես-
նում, որ կալւածատէրը խուրձերի միջոցով ստանում է հողա-
գործի ստեղծած յաւելեալ արժեքը։ Ցաւելեալ միայն Ցածախ
լինում է և այն, որ կալւածատէրը հողագործից յափշտակում է
և անհրաժեշտ արժեքի մի մասը, այսինքն, ուրիշ խօսքով, խլում
է նրա բերնի կտոր հացը։ Հողի մասնաւոր սեփականութիւնը մի-
նավաճառութիւն է, նա վերցնում է կամ սահմանափակում ազատ
մրցումը գիւղատնտեսական արդիւնագործութեան շրջանում։ Հո-
ղային ունտան գոյութիւն ունի հէնց այն պատճառով, որ
հողատէրերը մրցումից չեն վախենում։ Ազգարնակութիւնն
աճում է, հացի պահանջը շարունակ է մեծանում է, և հողա-
տէրոր գիտէ, որ արդիւնագործողը, որը բաւականաչափ հող
չունի, կամ բոլորովին ոչինչ չունի, նրանից չի փախչի և այսօր
չէ վաղո կընկնի թակարդի մէջ, Արդէն միայն այն, որ հողա-
տէրերը կարիք չունին իրար գէմ մըցելու հողագործին իրենց
մօտ քաշելու համար, նրանց հազորդում է սոսկալի ոյժ գիւղացի
ազգարնակութեան վերաբերմամբ։ Խոկ այստեղ դրան աւելանում
է և այն, որ արդիւնաբերող-հողագործների միջև տեղի է ունե-
նում դաժան մրցում, — նրանք ստիպւած են կամ թողնել յար-
մարաւոր հողաբաժինները և գնալ, ուր որ պատահի, կամ թէ չէ
լուգունել այն պայմանները, որ գնում է նրանց առաջ հողի սե-
փականատէրը։ Խոկ այդ պայմանները յաճախ այնպէս են, որ
հողագործի աշխատանքի արդիւնքից նրան մնում է միայն ան-
հրաժեշտ արժեքի մի մասը, այսինքն նա դատապարտւում է ան-
ընդհատ սովածութեան։

Սեփականատէրերը ստանում են ունտա ոչ միայն արտե-
րից, այլև արօտատեղերից, անտառներից, ձկներով լի ջրերից,
հանքերից և քաղաքային հողերից։

Ամեն անգամ, երբ մասնաւոր սեփականութեան իրաւունքը սահմանափակում է աղատ շահեցողութիւնը բնութեան այս կամ այն բարիքի, որ անհրաժեշտ է կամ օգտակար է մարդուս, — դրանից առաջանում է ունատա: Եւ եթէ ուրիշի աշխատանքի յափոշտակման խորամանկ սիրահարներից մէկը գտնէր որևէ է միջոց մասնաւոր սիփականութիւն դարձնելու օդը կամ արեի լրյուր, — բնութեան այդ բարիքներն էլ սեփականատէրերին կըտային նոյնպիսի ունատա, ինչպէս և հողը:

Դ. Հ Ա Ր Կ Ե Բ

Նախնական ժամանակներում, երբ մարդս գեռ վայրենի գրութեան մէջ էր և մենակ էու ապրում, նա ստիպւած էր իր անհատական ոյժերով ապահովել իր զոյութիւնը, իսկ դրա համար նրան հարկաւոր էր ամեն բանի մէջ էլ վարպետ լինել: Նա պէտք է գիտենար, թէ ո՞ր պտուղները կարելի է ուտել և որոնց չի կարելի. Նա պէտք է գիտենար նրանց գտնելու տեղերը. Նա պէտք է լաւ որսորդ լինէր, պէտք է շարունակ պաշտպանէր թշնամիներից, վերջապէս պիտի կարողանար սարքել իր համար բնակարան և պատրաստել շորեր: Բայց որովհետեւ ամեն բանի վարպետ լինելը դժւար է, ուստի այդ բոլորը նա կատարում էր շատ վատ, — նա կերակրում էր ամեն տեսակ գերով. Նրա բնակարանն էր շարունակ ծառի ճիւղերից շինած մի ողորմելի տնակ. Նրա մարմինը ծածկում էր որևէ է գաղանի՝ մի կերպ չորացրած և կակուղանած մորթին, իսկ թշնամիներից պաշտպանւելու կողմից նրա գրութիւնը չափազանց անսախանձելի էր: Երբ մարդիկ սկսեցին ապրել խմբումներով, նրա վիճակը նկատելի կերպով ժոխւեց: Առաջ եկաւ աշխատակցութիւնը, որ հնարաւորութիւն է տալիս մարդկանց կատարել այնպիսի գործեր, որոնց իրագործման մասին մտածել անգամ չեն կարող մինակ ապրող և գործող մարդիկ: Առաջ եկաւ աշխատանքի հասարակական բաժանումը, որը դարձրեց աշխատանքն աւելի արդիւնաւէտ, և կեանքը դառնաւ աւելի հեշտ ու ախորժելի:

Հետզինետէ, երբ մարդիկ ամրացրին իրանց կեանքը խմբումներով, որ հիմնւած էր աշխատակցութեան և աշխատանքի բաժանման վոայ, նրանց մէջ երևացին, բացի անձնական պահանջներից, և

հասարակական պահանջներ: Երբ մարդս մենակ էր ապրում, նրա մտքից էլ չէր կարող անցնել իր բնակավայր — անտառում ճանապարհներ շինել: Ճանապարհները շինելը ոչ միայն նրա ոյժերից վեր էր, այլ և բնաւ հարկաւոր չէր: Իր թափառութեների համար նա կարող էր օգտւել զազանների բացած շաւիղներից: Բայց հասարակութեան համար, որի մէջ գոյութիւն ունի աշխատանքի բաժանմանումը և նրա հետ կապւած ապրանքների փոխանակութիւնը, ճանապարհները չափազանց անհրաժեշտ են: Որքան աւելի լաւ են հաղորդակցութեան միջոցները հասարակութեան առանձին մասերի մէջ, այնքան աւելի հեշտութեամբ է կատարում փոխանակութիւնը: Ճանապարհներից ջոկ հասարակութեանը հարկաւոր են հասարակական շինքեր, ինչպէս տաճարները, հիւանդանոցները, գպրոցները: Հասարակութեանը հարկաւոր է անցկացնել ջնուր արտերը ոռոգելու համար կամ չորացենլ, — որոնք տեսնդ են տարածում ամբողջ շրջանում: Հասարակութեանը հարկաւոր է ապահովութիւն, ինչպէս արտաքին, այնպէս և ներքին, որպէս զի ամեն մի մարդ կարողանայ հանգիստ իր գործով զբաղւել, առանց երկիւղ կը լու, որ ամեն ըօպէ կարող են վրայ պլրծնել աւազակները և զոկել նրան թէ հարստութիւնից, թէ կեանքից: Հասարակական այդ բոլոր կարիքներին բաւարարութիւն տալու համար հարկաւոր է, ի հարկէ, աշխատանք, որովհետև ճանապարհները, կամուրջները, շինութիւնները և այլն, իրանքիրանց չին ստեղծւում: Սկզբներում այդ աշխատանքը կատարում էր ամբողջ հասարակութիւնը անմիջապէս — ընկան իրերով, — նշանակած օրը դուրս էին գալիս բոլորը միասին կամ խումբ-խումբ հերթով ճանապարհները կարգի բերելու համար ցախից կամուրջ շինելու կամ քարեր տաշելու շինութիւնների համար: Դուրս էին գալիս հերթով կատարելու նաև գիշերապահի պաշտօնը, ինչպէս այդ գեռ այժմ էլ կարելի է տեսնել մեր գիւղերում: Իսկ երբ արտաքին թշնամին էր անհանգիստ անում, իրագանչիւր հասակաւոր և առողջ տղամարդ պարտաւոր էր զուրս զալ զաշտ՝ ոտքից մինչեւ գլուխ զինւած յարձակումը մղելու համար: Հետզինետէ աշխատանքի բաժանումը ծաւալյեց և այն աշխատանքի վրայ, որը անհրաժեշտ է հասարակական կարիքները հոգալու համար: Լաւ կօշկակարից յաճախ վատ կամուրջներ շինող է զուրս զալիս, իսկ լաւ գերձակը վատ քար-

տաշ է լինում: Փոխանակ իրանց աշխատանքից կարւելու և անսովոր գործի ձեռնարկելու, աւելի լաւ կը լինի, եթէ նրանք հասարակական կարիքների համար անհրաժեշտ աշխատանքի իրանց բաժինը վճարեն հասարակութեանն իրանց արդինքներով—կօշիկներով կամ շորերով: Իսկ կամուրջները թող «գուրգեարը» շինէ, և քարերը թնդ քարտաշը տաշէ: Դուրգեարը և քարտաշը կատարում են այդ ժամանակ հասարակութեան համար այն ամբողջ աշխատանքը, որ հասարակութեան միւս անդամները պիտի անէին, բայց դրա փոխուրէն նրանք ստանում են հասարակութիւնից այն բոլոր արդինքները, որ իւրաքանչիւր արդիւնագործող մտցնում է որպէս իրանից պահանջւող աշխատանքի բաժինը: Երբ փողը ջուկայում արդինագործութեան միջոց է զանում, երբ փողային տնտեսութիւնն է սկսում թագաւորել, արդիւնագործողները վճարում են հասարակութեան աշխատանքի իրանց բաժինո, ոչ թէ արդինքներով: Առաջ են գայիս հարկերը այն ձեռվ, ինչ ձեռվ որ նրանք գոյութիւն ունեն այժմ: Այսպէս ուրիշմ, հարկերը աշխատանքի այն բաժինն են կազմում, որ հասարակութեան իւրաքանչիւր անդամ տալիս է արդինքով կամ փողով հասարակական կարիքները հոգալու համար: Յետոյ մենք կը տեսնե ք, թէ ինչ ուղղումներ պէտք է մտցնել այդ բնորոշման մէջ:

Երբ հասարակութիւնը բաղկացած է գեռ ինքնուրոյն արդիւնաբերողներից, պարզ է, որ հասարակութեան իւրաքանչիւր անհատ տալիս է իր սեփական աշխատանքի մի մասը: Բայց երբ առդիւնաբերողները արդէն կտուած են արդիւնագործութեան միջոցներից, երբ հասարակութեան անդամների մի մասի մօտ մնացել են միայն մերկ «աշխատաւոր ձեռքեր», իսկ միւսները յափշտակել են արդիւնաբերութեան միջոցները, որպէս մասնաւոր սեփականութիւն, մի խօսքով, երբ արդէն իշխում են կապիտալիստական տնտեսական կարգեռը, հառկերի մէջ պարունակուող աշխատանքը գցւում է ամբողջապէս աշխատաւոր ժողովրդի ուսերին: Հարկերը, ի հարկէ, վճարում է և կապիտալիստը: Բայց որովհետև կապիտալիստի ամբողջ եկամուտը բղխում է բանւորների յաւելիալ աշխատանքով ստեղծւած յաւելիալ արժէքից, ուստի կապիտալիստ հարկերը տալիս է ոչ իր աշխատանքից, այլ ուրիշի՝ բանւորների աշխատանքից: Միւս կողմից, բանւորների վճարած հարկերը նոյնպէս պէտք է դուրս գան յա-

ւելեալ արժէքից, և ոչ անհրաժեշտ արժէքից (այսինքն աշխատավարձից), այլապէս բանւորը ստիպւած պիտի լինէր կիսավաղզ, կիսածարաւ մնալ: Այսպէս պէտք է լինէր, բայց այսպէս չի լինում միշտ: Երբ աշնանը ծախում են գիւղացիք հացը և նրա ողորմելի կանկարասին հառկերի չովճ որւած մնացորդների համար, այլ գէպերում խնդիրը չի վերաբերում նրա աշխատանքով ստեղծւած յաւելիալ արժէքին, այլ նրանից խլում են անհրաժեշտ արժէքի մի մասը և ստիպում են ապրել կիսաքաղց մինչև նոր բերքը: Այսպիսով կապիտալիստական հասարակութեան մէջ հարկերը չեն կազմում արդէն աշխատանքի այն մասը, որ իւրաքանչիւր անդամ հասարակութեան տալիս է հասարակական կարիքները հոգալու համար, այլ կազմում են մասը յաւելիալ աշխատանքի կամ յաւելիալ արժէքի, որ աշխատաւոր ժողովրդը վհարում է հասարակական կարիքները հոգալու համար: Սա առաջին ուղղումն է, որ մենք ստիպւած ենք մտցնել հարկերի բնորոշման մէջ—ինչպէս նրանք պիտի լինեն աշխատաւոր եւ ոչ կապիտալիստական հասարակութեան մէջ: Ահա և երկրորդ ուղղումը:

Մենք ասացինք, որ հարկերը գնում են «հասարակական կարիքները հոգալու» համար: Հենց այդպէս էր այն ժամանակ, երբ աշխատաւոր հասարակութեան մէջ հասարակական գործերը կառավարում էր ինքը հասարակութիւնը «վեչեյի» (ժողովի) միջոցով: Բայց մենք արդէն սիտենք, որ այդ ազատ կեանքին վաղուց արդէն վերջ է արւած: Եկան «վարեազները» կամ ուրիշ քաջ մարդիկ, նւաճեցին երկիրը և սկսեցին կառավարել նրան իրանց քէֆի ուղածին պէս, այսինքն իրանց օգտի համար: Ի հարկէ, այն ժամանակ էլ, ինչպէս և այժմ, նրանք ստիպւած էին լինում հարկերի մի մասը ծախսել հասարակական նպատակների համար: Բայց իշխանների ամենամեծ հոգսն էր որքան կարելի է ամուր և լաւ կեանք հաստատել իրանց համար: Իշխանների զինուրական խումբը (գրուժինան), որին կերակրում էր նւաճւած երկրի աշխատաւոր ազգաբնակութիւնը, իր թէ պէտք է պաշտպանէր երկրը արտաքին թշնամիներից: Ճիշտ է, երբեմն այդպէս էլ հէնց կիրր արտաքին թշնամիներից: Ճիշտ է, երբեմն այդպէս էլ հէնց լինում էր, բայց աւելի յաճախ զինուրական խումբը գործադրը ուում էր այդ հէնց աշխատաւոր ազգաբնակութիւնն երկիրը և հլու հպատակութեան մէջ պահելու համար, և երբեմն միայն գնում էր նորանոր նւաճումներ անելու իր իշխանի համար:

Այդպիսի դէպքերում, երբեմն խումբը պարտութիւն էր կրում, թշնամին մտնում էր երկիր և շարժում նոյնպէս քէֆը ուզածին պէս: Այդ ժամանակ աշխատաւոր ազգաբնակութեան համար խումբը ուղղակի մի պատուհաս էր և ոչ պաշտպանութիւն: Իշխանները պահում էին նոյնպէս և «ստրաժնիկներ», իբր թէ հասարակական խաղաղութիւնը և հանգստութիւնը ապահովելու համար, իբր թէ խաղաղ և բարեպաշտ քաղաքացիներին զանազան չարամիտներից պաշտպանելու համար: Իրօք ստրաժնիկների միակ գործն այն էր, որ նրանք որսում էին ազգաբնակութեան մէջ «ազատ ոգին» և ոչնչացնում նրան դաժան հալածանքներով և կախաղաններով: Իսկ և իսկ այժմեան նման: Այդպիսի կարգերում, հասկանալի է, որ հարկերի միայն մի մասն է ծառայում հասարակական կարիքներին: Միւս մասը գնում է իշխողների համար ձեռնտու, «գոյութիւն ունեցող կարգերի» պաշտպանման համար, իսկ հասարակական կարիքները մնում են բացւածանական համար:

Մեր խօսքը հարկերի մասին վերջացնելու համար պէտք է ասենք, որ հարկերը լինում են ուղղակի և անուղղակի: Ուղղակի հարկերը նրանք են, որոնց պետութիւնը նշանակում է համաձայն կամ բնակիչների թւի (գլխահարկ) կամ նրանց կարողութեան (տները, հողերը) կամ նրանց ստացած եկամուտի (եկամտային հարկ): Ուղղակի հարկերը ունեն այն անյարմարութիւնը, որ իսկոյն երեսում է, թէ ումից որքան է վերցնում: Նոր հարկեր նշանակես, բնակիչները գեգոնութիւն կը յայտնեն, կը բղաւեն: Եւ ահա ճարպիկ մարդիկ հնարեցին մի միջոց՝ կենդանի հաւին «փետկել» այն պէս, որ նա այդ չը նկատի, և որ գլխաւորն է՝ ձայնը հանէ:

Այդ միջոցը կոչւում է անուղղակի հարկ: Այդ հարկերը պահանջում են ոչ բնակչի, ոչ նրա հարստութեան, ոչ էլ նրա եկամուտի համաձայն, այլ ստացւում են նրա գոյութեան համար անհրաժեշտ սպառման առարկաներից: Հարկ կամ ակցիզ է նշանակում շաքարի, թէյի, ծխախոտի, գինու, սպիրտային խմիչքների, աղի և այլ առարկաների վրայ: Պետական գանձարանը ըստանում է այն հարկերը, մինչեւ ապրանքների շրջանառութեան մէջ մտնելը, այնպէս որ սպառողը գանձարանի հետ ուղղակի գործ չունի: Նա միայն ախուվախ է անում և գանգատուում, որ սպառման առարկաները թանկանում են: Իսկ երբ վաճառականը ասում է,

որ մեղաւորը գանձարանն է, որ նշանակել է նոր հարկեր, — այդ սպառողի մի ականջից միւսից դուրս է գալիս կամ նա պարզէիպարզ չի հաւատում վաճառականին: Իսկ գանձարանին հէնց այդ էլ հարկաւոր է:

Աւելի հեշտութեամբ հարկեր ստանալու, սպառման մի քանի առարկաների գները կամայականօրէն նշանակելու և իր եկամուտներն աւելացնելու համար, գանձարանը ստեղծում է իր համար մենավաճառութիւն այդ առարկաների վերաբերմամբ, այսինքն նա վերապահում է իրան բացառիկ իրաւունք ծախելու, երբեմն և արտադրելու սպառման այս կամ այն առարկաները: Զանազան երկիրներում գոյութիւն ունի մենավաճառութիւն սպիրտի, ծխախոտի, լուցկիների, աղի և այլն... Պետական, ինչպէս և ամեն տեսակ մենավաճառութեան ժամանակ սպառման առարկաների ոչ միայն գինն աւելի բարձր է, քան նա կը լինէր աղատ մրցման ժամանակ, այլ և առարկաների յատկութիւնն աւելի վատ է լինում: Այդ բոլորը ինքն ըստ նքեան հասկանալի է:

Ի մի ամփոփելով այս գլխում բաշխման մասին մեր բոլոր ասածները, մենք գալիս ենք այն եղրակացութեան, որ զուրս գալով արդիւնագործութեան միջոցները կանոնաւոր դրութեան մէջ պահելու համար անհոգեցած գումարը, երկրի աշխատաւոր ժողովրդի ստեղծած արժէքները բաշխուում են այսպէս.

Ա. ԱՆՀՐԱԺԵԾ ԱՐԺԵՔ

(Անմիջական արդիւնաբերողների ապրուստ)

ա) Առդիւնագործութեան միջոցներից իսպառ գրկւած արդիւնաբերողների ապրուստ—աշկարայ աշխատավարձ:

բ) Արդիւնագործութեան միջոցներից ոչ լիովին գրկւած արդիւնաբերողների ապրուստ—քօղարկւած աշխատավարձ:

Բ. ՑԱԽԵԼԵԱԼ ԱՐԺԵՔ

- ա) Փողային կապիտալի շահը:
- բ) Ձեռնակողական շահ:
- շ) Վաճառականական կապիտալի շահ:
- դ) Հողային ոենտա:
- ե) Հարկեր:

III

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՌԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱՇԽՈՒՄԻՑԻՑ ԲՂԽՈՂ ԴԱ-
ՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ:—ԴԱՄԱԿԱՐԳԻՑԵՐԻ ԿՌԻՒԼ:

Հասարակութեան կազմակերպւած դրութիւնը: Երբ մի խումբ
մարդիկ ուղղում են միասին կատարել որ և է աշխատանք, որը
իւրաքանչիւրի—առանձին վեցքրած—ուժից վեր է, —նրանք գոր-
ծի են կպչում ոչ թէ անկապ և խառնիխուռան կերպով, այլ որոշ
կարգով, համանայնեցնելով իրենց գործողութիւնները:

Այդ պատճառով, աշխատակցութիւնը ներկայացնում է ի-
րանից առանձին մարդկանց գործողութիւնների կարգաւորումը որոշ աշխա-
տանք կատարելու նպատակով:

Այդ գործողութիւնները կարող են լինել և միատեսակ և
բազմատեսակ: Երբ մի խումբ մարդիկ ուղղում են մի տեղից մի
ուրիշ տեղ փոխազրել մի ծանր գերան —նրանք բոլորն է, միա-
տեսակ են լարում իրենց ձեռքերը, ծուռմ մէջքը և այլն: Պարզ է,
որ այստեղ կատարում է միատեսակ գործողութիւնների հասարակ
գումարումն: Միատեսակ գործողութիւնների այդօրինակ կարգաւո-
րումը կը լինի հասարակ աշխատակցութիւն: Ընդհակառակը, երբ,
օրինակ. սեղաններ շինելու համար մի քանիսը ծառեր են կտրում
անտառում, միւսները գերանները ուղարկում են տախտակ դուրս
բերում, երրորդները ուղարկում են տախտակները և կտրում
մասերի, չորրորդները հաւաքում են և իրար կպջնում այդ
մասերը և այլն,—այդ գեպքում մինք արդէն գործ ունենք բազ-
մատեսակ գործողութիւնների կարգաւորման հետ,—ծառ կտրողի
գործողութիւնները տարբերում են, օրինակ, այն վարպետի գոր-
ծողութիւններից, որը սեղաններ է շինում: Այս արդէն բարդ աշ-
խատակցութիւն է կամ աշխատանքի բաժանում: Հեշտ է հասկա-
նալ, որ գործողութիւնների կարգաւորումը—լինի այդ հասարակ
աշխատակցութեան, թէ աշխատանքի բաժանման միջոցով, միւ-
նոյն է—հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ հասարակու-
թեան մէջ մարդիկ կալւած են իրար հետ որևէ է ներքին կա-
պով, երբ մարդիկ իրանց գոյութիւնը պաշտպանում են ոչ ա-
ռանձին-առանձին, ինչպէս աւազի հատիկները ծովի յատակում,
այլ որոշ կերպով միացած են: Ուրիշ խօսքերով, հասարակութիւնը

ոչ թէ ներկայացնում է իրանից հասարակ կուտակումն մարդ-
կանց, որոնք ապրում են միանգամայն անկախ միմեանցից, այլ
ունի իր կազմուածքը:

Հարց է ծագում, որ ոյժն է արդեօք միացնում մարդկանց կազմա-
կերպւած գործողութիւնների համար ժամանակակից հասարակութեան մէջ եւ
որն է այդ հասարակութեան կազմածքը: Ժողովրդական առածն առում
է. «Ճռկը գնում է, ուր խորն է, իսկ մարդը, ուր լաւ է»: Մայր
բնութիւնը տւել է մարդուս, ինչպէս և ամեն մի կենդանի ա-
րարածի, պահանջներ, որոնց բաւարարութիւնը կազմում է նրա
կեանքի հիմնական ինտերէսը, շահը: Մարդս միտ ձգտում է որքան
կարելի է լաւ և հեշտ կերպով բաւարարութիւն տալ իր պահանջ-
ներին, նա գնում է այնտեղ, ուր քաշում է նրան շահը.

Հասկանալի բան է, որ ամեն մարդ էլ կուզէր ապրել որքան
կարելի է քաղցր և գնալ այնտեղ, որտեղ մարդիկ ման են գա-
լիս մետաքսէ և թաւշեայ շորերով և ուտում են արծաթէ և սոկէ
ամաններով: Ամեն մարդ էլ կուզէր, բայց ամեն մարդու հա-
մար էլ մատչելի չեն այնտեղ տանող ճանապարհները: Իսկ մատ-
չելի են նրանք միայն աշխարհիս այն սակաւաթիւ բախտաւոր-
ներին, որոնք ոչ ցանում են, ոչ հնձում, բայց քէփ են անում,
ինչպէս պանիրը իւղի մէջ: Ուրեմն, մնացածները ստիպւած են
իրանց ինտերէսը (շահը) վնտուել ոչ այնտեղ, որտեղ նրանք ու-
զում են, այլ որտեղ նրանք կարող են: Պահանջների բաւարար-
մանը ծառայում են աշխատանքի արտադրած արժէքները: Այդ
պատճառով ամեն մարդու շահն այնտեղ է, որտեղ նա կարող է
ստանալ իր պահանջներին բաւարարութիւն տալու համար ան-
հրաժեշտ արժէքներ: Սակայն ժամանակակից հասարակութիւնն մէջ
արժէքները փողոցում չեն փուած, նրանք խստօրէն բաշխւած են.—
բաշխւած են, ինչպէս մենք գիտենք, երկու մեծ բաժինների—անհրա-
ժեշտ արժէք—արդիւնագործողների և աշխատավարձ և յաւելեալ ար-
ժէք, որից կազմուում են ամեն տեսակ կապիտալների և կապի-
տալիստական ձեռնարկութիւնների շահը, հողային ունտան և
հարկերը: Մրանից կարելի է եղրականացնել, որ հասարակու-
թեան ոչ բոլոր անդամների ինտերէսները (շահերը) միատեսակ
են. մի մասն ապրում է անհրաժեշտ արժէքով, որի մէջն է նրա
ամբողջ ինտերէսը, միւս մասը ապրում է յաւելեալ արժէքով,
որը նրա համար աշքի լոյսից էլ թանկ է դառնում: Կայ մի ուրիշ

առած էլ, որ ասում է «մարդուս շապիկը իր մարմնին աւելի մօտ է»: Դա նշանակում է, որ մարդս նախ և առաջ իր սեփական ինտերէսի յետերից է ընկնում, ձգում է ամենից առաջ իր սեփական կարիքներին բաւարարութիւն տալ: Եթէ Յովհաննէսը աշխատավարձը, վարձով է ապրում, —նա ձգում է, որպէսզի այդ աշխատավարձը, որքան կարելի է բարձր լինի, և աշխատավարձը ստանայ ամենից առաջ ինքը՝ Յովհաննէսը, և ոչ կարապետը, որը նոյն պէս աշխատավարձով է ապրում: Նոյնպէս է վարւում կարապետը Յովհաննէսի վերաբերմամբ, Պետրոսը կարապետի վերաբերմամբ և այլն: Բայց բոլոր Յովհաննէսներու, կարապետները և Պետրոս ները, եթէ քիչ-շատ խելքերը զլիներին մարդիկ են, չեն կարող չը գիտենալ, որ նրանց աշխատավարձի մեծութիւնը կախւած է ոչ թէ նրանց ձգումներից—ցանկութիւններից, այլ առնասարակ աշխատավարձի մեծութիւնից: Նրանք կարող են իրանց աշխատանքի համար ստանալ միայն այնքան, որքան և աշխատավարձով ապրող միւս բանւորները: Այդ պատճառով, թէև Յովհաննէսը, կարապետը, Պետրոսը իրար վրայ մի քիչ թարս թարս են նոյնում, քանի դեռ չեն գտել որ և է գործ, բայց նրանց ինտերէսը ընդհանուր է, այսինքն այն, որպէս զի աշխատավարձը ընդհանրապէս հնարաւորութեան չափ բարձր լինի: Այն ժամանակ ամեն մ՛կին էլ աւելի մեծ բաժին կընկնի:

Ճիշտ այնպէս էլ դատում են հասարակութեան և այն անգամները, որոնք ապրում են յաւելեալ արժէքով: Նրանց ընդհանուր ինտերէսը կայանում է նրանում, որ բանւորների աշխատանքով ստեղծւած յաւելեալ արժէքը հնարաւորութեան չափ մեծ լինի: Մըրանից երկում է, որ մարդկանց միացնում են նրանց կութերէսները (շահները), որոնք բղխում են արժէքների բաշխումից հասարախնտերէսները (շահները), որոնք բղխում են արժէքների բաշխումից հասարախնտեան մէջ: Եւ համաձայն այն բանին, որ հասարակութեան մէջ արժէքները բաշխում են երկու մեծ բաժինների—անհրաժեշտ արժէք և յաւելեալ արժէք—մարդիկ նոյնպէս միանում են ժամանակակից հասարակութեան մէջ երկու մեծ բաժինների կամ պատասակարգերի շուրջը. անմիջական արդիւնագործողների դաստիարակարգերի գործը, աշխատաւոր դասը, որ ապրում է աշխատավարձով, կարգը, աշխատաւոր դասը, որ ապրում է անմիջական պէս կարգութիւնագործողների աշխատանքով ստեղծւած յաւելեալ կամ արդիւնագործողների աշխատանքով ստեղծւած յաւելեալ արժէքով: Դիտենք աւելի մօտիկից այդ երկու դասերն էլ:

I. Աշխատաւոր դաս: Աշխատաւոր դասի ընդհանուր յատկանիշն այն է, որ նրա անգամները արտադրում են ռոլոր այն արժէքները, որոնցով ապրում է հասարակութիւնը, բայց ստանում են իրանց աշխատանքների համար այդ արժէքների միայն մի մասը—աշխատավարձը, որը հազիւ հերիք է անում նրանց ապրուստի համար: Այդ դասի բոլոր անդամների դրութիւնը ըստ էութեան նոյնն է. բայց պայմանները, որոնց մէջ նրանք գործադրում են իրանց աշխատանքը և արժէքները արտադրում, տարբեր են: Նրանց մի մասը զրկւած է արդիւնագործութեան միջոցներից և «պրօլետարացած», չունենալով ոչինչ բացի իրանց ձեռքերից. միւսները դեռ իսպառ զրկւած չեն արդիւնագործութեան թեան միջոցներից և իրը թէ ինքնուրոյն տնտեսութիւն են վարում: Բայց այստեղ պէտք է էութիւնը արտաքինից զանագանել: Երբ մի քիչ աւելի խորը խնդրին նայես, կր տեսնես, որ արդիւնագործողը, որը բնաւ ոչինչ չունի: Դրա մասին արդէն խօսել ենք նախորդ գլխում: Այստեղ ցոյց էր արըւած, որ և պրօլետարը և արդիւնագործողը, որ դեռ իսպառ զրկւել արդիւնաբերութեան միջոցներից, ստանում են չեն զրկւած արդիւնաբերութեան միջոցներից, աշխատավարձից արդիւնաբերութեան միջոցներից գեռ ոչ բոլորովին զրկւած արդիւնագործողի աշխատավարձը ծածկւած է ինքնուրոյն տնտեսութեան ձեր տակ, ուստի նրա վարձը մենք անւանեցինք քողարկւած աշխատավարձ:

Այժմ մենք պիտի պարզենք, թէ ինչ կապ կայ աշկարայ և քողարկւած աշխատավարձի միջն, և մրքան նրանք աղդում են իրար վրայ: Միայն այն ժամանակ մենք կատարելապէս կը հասկանանք, թէ որքան աշխատավարձի այդ երկու տեսակները կարող են միացնել մի ընդհանուր աշխատաւոր դասի մէջ և արդիւնագործութեան միջոցներից բոլորովին զրկւած արդիւնաբերողներին և արդիւնագործութեան անհրաժեշտ միջոցներից գեռ ըրովներին: Որովհետև մեզանում—Ռուսաստանում—արդիւնաբերութեան միջոցներից ոչ բոլորովին զրկւած

արդիւնագործողների ստւար մեծամասնութիւնը կազմում են գիւղացի հողագործները, ուստի և ոռուսական իրականութեան պարմանները աչքի առաջ ունենալով՝ մենք հարցը պիտի դնենք այսպէս—կարելի է արդեօք ընդունել, որ քաղաքային գործարանային բանտորների շահներ համաձայն են աշխատաւոր գիւղացիութեան բազմմիլիօն մասայի շահների հետ:

Սակաւահողութիւնը, հողի չափազանց բարձր կապալագինը և անասելի հարկերը վերին աստիճանի թշրւառ գրութեան մէջ զցեցին արդիւնաբերող-հողագործների տնտեսութիւնը: Հարկերը և կապալագները վճարելուց յետոյ հողագործը հազար ու մի տանջանքներով կարողանում է մի կերպ իր գոյութիւնը քարշ տալ մինչև նոր բերքը: Ով կարող է, վարում է մի կերպ իր տնտեսութիւնը՝ ոյժերը ներածին չափ. ով չի կարող, թողնում է գիւղը և գնում է ուրիշ տեղ աշխատանք փնտուելու, մեծ մասամբ քաղաք, գործարան: Բայց ցաւն էլ նրա մէջն է, որ քաղաքում գործը հեռիք չի անում գործարանային բոլոր բանւորներին: Կարիքից հալումաշ եղած, ճնշւած ու սոված, անսովոր քաղաքային կեանքին՝ հողագործ-արդիւնաբերողը պատրաստ է վերցնել ինչ զործ էլ լինի և աշխատել ինչ վարձով էլ լինի, միայն թէ ազատի իրան սովամահից: Նրա և քաղաքային բանւորի միջև տեղի է ունենում մրցում: Թարրիկանտը ի հարկէ ձգտում է վարձել «աշխատաւոր ձեռքերը» որքան կարելի է ցածր գնով, և դրա շնորհիւ քաղաքային բանւորների աշխատավարձը անխուսափելիորէն պիտի ընկնի: Բայց բացի աշխատավարձի ընկնելուց աշխատաւոր ձեռքերի մեծ քանակութեամբ գիւղից գալը և ուրիշ տեսակէտից դիպչում է քաղաքային բանւորներին: Բանը նրանումն է, որ գործարանային կեանքին սովոր քաղաքային բանւորները արդէն աւելի կամ պակաս չափով գիտեն իրանց շահները պաշտպանել և իրանց պահանջներով, յաճախ և գործադուլներով պատճառում են բաւականահամար անհանդատութիւն ֆարրիկանտներին, ձգտելով իրանց դրութիւնը բարոքել Քաղաքային բանւորներն աւելի համարձակ, աւելի վճռական քայլեր կանէին, եթէ չը վախենային մի բանից—այն է, որ կապիտալիստը, երբ նեղն ընկաւ, միշտ կարող է փոխարինել նրանց գիւղից եղած աշխատաւորներով: Այսպիսով, հողագործ-արդիւնաբերողների վաթթար գրութիւնը ան-

խուսափելիորէն իջեցնում է աշխատավարձը և ընդհանրապէս վատացնում քաղաքային բանւորների վիճակը: Եթէ կալւածատէրկերը հողի աւելի փոքր կապալագին վերցնէին, եթէ հարկերը այնքան ծանր չը լինէին, հողագործ-արդիւնաբերողները կըստանային աւելի արդիւնք իրանց աշխատանքից և կը կարողանային ապրել և կերակրել մի բերքից մինչև միւս բերքը: Նրանց քողարկած աշխատավարձը հնարաւորութիւն կը տար նրանց ապրելու ձիշտ այնպէս ինչպէս աշխատավարձը հնարաւորութիւնը պահպանելու բանաց գոյութիւնը պահպանելուուր: Բայց որովհետեւ այդ այդպէս չէ, գիւղի արդիւնաբերողները ստիպւած են գնալ քաղաք և այնտեղ ակամայից իջեցնում են պրոլետարների աշխատավարձը: Քողարկած աշխատավարձի մակիրեւոլթի իջնելը անխուսափելիորէն առաջացնում է աշխատավարձի անկումը:

Դժւար չէ նկատել, որ ճիշտ նոյնպէս քօղարկւած աշխատավարձի մակիրեւոյթի բարձրանալը նպաստում է աշխատավարձ աշխատավարձի մակիրեւոյթի բարձրացման: Երբ որևէ պատճառով հողագործ-արդիւնաբերողների գրութիւնը լաւանում է, նրանք մնում են իրանց տեղերում և չեն գնում քաղաք գործ վնասուելու և քաղաքային բանւորների վարձը իջեցնելու: Աշխատաւոր ձեռքերի առաջարկի պակասելու շնորհիւ քաղաքային բանւորների աշխատավարձը պիտի բարձրանայ: Բայց ի այդ, չըվախենալով մրցումից գիւղի արդիւնաբերողների կողմից, որոնց կարիքը քշում էր առաջ գէպի քաղաք, — քաղաքային բանւորները կարող են աւելի հաստատակամ ու վճռական կերպով պաշտպանել իրանց շահները կապիտալիստների դէմ և ստիպել նրանց զիջումներ անելու:

Եթէ այժմ՝ մենք նայենք թէ ինչպէս աշխատավարձը ապկում է քօղարկւածի վրայ, — այդ գէպի ուրում էլ գուրս կը գայ, որ աշխատավարձի բարձրանալը կամ իջնելը պէտք է իր կողմից նպաստի քօղարկւած աշխատավարձի բարձրանալուն կամ իջնելուն: Երբ օրինակ, շնորհիւ կապիտալիստական ձեռնարկների լայնացման, քաղաքային բանւորների աշխատավարձը բարձրանում է, — արդիւնաբերող հողագործներից շատերը թողնում են իրանց տնտեսութիւնները, որոնցից նրանց խէրը միայն հացն ու կւասն է, և գնում քաղաքի գործարանները: Նորինիւ զրան գիւղում հողագործ-արդիւնաբերողների միջն եղած մրցումը թուլանում է, — հողատէրեր-ազաները չեն կարող արդէն նրանց նեղել այնպէս, ինչպէս առաջ, և քօղարկւած աշխատա-

լորձը բարձրանում է: Ընդհակառակը, եթէ գործարանատէրերը շահի յետեկից ընկած արդիւնաբերում են չափազանց մեծ քանակութեամբ ապրանք, որի համար նոյնիսկ գնողներ չըկան, այդ դէպում քաղաքային արդիւնաբերութիւնը կանգ է առնում և աշկարայաց աշխատավարձը իջնում է: Քաղաքի բանւորները, աշխատանք չը գտնելով քաղաքում, չում են զիւղ և այնտեղ առաւել ևս սաստկացնում մըցումը արդիւնաբերող-հողագործների միջն, ինչու և իջնում է նաև քօղարկւած աշխատավարձը. սրանից պարզ է, որ աշկարայ աշխատավարձը սիրո կերպով կապւած է քօղարկւած աշխատավարձի հետ: Զի կարելի տեղահան անել քաղաքի բանւորին, որպէս զի դա անմիջապէս չափէ արդիւնաբերող-հողագործների վրայ և ընդհակառակը: Քաղաքի բանւորի համար ոչ միայն կարեռ է այն, որ նրա աշխատավարձը ըստ կարելոյն բարձր լինի, այլ և այն, որ աշխատաւոր հողագործի վաստակն ևս ըստ հնարաւորութեան բարձր լինի: Նոյնպէս և արդիւնաբերող-հողագործների համար, որոնք ստանում են քօղարկւած աշխատավարձ բաշխման ժամանակ, խիստ կարեռ է, որպէս զի աշկարայ աշխատավարձը որչափ կարելի է բարձր լինի: Մի խօսքով քաղաքի պրօլետարները ինչպէս և աշխատաւոր գիւղացիութիւնը մի ընդհանուր շահ ունի — անհրաժեշտ արժէքի բարձրացում, բարձրացում այն բաժնի, որ ընկնում է արժէքների բաշխման ժամանակ անմիջական արդիւնաբերողների ձեռքը: Այդ ընդհանուր շահը միացնում է քաղաքային բանւորներին և աշխատաւոր գիւղացիներին մի մեծ աշխատաւոր դասի մէջ, աշկարայ կամ քօղարկւած աշխատավարձով ապրող անմիջական արդիւնաբերողների դասի մէջ:

Իսքնըստինքեան հասկանալի է, որ աշխատաւոր դասին են պատկանում մի կողմից արդիւնագործութեան միջոցներից իսպառ կտրւած հողագործ-արդիւնաբերողները — գիւղատնտեսական մշակները կամ, ինչպէս ասում են, հողագործական պրօլետարիատը — միւս կողմից՝ մանր արհեստաւորները, որոնք զեռ բոլորովին զրկւած չեն արդիւնագործութեան միջոցներից, բայց այնուամենայնիւ աշխատաւում են կապիտալիստի համար: Հողագործ-պրօլետարիատի մշակի զրութիւնը ոչնչով չի տարբերութեան միջոցներից գրութիւնը կամ աշխատավարձը: Եւ մէջ կը կարուի աշխատավարձը կամ հողագործը ունի իր աշխատանքը գործադրման համար անհրաժեշտ արդիւնաբերութեան միջոցները, նա ինը իր գործի տէրն է: Հարկերը վճարելուց յետոյ նա ստանում է իր աշխատանքի արդիւնաքը լիովին, այսինքն և անհրաժեշտ արժէքը և տաելեալ արժէքը: Ուստի նրա համար կատարելապէս միենոյն է մեծ է, թէ փոքր աշխատավարձը, մեծ է թէ փոքր յաւելեալ արժէքը, որով ապրում է կապիտալիստ դասը: Միենոյն է նրա համար այդ բոլորը, որովհետև նրա շահը կայանում է նրա սեփական աշխատանքի արդիւնակատութեան կայանում է նրա սեփական աշխատանքի արդիւնաբերութիւնը միջոցներից, բայց այսպէս առաջանային պրօլետարի գրութիւնից: Եւ մէջ կը և միւսը իրանց «աշխատաւոր ձեռքերից» դատ ոչինչ չունեն,

իրկուսն էլ ստանում են աշկարայ աշխատավարձ, — և նրանց գործը պարզ է: Իսկ ինչ վերաբերում է արհեստաւորներին, որոնք բոլորովին դեռ զրկւած չեն արդիւնագործութեան միջոցներից և ստրկացած են կապիտալիստին, — նրանց վիճակը շատ նման է սակաւահող գիւղացիների վիճակին: Նրանք բոլորն էլ, ինչպէս մի քանի անգամ ասել ենք, իրանց աշխատանքի արդիւնքից ստանում են միայն քօղարկւած աշխատավարձ:

Բայց արդիւնագործութեան միջոցներից արդիւնագործութեան միջոցներից դեռ ոչ բոլորովին զրկւած արդիւնաբերողներից, ժամանակակից հասարակութեան մէջ կան սակաւաթիւ արդիւնաբերողներ, որոնք ունեն արդիւնագործութեան միջոցներ և ստրկացած չեն կապիտալիստին: Կան բախտաւոր արհեստաւորներ, որոնք ոչ միայն բոլոր անհրաժեշտ գործիքներն ունեն, այլ ունեն նաև այնքան փող, որ կարող են արհեստասանոց բանալ և հում նիւթ ձեռք բերել: Կան բախտաւոր հողագործ-արդիւնագործներ, որոնք ձեղատ այնքան հող ունեն, որքան նրանք կարող են մշակել: Կան նաև այնպիսի արհեստաւորներ ու հողագործներ, որոնց արդիւնաբերութեան միջոցները աւելի շատ են, քան հարկաւոր է նրանց իրանց աշխատանքը գործադրելու համար: Նրանք աշխատաւում են, «արտադրում են» իրանք, բայց արդիւնագործութեան միջոցների աւելորդից օգտվելու համար, նրանք վարձում են բանւորներ, որոնց նրանք, ի հարկէ, վճարում են սովորական աշխատավարձ: Ի՞նչ տեղ են բոնում նրանք ժամանակակից հասարակութեան մէջ: Ի՞նչ դասի են նրանք պատկանում: Եղբ արհեստաւորը կամ հողագործը ունի իր աշխատանքը գործադրման համար անհրաժեշտ արդիւնաբերութեան միջոցները, նա ինը իր գործի տէրն է: Հարկերը վճարելուց յետոյ նա ստանում է իր աշխատանքի արդիւնաքը լիովին, այսինքն և անհրաժեշտ արժէքը և տաելեալ արժէքը: Ուստի նրա համար կատարելապէս միենոյն է մեծ է, թէ փոքր աշխատավարձը, մեծ է թէ փոքր յաւելեալ արժէքը, որով ապրում է կապիտալիստ դասը: Միենոյն է նրա համար այդ բոլորը, որովհետև նրա շահը կայանում է նրա սեփական աշխատանքի արդիւնաբերութեան կայանում է նրա սեփական աշխատանքի արդիւնաբերութիւնը միջոցներից, բայց այսպէս առաջանային պրօլետարի գրութիւնից: Մակայն թէկ նա կանգնած է յաւելեալ արժէքների վրայ: Մակայն թէկ նա կանգնած է, այսպէս ասած, գասակարգերից դուրս, այնուամենայնիւ նրա է, այսպէս ասած, գասակարգերից դուրս,

շահը նրան պիտի քաշէ աշխատաւոր դասի կողմը: Բանը նրանումն է, որ ժամանակակից հասարակութեան մէջ չափազանց խախուտ է զրութիւնը այդպիսի ինքնուրոյն արդիւնաբերողի, որ ունի նրան անհրաժեշտ արդիւնագործութեան միջոցները: Եթէ նա արհեստաւոր է, նա ստիպւած է դիմանալ մրցման այն մանուքակտուրաների և ֆաբրիկաների կողմից, որոնք արտադրում են ապրանքները աւելի շահաւէտ պայմանների մէջ, քան նա, ուստի և հնարաւորութիւն ունեն նրանց աւելի էժան ծախելու: Ամենաչնչին անուշադրութիւնը կամ դժբախտ պատահարը, չրդեհի կամ հիւսնդութեան նման, գուրս ևն գցում նրան այդպիսի ինքնուրոյն արդիւնաբերողի շատիդից և զրկում նրան իսպառ կամ մասամր արդիւնագործութեան միջոցներից: Նա ընկնում է այն ժամանակ աշխարայ կամ քօլարկւած աշխատավարձ ստացողների շարքը: Նոյն գրութեան մէջ, ինչ որ արհեստաւոր, գտնուում է հողագործը, որ ունի այնքան հող, որքան նրան հարկաւոր է: Նրա գործն էլ հարթ է գնում միայն որոշ ժամանակ, և նրա գլխին շարունակ կախւած է փոխորիկը: Եղաւ անբերուիւթիւն, ընկան անասունները կամ չրդեհեց նրա տունը, և ինքնուրոյն արդիւնաբերողը չի կարողանայ խուսափել «կուլակների» և կալւածատէրի ստրկացումից: Ահա թէ ինչու ինքնուրոյն արդիւնաբերողները, որոնք ունեն արդիւնագործութեան իրանց համար անհրաժեշտ բոլոր միջոցները, երկիւզով ևն նայում կապիտալիստների վրայ: Այս կողմից որևէ բարի բան սպառնուու հիմք չունեն նրանք, ուստի և նրանք բոլորովին շահագրդուած չեն, որպէսզի կապիտալիստները որքան կարելի է լու ապրեն և որքան կարելի է մեծ յաւելեալ արժէք ստանան: Եւ ընդհակառակը: աշխատաւոր դասից այդպիսի ինքնուրոյն արդիւնաբերողները ոչ մի պատճառ չունեն որևէ վաս բան սպառնուու: Թիրես նոյնիսկ նրանք կուղենացին, որպէսզի աշխատաւոր դասը հնարաւորութեան չափ նեղ տեղը գցէր կապիտալիստներին և գէթ մի կերպ նրանց ազան ձեռքերը կարճացնէր: Այդպիտիսով, ուրիմն, արդիւնագործութեան միջոցների կողմից ապահովւած ինքնուրոյն արդիւնաբերողները համաձայն իրանց չափ չեն պատկանամ ոչ աշխատաւոր, ոչ էլ կապիտալիստական դասին: Բայց նրանք աւելի մօտ են աշխատաւոր դասին, որի մէջ նրանք ընկնում են, երբ փոթորիկը պայման գլխին:

Բոլորովին այլ է զրութիւնը այն ինքնուրոյն արդիւնաբերողի, որ աւելի արդիւնագործութեան միջոցներ ունի, քան նարկաւոր է նրան իր աշխատաւոր ոյժերը սպառելու համար: Ինչ վերաբերում է նրա սեփական աշխատանքին, նա որպէս ինքնուրոյն արդիւնաբերող, չի հետաքրքրում բաշխմամբ, որովհետեւ իր աշխատանքի արդիւնը նա չի բաժանում ուրիշի հետ: Բայց նա արդիւնագործութեան աւելորդ միջոցներ ունի և, որպէս զի այլ աւելորդը իզուր տեղը չը կորչի, նա վարձում է բանւորներ: Այստեղ արգէն նա հանդէս է գալիս, որպէս կապիտալիստ, որ զտում է ուրիշի աշխատանքով: Նա վճարում է աշխատավարձ իր բանւորներին և իր գրավանն է դնում նրանց արտադրած յաւելեալ արժէքը: Հասկանալի է, որ նրան աւելի ձեռնուու է, որպէս զի աշխատավարձը հնարաւորին չափ փոքր լինի, իսկ յաւելեալ արժէքը հնարաւորին չափ մեծ: Թէև նա գեռ ինքն էլ է աշխատում, բայց նրա շահը նրան քաշում է ոչ գէպի աշխատաւոր, այլ գէպի կապիտալիստ դասը: Եւ իրաւ հէնց որ նա մի քիչ թեաւորւեց, հէնց որ նրան յաջողւեց իր լծի տակ զցել բաւականաշափ բանւորներ, նա զագարում է այլ ևս աշխատելուց, ուղղնում է իր փորը և գանուու է իսկական կապիտալիստ:

Այսպէս է տեղի ունենում ժամանակակից հասարակութեան մէջ մի կողմից ինքնուրոյն արդիւնաբերողների փոխարինումը արդիւնագործութեան միջոցներից զեռ ոչ բոլորովին զրկւած արդիւնաբերողներով և պրօետարաններով, միւս կողմից՝ կապիտալիստներով: Մենք զեռ կը վերապառնք կապիտալիստական հասարակութեան զարգացման օրէնքի և հողային հարցի մասին:

Ու կապիտալիստ դասը: — Անցնենք այժմ կապիտալիստ դասի քննութեան: Ինչպէս և աշխատաւոր դասը, նա բաղկացած է էռթեամբ միատեսակ, բայց արտաքինով տարբեր խաւերից: Նրանք էլ ապրում են աշխատաւոր դասի ստեղծած յաւելեալ արժէքով, նրանք բոլորն էլ միանում են մի ընդհանուր շահով: — մեծացնել որքան կարելի է յաւելեալ արժէքը ի վեաս անհրաժեշտ արժէքի, ի վեաս աշխատավարձի, որ ընկնում է աշխատաւոր դասի ձեռքը: Սակայն յաւելեալ արժէքի բաշխման մօմենտում այդ խաւերից իւրաքանչիւրը ձգտում է իւրացնել որքան կարելի է մեծ քաժին և բոլոր կապիտալիստական խաւերի մէջ տեղի

ունի մշտական ներքին պայքար: Եղբայրական և սրտաշարժ սի-
աբանութիւն են ցոյց տալիս նրանք միայն այն ժամանակ, երբ
գործը վերաբերում է նրանց ընդհանուր շահին—յաւելեալ արժեքի
մեծացմանը ի վես անհրաժեշտ արժեքի:

Մենք արդէն գիտենք, որ ժամանակակից հասարակութեան
մէջ յաւելեալ արժեքը բաշխուում է հետեւեալ հինգ գլխաւոր մա-
սերի—փողային կապիտալի շահ, ձեռնարկողական շահ, առևտքա-
կան կապիտալի շահ, հողային ոչնտա և հարկեր: Յաւելեալ ար-
ժեքի այդ բաշխման համապատասխանում են հինգ գլխաւոր խա-
ւերը կապիտալիստ դասի մէջ—բանկիրներ, ձեռնարկողներ, վաճա-
ռականներ, կալւծատէրեր և կառավարութիւն (և ամեն տեսակի
վարչութիւն): Հատկանալի է, որ խիստ սահմանագծում այդ խա-
ւերի մէջ չըկայ, բանկիրը կարող է իր կապիտալի որ և է մասով
որ և է արդիւնագործական ձեռնարկութիւն պահել, իսկ ձեզնար-
կողը կարող է իր ազատ կապիտալի մի մասը գցել բանկը տո-
կոսով և այլն: Բայց ընդհանուր առմամբ այդ խաւերը գոյութիւն
ունին և եթէ նրանց ընդհանուր շահը մէկ է, նրանց մասնաւոր շահները
ընդհարում են իրար հետ:

Կապիտալիստ զափ մէջ տեսի ունեցող ներքին կոփւր:—Երբ բան-
կիրը՝ տալիս է իր փողային կապիտալը ձեռնարկողին որ և է
կապիտալիստական ձեռնարկութիւն ստեղծելու կամ պահպանելու
համար, նաև ձգտում է նրանից հնարաւորին չափ մեծ տոկոս
ստանալ և գրանով պակասեցնել իր պարտապանի ձեռնարկողա-
կան շահը: Իր կողմից՝ ձեռնարկողը ձգտում է վճարել հնարաւո-
րին չափ փոքր տոկոս իր փոխ առած փողերի շամար և դրանով
մեծացնել ձեռնարկողական շահը ի հաշիւ փողային կապիտալի
շահի: Ճիշտ նոյնպէս, ձեռնարկող—Փարբիկաների և զաւօդների
մասնաւոր ինտերէսը չի հաշտում հողատէրերի մասնաւոր ինտերէս-
ների հետ: Հողատէրը ձգտում է ամեն կերպ բարձրացնել հողա-
յին ռենտան: Իսկ մենք արդէն տեսանք նախորդ գլխում, որ
արսօլիւտ հողային ռենտան անխուսափելիօրէն առաջնում է
հողագործական արդիւնքների գների բարձրացում: Երբ Փարբի-
կանտը իր Փարբիկայում բանւորներին գործի է գնում, նա նը-
րանց աշխատանքի համար վճարում է աշխատավարձ: Այդ աշ-
խատավարձը պիտի հերիք անի բանւորների և նրանց ընտանիք-
ների ապրուստի համար: Եւ որովհետեւ այդ ապրուստի ամենա-

գլխաւոր մասը ուտելիքն է, ուստի որքան աւելի թանգ են հո-
ղագործական արդիւնքները, այնքան աւելի բարձր է աշխատա-
վարձը, անհրաժեշտ արժեքը, այնքան աւելի փոքր է յաւելեալ
արժեքը, որից ստանում է կապիտալիստը իր շահը: Այսպիսով,
հողի մասնաւոր սեփականութեան շնորհիւ, կալւծատէրը անուղ-
ղակի կերպով ձեռնարկողի շահի մի մասի տէրն է գառ-
նում: Բայց ինքը ձեռնարկողը գուրս է քաշում իր շահը
այն բանւորներից, որոնք աշխատում են նրա մօտ գործա-
րանում: Դուրս է գալիս ուրեմն, որ այդ շահի մի մասը նրանից
խլող հողատէրապան իւրացնում է այն գործարանային բանւորնե-
րի չը վարձատրւած աշխատանքը, որոնց նա իր աշքով անգամ
տեսած չէ և որոնց գոյութնան մասին գուցէ նա երբէք էլ մտա-
ծած չէ: Այս թէ ինչպէս է արտայայտում արդիւնագործութեան
և բաշխման հասարակական էութիւնը:

III. Կառավարութիւնը:—Մասնաւոր շահերը կառավարութեան,
որ ամբողջ երկրի ղեկը իր ձեռքումն է պահում, նոյնպէս ոչ ամեն
բանում համապատասխանում են կապիտալիստ դասի ուրեշ խաւերի
մասնաւոր շահներին: Ինչպէս և ամբողջ գասին, որին նա պատկա-
նում է, կառավարութեան հարկաւոր է, որպէսզի յաւելեալ արժեքը
որքան կարելի է մեծ լինի: Բայց գրա հետ միասին կառավարու-
թիւնը ձգտում է այդ յաւելեալ արժեքի մեծագոյն մասը իր ձեռ-
քը գցել և ոչ ձեռնարկողների կամ հողատէրների: Որովհետև պե-
տական ամբողջ մեքենայի ղեկը կառավարութեան ձեռքումն է
անբաժան կերպով, ուստի և նա կարող է յաւելեալ արժեքից ի-
րան առիւծի բաժին հանել—մարզու իր օգուտն է փնտում: Այդ
նա կարող է անել և ուղղակի և անուղղակի հարկերի միջոցով:
Երբ կառավարութիւնը հարկ է վերցնում կապիտալիստների գոյ-
քից կամ հկամուտից, նա դրանով ուղղակի իւրացնում է յաւելեալ
արժեքի այն մասը, որ անցնելով նրանց ձեռքից, սակայն նրանց
ձեռքում ամբողջովին չը մնաց: Իսկ երբ նա վերցնում է անուղղա-
կի հարկեր, այսինքն երբ հարկեր է նշանակում սպառման առար-
կաների վրայ—թէլի, շաբարի, ծխախոտի, աղի, սպիրտային խը-
միչքների և այլոց վրայ, դրանով նա առաջ է բերում սպառման

Բայց ալդ բարձրացումից օգտառում են ոչ թէ բանւորները, այլ կառավարութիւնը: Ուրիշ խօսքով, անուղղակի հարկերը—գա այն ոլործուն ճանապարհն է, որով կառավարութիւնը խլում է յաւելեալ արժէքի մի մասն էլ: Ահա թէ ինչու ձեսնարկող տարրը ոչ ամեն ժամանակ հաշտ է կառավարութեան հետ:

Բայց կառավարութեան հկամուտը բղիսում է ոչ միայն յաւելեալ արժէքից: Երբ մարդ մտածում է մի կողմից՝ աշխատաւոր գիւղացիութեան թշւառ ու կիսաքաղց կեանքի մասին, միւս կողմից՝ նրանց վճարած հարկերի հակայտան մեծութեան մասին,—կասկած չի կարող լինել, որ կառավարութիւնը կլանում է ոչ միայն աշխատաւոր գասի ստեղծած յաւելեալ արժէքի, այլ և անհրաժեշտ արժէքի մի մասը:

Կառավարութեան գաստրաբային բնոյթը:—Թէև կառավարութեան մասնաւոր շահերը ոչ միշտ են համապատասխանում յաւելեալ արժէքով ապրող այլ խաւերի շահերին, սակայն նա միշտ հաւատութիւն է մնում կապիտալիստական գասի ընդհանուր շահին, որովհետեւ հէնց ինքը յաւելեալ արժէքով ապրողների արիւնից ու մարմնից է ստեղծած, որովհետեւ նա ինքը կապիտալիստական գասի մի մասն է կազմում: Կառավարութիւնը պատկանում է կապիտալիստական գասին ոչ միայն այն պատճառով, որ նա ստանում է յաւելեալ արժէքի մի մասը, այլ և, այն պատճառով, որ նա կառավարում է պետական կայքերը սեփականատիրոջ իրաւունքներով և վարում է իր գործը կապիտալիստական ձեռք: Պետական ֆարբիկաներում և դաւոդներում, պետութեան պատկանող երկաթուղիների գծերի ամբողջ ցանցի վրայ և այլն, բանւորները ստանում են նոյնպիսի աշխատավարձ, ինչպէս և մասնաւոր կապիտալիստական ձեսնարկութիւնների մէջ, իոկ նրանց ստեղծած յաւելեալ արժէքը ընկնում է կառավարութեան ձեռքը: Պետական հողերից օգտական համար գիւղացիները վճարում են գանձարանին նոյնպիսի կապալագին, ինչպէս և կալւածատէրագաներին: Մի խօսքով, ժամանակակից հասարակութեան մէջ կառավարութիւնը ամենախոշոր կապիտալիստական ոյժն է: Թէև նա գոյութիւն ունի իրը թէ ամբողջ հասարակութեան գործերը վարելու համար, սակայն նա պաշտպանում է և կարող է պաշտպանել միայն իր գասի շահերը, կապիտալիստա-

կան շահերը: Այլապէս նա կը գագարէր գոյութիւն ունենալուց այն ձեռք, ինչ ձեռք որ նա գոյութիւն ունի այժմ:

Երեակայենք մի բոպէ, որ կապիտալիստներից մէկը ստեղծեց մի ձեռնարկութիւն և սկսեց մտածել ոչ թէ իր շահերի, ոչ թէ յաւելեալ արժէքի բարձրացման մասին, այլ բացառապէս բանւորների շահերի մասին—ամեն կերպ ձգտեց նրանց աշխատավարձը բարձրացնել և կրծատել աշխատաւոր օրը: Իր այդ բարեգործութեան և բարեհոգութեան համար գուցէ նա իր մահից յետոյ դրախտին արժանանարկութեալ որպէս կապիտալիստին արդիւնաբերութեան էութիւնը կայտնում է հէնց բանւորներից յաւելեալ արժէքը գուրս բաշելու մէջ: Ճիշտ այնպէս, եթէ կառավարութիւնը մարդավարի մտածէր ծառայելու ամբողջ հասարակութեան և ոչ կապիտալիստ գասի շահերին,—այդ գէպում նա պիտի ստիպւած լինէր պետական ֆաբրիկաներում և գաւոզներում տալբանւորներին նրանց աշխատանքի ամբողջ արդիւնըը, պետական հոգերը յանձնել գիւղացիներին հաւասար հողաշահութեան սկզբունքով, անել այնպէս, որպէսզի հարկերը բացառապէս աշխատաւոր գասից խլւած յաւելեալ արժէքի մի մասը չը լինէին, այլ որպէսզի և ներկայ կապիտալիստները տային իրանց և ոչ թէ ուրիշի աշխատանքի մի մասը հասարակական սպառողների կարիքներին բաւարարութիւն տալու համար: Սակայն այդբոլորը հնարաւոր կը լինէր միայն այն ժամանակ, երբ և ինքը հասարակութիւնը լինէր ոչ թէ դասակարգային, ինչպէս այժմ, այլ աշխատաւոր: Այդ այդպէս էլ կը լինի, երբ սօցիալիստական կարգերը կը փոխարինեն կապիտալիստական կարգերը: Իսկ ժամանակակիցից դասակարգային հասարակութեան մէջ կառավարութիւնը կարող է լինել միայն գասակարգային և պաշտպանել միայն այն գասի շահերը, որին ինքը պատկանում է իր էութեամբ, այսինքն կապիտալիստ գասի շահերը:

Այսպիսով, արդիւնաբերութեան միջոցներից զրկելով և դրանեալ կապւած՝ արժէքների բաշխման ձեր անխուսափելիօրէն առաջ է բերում հասարակութեան գասակարգային կազմածքը և դասակարգային կառավարութիւնը:

Բացի վերոյիշեալ խաւերից, աշխատաւոր և կապիտալիստական գասերից ժամանակակից հասարակութեան մէջ գոյու-

թիւն ունի մի ուրիշ խաւ էլ, որի նշանակութիւնը հասարակական կեանքում չափազանց մեծ է:

IV. Ինտելիգենցիա:—Մեր խօսքը ինտելիգենցիայի մասին է, որի ստւար մէծամասնութիւնը ապրում է մտաւոր աշխատանքով: Ո՞ր դասին է պատկանում ինտելիգենցիան՝ աշխատաւոր, թէ կալիտալիստական: Այս հարցին պատասխանելու համար ինտելիգենցիայի վերաբերմաքը էլ մենք պէտք է գործադրենք նոյն չափը, որը մենք գործադրեցինք ժամանակից հասարակութեան այլ խաւերի նկատմամբ: Ո՞րտեղ պէտք է վնասուի ինտելիգենցիայի ինտերէսը, ո՞րտեղից է նա ստանում իր կարիքներին բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ արժէքները: Եթէ մակերևոյթօրէն դատելու չը լինենք, այլ աւելի խորը կերպով աշխատենք ըմբռնել ինտելիգենցիայի գրութիւնը, կարող կը լինենք ասել, որ նա ընդհանրապէս բազկացած է երեք մասերից, որոնցից մէկը միանում է աշխատաւոր դասին, միւսը՝ կապիտալիստական դասին, իսկ երկրորդ մասը ապագասակարգային կամ դասակարգադուրս է:

Աշխատաւոր ինտելիգենցիան:—Աշխատավարձով ապրող անմիջական արդիւնագործողի պահանջները չեն սահմանափակում միայն կերակրով, շորերով, բնակարանով և այլն, այսինքն առարկաներով, որոնց շնորհիւ հասարակութեան մէջ տիրող աշխատանքի բաժանման—արտադրում են նրա համար ուրիշ արդիւնագործողներ: Նրան հարկաւոր է քժկւել, երբ նա հիւանդէ, նա ուզում է գիրք կամ լրագիր կարդալ, երբ ժամանակ ունի նրա երեխաները պէտք է սովորեն դպրոցում: Նրա այդ բոլոր կարիքները հոգում է ինտելիգենցիան—բժիշկները, գրողները, ուսուցիչները, որոնք ստանում են նրանից որոշ վարձ իրանց մտաւոր աշխատանքի համար: Ինընըստինքեան հասկանուի է, որ նրա աշխատավարձը պիտի հնրիք լինի այդ ծախսերի համար էլ: Ի՞նչպիսի գրութեան մէջ են գտնուում մտաւոր աշխատանքի այդ ներկայացուցիչները անմիջական արդիւնագործողի վերաբերմամբ:

Նրանք տալիս են նրան իրանց աշխատանքը նրա կարիքները հոգալու համար և ստանում են նրանից զրա փոխարէն նրա աշխատավարձի մի մասը: Նրա վերաբերմամբ բժիշկը, ուսուցիչ և այլք գտնուում են նոյն գրութեան մէջ, ինչպէս և արդիւնագործները, որոնք աշխատանքի բաժանման շնորհիւ մտա-

կարարում են նրան շորեր, կօշիկներ և այլն: Նրա աշխատավարձի որոշ մասի փոխարէն ինտելիգենցիան իր աշխատանքով հոգում է աշխատաւոր դասի կարիքները, նա ապրում է ի հաշիւ անհրաժեշտ արժէքի, ուստի եւ նրա շահերը լիովին ձուլում են աշխատաւոր դասի շահերի նևու:

Եթէ, օրինակ, մի կողմ դնենք գաղափարական և բարոյական բնոյթ ունեցող մտահաշիւները և խնդրին նայենք միայն ինտերէսի տեսակէտից, —այդ գէպքում նոյնիսկ ինձ աշխատաւոր դասի համար այս տողերը գրողիս մեռնրուու է, որպէսզի և աշկարայ և քողարկւած աշխատավարձը որբան կարելի է բարձր լինի: Որքան աւելի բարձր կը լինի աշխատավարձը, այնքան աւելի մեծ չափով բանւորները և գիւղացիները հնարաւորութիւն կունենան գնելու իմ այս գրքոյկը, այնքան աւելի ես կըստանամ իմ աշխատանքի համար: Այդ պատճառով իմ աշխատավարձը ամենասերտ կերպով կապւած է աշխատաւոր դասի աշխատավարձի հետ և իմ ինտերէսը հակառակ է, կապիտալիստ դասի ինտելիգենցին: Ճիշտ նոյն գրութեան մէջ են գտնուում և այն բոլոր ինտելիգենտները, որոնք աշխատավարձ են աշխատաւոր դասի համար: Այն, որ ինտելիգենտ աշխատանքը վարձատրուում է շատ աւելի չաւ, քան հասարակ աշխատանքը, —դա բնաւ չի փոխում գործի էութիւնը: Մենք արդէն գիտենք (Մաս I, գլ. VII), որ բարդ աշխատանքը աւելի բարձր է գնահատուում, քան հասարակը: Որքան աւելի սովորած լինի աշխատաւորը, այնքան աւելի արժէք ունի նրա աշխատավարձը, իսկ ինտելիգենտը շատ և շատ սովորած պէտք է լինի, նախ քան նա հնարաւորութիւն ունենայ իր գործը լաւ կատարել:

Կապիտալիստական ինտելիգենցիան:—Բայց ոչ ամբողջ ինտելիգենցիան փոխանակում է իր աշխատանքը աշխատաւոր դասի հետ, ապրում է ի հաշիւ աշխատավարձի և այդ պատճառով պատկանում աշխատաւոր դասին: Ինտելիգենցիայի նշանաւոր մասը ծառայեցնուում է իր մտաւոր աշխատանքը կապիտալին և կապիտալիստներին, իր եկամուտը նա ստանում է ոչ թէ անհրաժեշտ, այլ յաւելեալ արժէքից, ուստի և նրա շահերը կապւած են ոչ աշխատաւոր, այլ կապիտալիստական դասի շահերի հետ:

Կապիտալիստական ձեռնարկութիւնների մէջ ծառայում է վարձու ինտելիգենտների մի ամբողջ բանակ, որը գլխաւորապէս զեկավարում է ամբողջ գործն այնպէս, որ կապիտալիստը կարող է ստանալ եկամուտը իր ձեռնարկութիւնից, ապրելով շատ և շատ հեռու այն տեղից, որտեղ դանւում է նրա գործը:

Ինտելիգենտների այդ ամբողջ բանակի աշխատանքը՝ սկսած մի որ և է «կասավարչից» և վերջացրած ամենայետին «կօնտօր շչիկով»՝ աւելի կամ պակաս չափով հարկաւոր է արդիւնաբերութեան զեկավարման համար: Բայց նրանց իրանց՝ աշխատանքի համար ստացած սոճիկը ոչ մի ուղղակի կապ չունի աշխատաւոր դասի աշխատավարձի հետ: Աւելի շուտ ընդհակառակը: Կապիտալիստը իր ծառայողներին վճարում է այնքան աւելի մեծ սոճիկ, որքան աւելի լաւ են գնում նրա գործերը, որքան աւելի մեծ է նրա իր ձեռնարկութիւնից ստացած շահը: Իսկ նրա շահը այնքան աւելի մեծ կը լինի, որքան աւելի փոքր է նրա բանուրների աշխատավարձը: Ուստի կապիտալիստական ձեռնարկութիւնների մէջ աշխատող ինտելիգենցիայի ինտերէսը պահանջում է, որպէսզի կապիտալիստի շահը որքան կարելի է մեծ լինի, իսկ աշխատավարձը որքան կարելի է փոքր: Թէև ինտելիգենցիայի այս մասը նոյնպէս ապրում է «իր մտաւոր աշխատանքով», բայց համաձայն իր շահերին նա պատկանում է կապիտալիստական և ոչ աշխատաւոր դասին: Այդ երկում է հէնց նրանից, որ, երբ բանուրների և գործատէրների միջն ընդհարութներ են տեղի ունենում, կապիտալիստական ձեռնարկութիւնների մէջ ապրող ինտելիգենցիան համարեա միշտ անցնում է գործատէրների և ոչ բանուրների կողմը:

Կապիտալիստական դասին պատկանում է իր էրւթեամբ նաև ինտելիգենտ պաշտօնեաների այն ստաւը բանակը, որոնցից բաղկացած է կառավարութիւնը:

Ապագասակարգային (գասակարգադրս) ինտելիգենցիան:—Աշխատաւոր և կապիտալիստական ինտելիգենցիայից ջոկ կայ մի փոքրաթիւ խաւ էլ, որը չի պատկանում որ և է զասակարգի:

Դա գիտնականների և փիլիսոփաների խաւն է, որոնց պարագմունքը կայանում է մարդկային գիտութիւնը նրա բոլոր ճիւղերում գարգացնելու մէջ: Երանց աշխատանքը չի ծառայում ան-

միջապէս ոչ կապիտալիստական և ոչ էլ աշխատաւոր դասին: Նըանց աշխատանքի արդիւնքները—գիտական հետազոտութիւնները, գրական երկերը և այլն, էպում են, ինչպէս և արդիւնագործութեան միջոցները, ամբողջ հասարակութեան անխորտակելի հարստութիւնը և անցնում են, ինչպէս և կեանքը, մի սերնդից միւսին: Եթէ մենք արդիւնագործութեան միջոցները վերևում անւանեցինք հասարակութեան նիւթական հարստութիւնը, —ինտելիգենցիայի այս մասի մտաւոր աշխատանքի արդիւնքը, որ աճում է սերնդից՝ սերունդ, մենք պէտք է անւանենք հասարակութեան նոգեսր հարստութիւնը: Հասարակութեան նիւթական և հոգեսր հարստութիւնները միասին վերցրուծ կազմում են այն, որ կոչւում է հասարակութեան կուլտուրան:

Բաշխման մասին գրւած գլխում մենք յայտնեցինք այն միտքը, որ արժէքների այն մասը, որ գնում է արդիւնագործութեան միջոցները և գործիքները կանոնաւոր գրութեան մէջ պահպանելու համար, կազմում է ամբողջ հասարակութեան ծախսը: Ուստի և արժէքի այդ մասի գործադրութիւնը առաջ չի բերում գասակարգային նիւթեանընթեր: Ամբողջ հասարակութեան նոյնպէսի ծախս—ապագասակարգային ծախս պէտք է հաշւել արժէքների այն մասը, որ գնում է գիտնականների, փիլիսոփանների, զրոգների և այլոց համար և նրանց «արդիւնագործութեան միջոցների», այսինքն լաբարատորների, թանգարանների, գրադարանների և այլ բաների համար: Ինչ չափով որ ինտելիգենցիայի այս մասը չի գնում իր առաջ գասակարգային նպատակներ, ինչ չափով որ նա ձգտում է զարգացնել, հարստացնել գիտութիւնը ընդհանրապէս, —նոյն չափով նա ապագասակարգային է և ծառայում է ամբողջ հասարակութեան: Գիտնականների և փիլիսոփանների մասին յաճախ առում են, որ նրանք այս աշխարհից չեն: Այդ ցոյց է աալիս, որ և այստեղ, ինչպէս և շատ ուրիշ զէպքերում, մարդկային առողջ դատողութիւնը շատ ճիշտ կերպով ընդգծել է բարձրագոյն ինտելիգենցիայի էութիւնը, նրա ապագասակարգային բնոյթը:

Միջին խաւեր: —Հասկանալի բան է, որ ոչ միայն դժւար է, այլ և ուղղակի անհնար է գծել պարզ ու խիստ տարբերութիւն ինչպէս մի զարդ զանազան խաւերի միջն, այնքան և իրանց դասերի միջն: Ըստ երեցին ինչ կայ աւելի պարզ, քան ցերեկւայ և գիշերւայ հասկացողութիւնները: Բայց և նրանց միջն անհնար

է անցկացնել մի որոշ սահման և ցոյց տալ թէ որտեղ է վերջաշնուր ցերեկը և որտեղ սկսում գիշերը, կամ ընդհակառակը, որովհետև ցերեկը հետզինամում է իրիկնամուս և գիշեր, իսկ գիշերը հետզինամում է արշալոյս և ցերեկ: Իրիկնամուտը և արշալոյսը միջին երեսիթներ են: Բայց չընայած այդ միջին երեսիթներին ցերեկը և գիշերը գոյութիւն ունեն, որպէս կատարելապէս որոշ հասկացողութիւններ: Ճիշտ նոյնը կարելի է ասել և հասարակական դասերի և դասային խաւերի մասին: Դասերի միջն գոյութիւն ունեն միջին դասեր, խաւերի միջն՝ միջին խաւեր: Բայց դասերը և խաւերը դոյութիւն ունեն ժամանակակից հասարակութեան մէջ և ճանաչել նրանց ընդհանուր գծերը բնաւ դժւար բան չէ, եթէ գիտենալ թէ ինչ և ինչպէս մարդիկ կազմում են դասեր: Չը պէտք է սակայն մոռանալ, որ եթէ ինտերէսը (շահը) ներկայացնում է մարդկային կեանքի նիմնական շարժից, այնուամենայնիւ միայն հացով չէ, որ ապրում է մարդու Մարդու բացի ինտերէսից ունի բանականութիւն և խիզճ: Բանականութիւնը օգնում է նրան ճանաչել իրերի խսկական գրութիւնը, խիզճը ստիպում է նրան յաճախ հակառակ իր սեփական շահին կատարել այն, ինչ բանականութիւնը ընդունում է որպէս արդար մի բան: Որ մարդիկ ոչ միշտ ղեկավարում են իրանց անձնական ինտերէսով, ցոյց է տալիս թէկուզ այն հանգամանքը, որ անընլիրութիւնը յաճախ է պատահում կեանքում: Մարդու ընկնում է ջուրը խեղդողին ազատելու համար կամ մըտնում է հրդեհուղ տունը բոցերի միջից դուրս բերելու անօգնական երեխաներին կամ ծերերին: Ընտանիքով ծանրաբեռնած բանուրը կամ հողագործը, որ հազիւ հազ կարողանում է ծայրը ծայրին հասցնել, վերցնում է իր մօտ պահելու և սնելու անտեր, անտիրական որբերին և այլն և այլն: Մեզանից իւրաքանչիւրը տեսած կը լինի և գիտէ կամաւոր եւ գիտակցական անձնազոհութեան այդպիսի գէպքեր: Այստեղ աւելորդ է խօսել զինուրների հարկագրւած անձնազոհութեան մասին, որոնք իրանք ել չը գիտեն թէ ինչի համար և ինչու են գնում մեռնելու, թէն նրանց մէջն էլ կան և այնպիսիները, որոնք իրանց դուրս դառնութիւնը բաղցրացնում են այն մտքով, որ նրանք իբր մեռնում են «հաւատի, թագաւորի և հայրենիքի համար»:

Որքան աւելի հարաւորութիւն է տրւած մարդկային, ան-

հատին զարգացնելու իր մտաւոր և բարոյական կողմերը, այնքան աւելի նրա մէջ բանականութիւնը և խիզճը յաղթող են հանդիսանում անձնական և դասային ինտերէսի վերաբերմամբ: Իսկ որովհետև բախտի բերմամբ ինտելիգենցիային աւելի քան որևէ մէկին հնարաւորութիւն է տրւած զարգացնելու իր անհատականութիւնը, ուստի և նրա մէջ աւելի յաճախ են պատահում անձնական և դասային շահերից հրաժարելու գէպքեր: Այդ պատճառով մենք տեսնում ենք, որ ուսական ինտելիգենցիան իր գոյութիւնն օրից հանդէս է բերել մարդկանց, որոնք կւել են ոչ թէ իրանց անձնական շահերի համար, այլ այն բանի համար, որ նրանք ճանաչել են արդար: Երբ ժողովրդի ամենամեծ շարիքը ճորտային իրաւունքն էր, կալւածատիրական խաւեց գուրս եկած ինտելիգենցիայի ամենալաւ մասը պայցքարում էր ճորտային իրաւունքի գէմ: Երբ նա հասկացաւ, որ բոլոր չարիքները ըրդիսում են արդիւնագործութեան և բաշխման կապիտալիստական ձերց, նա պայցքարում է ժամանակակից կապիտալիստական կարգերի գէմ:

Ծանր պայմանների մէջ ստիպւած էր ինտելիգենցիան մղել իր կսիւը յանուն ճշմարտութեան և արդարութեան: Տասներեկ տարիների ընթացքում նա իր ուսերի վրայ մենակ տանում էր այդ սպանիչ կսիւը թշնամու գէմ, որ թւում էր անյազթելի, որովհետև աշխատաւոր դասը չէր գիտակցում իր շահերը և չէր օգնում նրան: Մէկը միւսի յետեկից ընկնում էին նրա շարքերը, բայց նորից և նորից հանդէս էին գալիս արդարութեան մարտընչողները, արհամարհելով մահը և տանջանքները: Ռուսական ինտելիգենցիայի դարեւոր տիսուր ճանապարհը փայլում է նրա ամենալաւ ներկայացուցիչների ուկորներով, մարդկանց, որոնք նահատակւեցին ոչ իրանց անձնական կամ դասային շահերի, այլ աշխատաւոր ժողովրդի շահերի համար: Նրա առաջին և մօտակայն պատակը իւրագործւած է—աշխատաւոր դասը սկսում է գիտակցել իրան և պայցքարել իր դասային շահերի համար: Այդ բաւական մեծ գործ է, բայց դա ոչինչ է համեմատած այն գործի հետ, որ գեռ հարկաւոր է կատարել: Առաջիկայ այդ ծանր աշխատանքի մէջ մեծ ծառայութիւն պիտի մատուցանեն աշխատաւոր դասին աշխատաւոր ինտելիգենցիայի փորձը, գիտութիւնը և անձնիրութիւնը:

Ահա թէ ինչու մենք չենք կարող առանց կսկիծի և տիրութեան նայել այն փորձերի վրայ, որ անում են աշխատաւոր դասի մանկամիտ բարեկամները, ձգտելով գցել կասկածի և կռւէ սերմերը աշխատաւոր դասի և աշխատաւոր ինտելիգենցիալի միջն: Այժմ, երբ աշխատաւոր դասը և աշխատաւոր ինտելիգենցիան մործում են միացած, որպէս մի ամբողջութիւն,—կուրը նրանց մէջ ձեռլնտու կը լինէր միայն թշնամիներին և շատ հեռուն կը յետաձէր արդարութեան յաղթանակը: Աշխատաւոր դասի գործը արդար գործ է, և աշխատաւոր մարդը պէտք է արդարացի լինի ոչ միայն իր բարեկամների, այլև իր թշնամիների վնարերմամբ: Երբ նա լուսմ է յարձակութենք ինտելիգենցիայի վրայ, թող նա չենթարկելի իսկոյն վատ զգացմունքների, այլ թող մտածէ կարգին և խղճով որոշէ, թէ արդեօք աշխատաւոր դասը պէտք է հրաժարւի ինտելիգենցիայի յետագայ ծառայութիւնից, ինտելիգենցիայի, որը այնքան է արել նրա դասակարգային ինքնագիտակցութեան զարգացման համար,—թէ ոչ: Իսկ որ զլխաւորն է, նա չը պէտք է մոռանայ, որ չի կարելի կապիտալիստական ինտելիգենցիայի մեղքերը աշխատաւոր ինտելիգենցիայի զգին փաթաթել այնպէս, ինչպէս չի կարելի աշխատաւոր ինտելիգենցիայի ծառայութիւններով պարզերս անել կապիտալիստական ինտելիգենցիան: Դասակարգային չափը այստեղ էլ պիտի գործադրւի ամբողջութեամբ:

Դասերի կոիւր:—Վերեւում մենք ասացինք, որ մայրքնութիւնը տւել է մարդու, ինչպէս և ամեն մի կենդանի արարածի, կարիքներ, որոնց բաւարարութիւն տալը կազմում է նրա կեանքի հիմնական ինտելիգենցիան:

Այդ կարիքների բաւարարութիւնը ինքնիրեն չի տեղի ունենում—նրան ստանալու համար, հարկաւոր է գործել: Ձգտելով նախ և առաջ իր սեփական կարիքներին բաւարարութիւն տալ, իւրաքանչիւր կենդանի արարած անխուսափելիօրէն ընդհարուում է ուրիշ կենդանի արարածների հետ, որոնք նոյն նպատակի յետեւից են ընկած: Նրանց բոլորի միջն տեղի ունի զոյսւթեան անընդհատ կախու, որի մէջ կենդանի են մուռում միայն այն արարածները, որոնք ամենից աւելի լաւ կարող են յարմարւել կեանքի պայմաններին: Բազէների տեսակը, օրինակ, կերակրուում է մանրիկ անտուային թռչուններով: Հենց այն պատճառով, որ նրանք

մանրիկ անտառային թռչուններ են, նրանք չեն կարող գիմաղբել բաղեսերի ճանկերին: Եւ ամեն տեսակ մանրիկ թռչունների գործը անտառնելի կը լինէր, եթէ նրանք ընդունակ չը լինէին յարմարւելու իրենց ցաւոտ դրութեան: Ճիշտ է, նրանք չեն կարող կռւէլ բաղել հետ ոյժով, բայց նրանք կարող են սովորել լաւ թագնւել մայառուտներում, ազատւել արագ թռչումով և այն: Պարզ է, որ կենդանի կը մնան և կամեն միայն անտառային թըռչունների այն անսակները, որոնք ամենից յաջող են կատարում այդ բոլորը: Դիտական լեզով ասած, զոյսւթեան կոիւր նպաստում է ամենից յարմարւող տեսակների կենդանի մնալուն:

Գոյութեան այդ անբնդհատ կոիւր տեղի ունի ամբողջ կենդանական աշխարհում, նա տեղի ունի նաև մարդկանց մէջ: Երբ մարդիկ ապրում են առանձին-առանձին իրանց վայրենի զըռւթեան մէջ, նրանք կոիւր են մղում իրանց զոյսւթեան համար ոչ միայն շրջապատող զափանների, այլ և իրար հետ: Երբ փորս դատարկ վայրենին հանդիպում է մի ուրիշ վայրենու, որը տանում է իր սպանած կենդանուն,—ամենից առաջ նրա մէջ ծագում է ցանկութիւն յարձակել իր եղրօր վրայ և խղել նրանից որսը: Եւ եթէ միայն կարող է նա, իրագործում է իր ցանկութիւնը: Իր կողմից՝ աւելի բախտաւոր վայրենին կը պաշտպանէ իր որսը, և երկու վայրենիների մէջ կը ծագի կոիւր: Բայց նրանց կոիւր անհատական կը լինի, որովհետեւ վայրենիները ապրում են իրարից բաժան-բաժան: Իսկ երբ մարդիկ ապրում են հասարակութեան մէջ, կոիւր նրանց մէջ ընդունում է զրա շնորհիւ ուրիշ կերպարանք: Ամեն մէկը շարունակում է կռւէլ իր սեփական ինտերէսի համար, բայց կոիւր արդէն տեղի ունի այս զէպրում աշխատակցութեան և աշխատանքի բաժանման հողի վրայ, այսինքն հասարակական հողի վրայ, և մրցումը ա գ կուի ամենագիտական ձեւերից մէկն է: Անհատականից զոյսւթեան կոիւր գառնում է աւելի ու աւելի հասարակական, սօցիալական: Իսկ երբ հասարակութեան յետագայ զարգացման ընթացքում արդիւնաբերողը զըռկւում է արդիւնագործութեան միջոցներից, երբ արժէքների բաշխման եղանակը բաժանում է հասարակութիւնը երկու հակառարտ դասերի՝ աշխատաւոր և կապիտալիստական,—ինքը կոիւր մարդկանց մէջ զառնում է ոչ միայն սօցիալական, այլև խիստ գառակարպային:

Նայենք աւելի մօտիկից, թէ ինչպէս է մզւում դասերի կոիւը ժամանակակից կապիտալիստական կարգերում:

Անհրաժեշտ եւ յաւելեալ արժեքի անհաջո հակամարտութիւնը. որպէս պասպին կուի հիմք: Արժէքների բաշխումը հասարակութեան մէջ անհրաժեշտ արժեքի վրայ (անմիջական արդինագործողների գոյութեան միջոցներ) և յաւելեալ արժեքի վրայ (կապիտալիստների և նրանց արբանեակների ձեռքը ընկած մասը) առաջ է բերում հասարակութեան բաժանումը երկու մասի՝ աշխատաւոր և կապիտալիստական: Աշխատաւոր դասի ինտերէսները այն չեն, ինչ որ են կապիտալիստական դասինը: Անսիջական արդինագործողներին հարկաւոր է, որպէսզի նրանց ապրուսի համար ծախսող անհրաժեշտ արժեքը որքան կարելի է մեծ լինի, իսկ կապիտալիստական հարկաւոր է, որպէսզի յաւելեալ արժեքը որքան կարելի է մեծ լինի: Եթէ անհրաժեշտ և յաւելեալ արժեքները ոչ մի կազ չունենային իրար հետ, այդ գեղը ուրու՛ աշխատաւոր և կապիտալիստական դասերի ինտերէսները կը լինէին միայն տարբեր, բայց չէին ազդի իրար վրայ, որովհետեւ նրանց մէջ չէր լինի ոչ մի շփում: Փեթակների ինտերէսները մէկ են, մըջիւնանոցներինը՝ ուրիշ, բայց թէն նրանց ինտերէսները տարբեր են, նրանք ապրում են, առանց իրար խանգարելու: Այդպէս է մարդկային հասարակութեան մէջ: Մենք գէտենք, որ անհրաժեշտ արժեքը ամենասերտ կերպով կառւած է յաւելեալ արժեքի հետ: Նրանք երկուուն էլ մի ամբողջութիւն են կազմում, որովհետեւ նրանք երկուուն էլ ստեղծուում են անմիջական արդինագործողների աշխատանքով: Բայց ամբողջը չի ընկնում նրան ստեղծով աշխատաւոր դասի ձեռքը, այլ բաժանում է նրա և կապիտալիստական դասի միջև: Իսկ երբ ամբողջը բաժանուում է երկու մասերի, որքան աւելի մեծ լինի մի մասը, այնքան աւելի փոքր կը լինի միւսը և ընդհակառակը՝ որքան աւելի մեծ լինի յաւելեալ արժեքը, որ ստանում է կապիտալիստական դասը, այնքան աւելի փոքր կը լինի անհրաժեշտ արժեքը, որ ծառայում է աշխատաւոր դասի գոյութիւնը պահպանելու համար: Յաւելեալ արժեքը կարող է սեծանալ միայն ի վնաս անհրաժեշտ արժեքի, անհրաժեշտ արժեքը՝ միայն ի վեստ յաւելեալ արժեքի: Երեսկայել անգամ անհնար է, թէ ի՞նչպէս կարելի է հաշտեցնել անհրաժեշտ և յաւելեալ արժեքների այդ հակամար-

առութիւնը, կապիտալիստական և աշխատաւոր դասերի ստացած մասերի հակամարտութիւնը: Սրանից պէտք է եզրակացնել, որ աշխատաւոր եւ կապիտալիստական դասերի ինտերէսները ոչ միայն տարբեր են, այլ եւ անհրաժեշտորէն հակամարտ: Մարդկանց ինտերէսները իրադրուում են գործողութեան, կուի միջոցներով: Արդիւնաբերողների արդիւնագործութեան միջոցներից կտրւելը և գրանից առաջացած՝ արժէքների բաշխումը ստեղծել են ժամանակակից հասարակութեան մէջ երկու դասեր, որոնց ինտերէսները անհաշտօրէն իրար հակամարտ են: Ուստի և ժամանակակից հասարակութեան մէջ պէտք է տեղի ունինայ և իրօք տեղի ունի դասակարգային անհաշտ կուի:

Դասերի այդ անհաշտ կուիը բղխում է անխուսափելիօրէն կապիտալիստական կարգերի էութիւնից, արժէքների բաշխումը հասարակութեան մէջ (անհրաժեշտ և յաւելեալ արժեքներ):

Աշխատանքը և կապիտալի միութեան մասին արտասանող քաղցր խօսքնը յանուն ամբողջ հասարակութեան շահի բնաւ չեն կարող քաղցրացնել իրերի իսկական գրութիւնը, որովհետեւ ամբողջ հասարակութեան շահը երբէք չի կարող պահանջել, որպէսզի նրա ստերը մեծամասնութիւնը՝ աշխատաւոր դասը՝ ամեն տեսակ զրկանքներ կրի, իսկ փոքրամասնութիւնը՝ կապիտալիստական դասը՝ շահյլի իր քմահաճոյքների համար արժէքները, որոնք ընկել են նրա ձեռքը առանց որևէ աշխատանքի: Նոյն իսկ ընդհակառակը, ամբողջ հասարակութեան շահը պահանջում է, որպէսզի նրա բոլոր անդամներն էլ որքան կարելի է լաւ ապրեն: Ճիշտ նոյնպէս և կապիտալիստական կարգերի մի քանի սաստիկ բարոյակաէր փաստաբանների արցունքները՝ թափւած այն բարոյական վիասի առթիւ, որ առաջ է գալիս «եղբայրասպան դասակարգային կուի» բարովից,՝ կոկորդիլոսի արցունքներ են: Կապիտալիստը բանուորի եղբայրը չէ, իսկ եթէ եղբայրն է, վասեղբայրն է, այնքան վատ, որ նրա հետ չի կարելի ապրել խոզադ ու սիրով մինչև այն ժամանակ, քանի նա գեռ կապիտալիստ է, քանի նա գեռ օգտւում է ուրիշի աշխատանքով:

Լինելով անխուսափելի հետևանքը արժէքների կապիտալիստական բաշխման, դասակարգային կուի գոյութիւն կունինայ այնքան ժամանակ, որքան ժամանակ գոյութիւն կունինան կապիտալիստական կարգերը: Կայ միայն մի եղանակ հաշտեցնելու անհրաժեշտ և

յաւելեալ արժէքների անհաշտ հակամաբառութիւնը, այդ է—նրանց ոչնչացնել, ոչնչացնել մարդկային աշխատանքի արդիւնքի բաժանուութ յաւելեալ և անհրաժեշտ արժէքների վրայ: Իսկ այդ հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ արդիւնագործութեան միջոցները կը զադարեն կապիտալ լինելուց և կանցնեն ի լիակատար կարգադրութիւն և տնօրինութիւն անմիջական արդիւնաբրողների, այսինքն երբ սօցիալիստական կարգերը կապիտալիստական կարգերի տեղը կը ըստնեն: Դասակարգերի կրիւը պէտք է գոյութիւն ունենայ և գոյութիւն կունենայ մինչև այն ժամանակ, մինչև որ ժամանակակից դասային հասարակութիւնը չի փոխարինվի ապագատային սօցիալիստական կարգերի:

Դասակարգային ինքնապիտակցութիւն: — Արժէքների բաշխումից բղխող ինտերէսները բաժանում են հասարակութիւնը երկու իրար հակադիր դասերի՝ աշխատաւորական և կապիտալիստական: Որովհետև ինտերէսները իրագործում են միայն գործողութեան միջոցով, ուստի և դասը գոյութիւն ունի միայն այն չափով, որ չափով նա գործում է, որ ափով նա եռանգուն կերպով պաշտպանում է իր ընդհանուր դասակարգային ինտերէսութայց դասը բաղկացած է մարդկանցից, և իր ինտերէսը նա կարող է պաշտպանել միայն այն չափով, որ չափով այդ դասը կազմող մարդիկ պաշտպանում են իրանց դասային ինտերէսը: Իսկ իրանց դասային ինտերէսը պաշտպանել մարդիկ կարող են միայն այն ժամանակ, երբ նրանք գասային (կամ դասակարգային) ինքնագիտակցութիւն ունեն: Այդ պատճառով էլ դասային ինքնապիտակցութիւնը ներկայացնում է դասային կուլ: անհրաժեշտ պայմանը:

Ինչումն է կայանում դասային ինքնագիտակցութիւնը: Նա կայանում է այն բանի մէջ, որ մարդս պարզ կերպով հասկանում է, նախ իր սեփական գրութեան և նոյնանման պայմանների մէջ ապրող ուրիշ մարդկանց գրութեան մէջ եղած կապը. երկրորդ՝ նրանց ընդհանուր գրութեան կախումը հակառակ պայմանների մէջ ապրող մարդկանց գրութեանից: Իր դասային ինտերէսը գիտակցելու համար աշխատաւոր մարդը պէտք է հասկանայ, որ նրա աշխատավարձի չափը, նրա աշխատաւոր օրւայ երկարութիւնը և այն, պատահականութեան գործ չէ, այլ որոշում է աշխատաւոր դասի միւս անդամների աշխատավարձով և

աշխատաւոր օրւայ երկարութեամբ: Միևնոյն ժամանակ նա պէտք է հասկանայ, որ եթէ աշխատաւոր դասի զրութիւնն այնպէս է, ինչպէս նա այժմ, — դա հետեւանք է այն հանգամանքի, որ արդիւնագործութեան միջոցների տէր կապիտալիստ դասը հնարաւորութիւն ունի իւրացնելու աշխատաւոր դասի յաւելեալ աշխատանքով ստեղծւած յաւելեալ արժէքը: Մի խօսրով, դասային ինքնագիտակցութիւն ունենալ՝ նշանակում է աշխատաւոր մարդու համար գիտակցել աշխատաւոր դասի շահերի ընդհանրութիւնը և նրանց հակամարտութիւնը կապիտալիստ դասի ինտերէսներին: կապիտալիստի համար նշանակում է գիտակցել կապիտալիստ դասի ինտերէսների ընդհանրութիւնը և նրանց հակամարտութիւնը աշխատաւոր դասի ինտերէսներին:

Ճաւոք սրաի պէտք է խոստավանել, որ կապիտալիստ դասը՝ զինւած գիտութեամբ, փորձով և իշխանութեամբ, անհամեմատ աւելի է գիտակցում իր դասային ինտերէսը և շատ աւելի լաւ գիտէ պաշտպանել նրան, քան աշխատաւոր դասը: Այդ հասկանալի է, թէև ցաւալի: Իր դասային ինտերէսը գիտակցելու համար աշխատաւոր մարդը պէտք է շատ բան սովորի և շատ բան հասկանայ: Իսկ սովորելը և հասկանալը ինքն իրանց չեն կատարեում: Ո՞րտեղից նա կարող էր հասկանալ, երբ չհասարակութեան իսկական իմաստը և կազմւածքը ոչ-ոքի հասկանալի չէին: Մտածողների և գիտնականների մի քանի սերունդների աշխատանքի չնորդիւ միայն հետպհետէ սկսեց պարզել հասարակական կարգերի էութիւնը: Իսկ կարլ Մարքսի հղօր միտքը հաւաքեց և միացրեց այդ բոլոր ցաք ու ցրիւ եղած գիտելիքները մի ներդաշնակ և պարզ վարդապեսութեան մէջ, որը ոչ միայն պարզեց աշխատաւոր դասի իսկական գրութիւնը, այլ և ելք ցոյց տւեց այդ գրութիւնից դասային ինքնագիտակցութեան զարգացման և դասային կուլու միջոցով: Միայն Մարքսի կատարած աշխատանքից յետոյ աշխատաւորութեան դասակարգային ինքնագիտակցութեան զարգացումը դրւեց ուղիղ ճանապարհի վրայ: Ահա թէ ինչու աշխատաւոր դասը միշտ յարգանքով և չնորհակալութեամբ պիտի յիշէ իր մեծ ուսուցչի, զիտական սօցիալիզմի ստեղծագործողի և բանուրների միջազգային միութեան գլխաւոր հիմնադրի անունը: Այժմ, երբ ճանապարհը արդէն ուրւագծւած է, աշխատաւոր

գասը սկսում է աշխատաւոր ինտելիգենցիայի գործակցութեամբ աւելի ու աւելի լաւ գիտակցել իր գասային ինտերէսը և աւելի ու աւելի անյօդողով կերպով իր կոխւը առաջ մզել կապիտալիստական դասի գէմ: Այդ ճանապարհը տանում է գէպի սօցիալիզմի յաղթանակը, գէպի փոխարինումը դասային ճասարակութեան սօցիալիստական հասարակութեամբ:

Գասային կուի ծնւերը: — Դասային ինքնագիտակցութիւնը կայանում է իր գասի շահերի ընդհանրութիւնը և նրանց հակամարտութիւնը ուրիշ գասի շահերին՝ հասկանալու մէջ, իսկ գասային կոխւը կայանում է մի դասի գասային շահերի պաշտպանումը ուրիշ գասի գէմ: Իսկ ինչպէս է տեղի ունենում դասային շահերի ողաշտպանումը, որնք են դասային կուի ձեռքը: Անհրաժեշտ և յաւելեալ արժէքները, որոնց վրայ է բաժանում աշխատանքի արտադրած արժէքների գումարը, առմիջտ որոշած մեծութիւններ չեն, այլ ընդհակառակը ենթարկում են անընդհատ փոփոխութիւնների, տեսնելով թէ ինչ դրութեան մէջ են երկու դասերը, որոնց ձեռքն են ընկնում նրանք բաշխման մօմենտում: Անհրաժեշտ արժէքն այն արժէքն է, որ անհրաժեշտ է աշխատաւոր մարդու և նրա ընտանիքի գոյութիւնը պահպանելու համար: Բայց գոյութիւն էլ կայ, գոյութիւն էլ: Որքան տաելի բարձր է բանուրի մտաւոր մակերսոյթը, այնքան աւելի շատ են նրա կարիքները, այնքան աւելի բարձր է այդ անհրաժեշտ արժէքը, այսինքն նրա աշխատավարձը: Բայց որպէս աշխատաւոր գասի մտաւոր և բարոյական մակերսոյթը բարձրանում է նրա դասակարգային ինքնագիտակցութեան նետ զուգընթացարար, — ուստի աշխատաւոր և կապիտալիստական դասերի միջև եղած կոխւը տեղի է ունենում՝ նախ և առաջ և գլխաւորապէս աշխատավարձի և յաւելեալ արժէքի շուրջը: Աշխատաւոր գասը ձգտում է բարձրացնել աշխատավարձը մինչեւ իր շարունակ լայնացող կարիքները մակերեսոյթը, կապիտալիստական դասը ձգտում է զիջել յաւելեալ արժէքի հնարաւորին չափ փոքր մասը: Ի՞նչ միջոցներ են գործադրում դասերը, կուելով իրանց նպատակներին հասնելու համար:

Գործադրներ: — Կուի հիմնական միջոցը այն է, որ կուող կողմերից իրաքանչերը, առանձին վերցրած, ձգտում է իր գործողութիւնները համաձայնեցնել կարգաւորել: Երբ գործարանում բանուրները այլս չեն բաւականանում իրանց ստացած աշխատա-

վարձով, նրանք համաձայնութեան են գալիս և միասին իրանց պահանջները ներկայացնում գործատիրովն: Գործատէրը զիջում է կամ չի զիջում, նայած թէ ձեսնոտու է արգեօք ձեռքից թողնել շահի մի մասը և խուսափել գործադրութից ու արդիւնագործութեան կանոնաւոր ընթացքի ալլ և այլ խանդարումներից կամ ուղղակի դիմել աշխատանքի ընդհատման: Եթէ գործատէրը չի զիջում, բանուրները ենթարկում են իրանց բախտին կամ յայտաբարում են գործադրու, նայած թէ որքան են նրանք համաձայն իրար հետ, ունեն արգեօք փողի գումարներ, կարող են արգեօք նրանք յոյս գնել ուրիշ բանուրների օգնութեան վրայ և այլն և այլն: Գործադրուլը գասային կուի ամենանզօր միջոցներից մէկն է: Մասնաւանդ այդ պարզ է լինում, երբ աշխատաւորների փորբաթիւ բանակի գործողութիւնների համաձայնեցումը գառնում է աշխատաւորութեան նշանաւոր մասի գործողութիւնների համաձայնեցում, երբ մանաւոր գործազուր դառնում է ընդնանուր: Այսուղ արգէն գասը կանգնած է գասի գէմ և, որքան էլ հարուստ լինի կապիտալիստական դասը գիտութեամբ, փորձով և իշխանութեամբ, այնուամենայնիւ յաղթանակը ոչ միշտ մնում է նրա կողմը:

Աշխատաւորական միութիւններ: — Սակայն գործադրուլը կարող է իրագործել միայն բացառիկ գէպքերում: Իր գասային շահերի առօրեայ պաշտպանութեան համար աշխատաւոր դասն ունի մի ուրիշ միջոց — միութիւնները: Ժողովուրդների իմաստութիւնը վաղուց հետէ արտայայտել է, որ «միութիւն մէջն է ոյժը»: Բանի գեռ աշխատաւորները գործում են իրաքանչերը ինքնիրան, նրանք թոյլ և անօգնուկան են ամենանզօր կապիտալի առջև: Չունենալով իրենց զեկավար — գասային գիտակցութիւնը, նրանք գործում են կուրօբէն և ոչ միայն իրանք են տուժում, այլ հանգիստանում են նոյն քակ ուրիշ աշխատաւորների համար ձնշման և ստրկացման գործիքներ: Վերցնենք թէկուզ մրցան հարցը աշխատաւորների միջև, — զա աշխատաւոր գասի ցաւոտ տեղն է: Մենք արգէն ասացինք, որ իրանց անտեսութիւնից գուրս զցւած հողագործ արգիւնագործները զնում են քաղաք աշխատանք վլնուելու և այնտեղ իջեցնում են քաղաքային բանուրների աշխատավարձը և ակամայօրէն թուլացնում են նրանց ընդդիմադիր ոյժը կապիտալիստ-գործատէրերի կապանքների վերաբերմաբ: Այստեղ, ի հարկէ, մեղաւոր են ոչ թէ գերախտ գիւղական արգիւնա-

բերողները, այլ տամանակակից կապիտալիստական սիստեմը: Բայց չի կարելի մոռացութեան տալ և այն, որ աշխատաւոր դասի անկազմակերպ գրութիւնը, նրա անկապ գործողութիւնները շատ ձեռնտու են կապիտալիստական դասի համար: Քաղաքային բանւորները չեն կարող այնպէս անել, որպէս զի գիւղական արդիւնագործողները չը մնանկանային և ստիպւած չը լինէին գնալ բաղաք աշխատանք գնտուելու համար: Բայց նըսանը կարող են բաւական նշանաւոր չափով թուլացնել մըցումը եկուոր աշխատաւորների կողմից, կազմելով բանւորական միութիւններ: Այդպիսի միութիւնները ուշի-ուշով հետևում են բանւորական շուկայի գրութեան և կարող են անգործներին ցոյց տալ տեղեր, որտեղ աշխատաւոր ձեռքերի պահանջը աւելի մեծ է և որտեղ եկուոր բանւորները կարող են տեղաւորել հնարաւորին չափ չնչին վնաս հասցնելով մշտական քաղաքային բանւորներին: Եթէ միութիւնը բաւականաչափ ուժեղ է, եթէ նա ունի բարոյական հեղինակութիւն աշխատաւորների աշխարհում, —իրանը եկուոր բանւորներն էլ ոչ միշտ կուգենան գնալ ընդդէմ նրան և թուլացնել նրանց ոյժը կապիտալիստների գէմ վարած կուի մէջ: Կապիտալիզմի առաջաւոր երկիրներում բանւորական միութիւնները գէթ մի քիչ թուլացնում են բանւորների փոխադարձ մըցումը և գրանով քիչ-շատ պահում են աշխատավարձը որոշ մակերևոյթի վրայ: Միացնելով աշխատաւորների գործողութիւնները, բանւորական միութիւնները հաղորդում են աշխատաւոր դասին մեծ տոկունութիւն նրա կապիտալի գէմ ունեցած կուի մէջ: Ո՞վ չը գիտէ ոստերի և աւելի առակը: Ասեն մի ոստն առանձին վերցրած կոտրելը շատ հեշտ է, իսկ երբ շատ ոստեր ամուր կապւած են իրար հետ, նրանց թերեւ կարելի է ծուել մի կողմից գէպի միւս կողմը, սակայն կոտրել նրանց անհնար է: Լաւ գրւած բանւորական միութիւնները դառնում են մի ոյժ, որից կապիտալիստները սաստիկ վախենում են և որին զիջում են ամեն անգամ, երբ նրանը կարող են այդ անել առանց մեծ վնաս հասցնելու իրանց գործին: Մանաւանդ շատ մեծ է նշանակութիւնը բանւորական միութիւնների գործադուներ նախապատրաստելու և յայտարարելու ժամանակ: Սովորեցնելով բանւորներին համաձայնեցրած գործողութիւնների և իրանց դասային ինտերէսի պարզուուց ըմբռնան, բանւորական միութիւնները կարգավորութեան որէնքները՝ բանւորական օրւայ, կերպակնօրեայ հանգստի, բանւորների ապահովագրութեան, ծերերի կենսաթոշակների և այլ նմանօրինակ բաների մասին: — այդ

նել գործադուները անհամեմատ աւելի մեծ յաջողութեամբ, ուրովինետև նրանք յայտարարում են գործադու ոչ բոբրորած գրութեան մէջ, ինչպէս այդ ան ուժ են անկազմակերպ բանւորները, այլ կարգին քննելով գրութիւնը և յաջողութեան բոլոր յոյսերը:

Քաղաքական կուրե: — Գործադուներով և առեն տեսակ բանւորական միութիւնների կազմակերպմամբ չի սահմանափակւում աշխատաւոր դասի կուրեը կապիտալիստականի գէմ: Գոյութիւն ունի նաև մի ուրիշ կարեոր ձեւ էլ դասային կուրի, այն է — քաղաքական կուրե: Մենք տեսանք, որ կապիտալիստական հասարակութեան մէջ հասարակական իշխանութեան կազմակերպութիւնը — պետութիւնը և նրա արտայայտիչը, կառավարութիւնն անխուսափելու միակ լինին կապիտալիստական: Ուրիշ խօսքով, ամբողջ պետական մերենայի գործողութիւնը, օրէնքները և նրանց կիրառումը, պետական եկամուռների գործադրումը, զինուրական պետական ոյժերի կարգադրութիւնը և այն, ոտեղծւած են կապիտալիստական դասի շահերը որքան կարելի է լաւ ապահովելու և պաշտպանելու համար: Այդ դասի շրջանակում պետական իշխանութիւնը կարող է գտնել այս կամ այն խաւի ձեռքում — հողային սեփականութեան ներկայացուցիչների (ազնւականների) կամ արգիւնագործական սեփականութեան ներկայացուցիչների (բուրժուազիայի) կամ այդ երկուսի էլ ձեռքում միասին, բայց միշտ ժամանակակից պետութեան մէջ իշխանութիւնը ձգտում է ապահովել արգիւնագործութեան միջոցների աէրերի շահերը ի վնաս անմիջական արգիւնագործողների շահերին:

Քանի աճում է աշխատաւորութեան դասային ինքնազիտակցութիւնը, այնքան նա աւելի մեծ զիտութիւն և ազգեցուրեան է ձևոք բերում երկրի քաղաքական կեանքում: Այստեղ, որտեղ գոյութիւն ունի ժողովրդական ներկայացուցչութիւն, աշխատաւոր դասի ընտրեալները օգտուում են պարլամենտից օրէնսդրական ձանապարհով ձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք ապահովում են աշխատաւորութեան շահերը և զրանով թուլացնում կապիտալիստական դասի քաղաքական ոյժը: Բոլոր այսպէս կոչւած գործարանային օրէնքները՝ բանւորական օրւայ, կերպակնօրեայ հանգստի, բանւորների ապահովագրութեան, ծերերի կենսաթոշակների և այլ նմանօրինակ բաների մասին: — այդ

բոլոր օրէնքները իրականութիւն են դառել միայն շնորհիւ աշխատաւոր դասի անմիջական բաղարական ազգեցնեան:

Պարլամենտներում աշխատաւորութիւնը տանում է իր կոփեր կապիտալիստական դասի դէմ քաղաքական հողի վրայ, և մի քանի երկրներում, ինչպէս ֆրանսիայում և Շվեյցարիայում, գործը այն բանին էր հասնում արդէն, որ աշխատաւորութեան ներկայացուցիչները կապիտալիստական դասի ներկայացուցիչների հետ միասին ստանձնում էին անմիջական մասնակցութիւն երկրի կառավարման մէջ: Բայց որքան էլ հմայիչ թւայ առաջին հայեացքից քաղաքական կամ այդպիսի յաջողութիւնը, սակայն աշխատաւոր դասի համար չափազանց կարեոր է ըժբանել նրանց իսկական նշանակութիւնը և աւելի մեծ զին չը տալ նրանց, քան նրանք իրօք ունեն: Ի հարկէ, գործարանային օրէնսդորութիւնը, բանւորական օրւայ և նմանօրինակ ինդիւների վերաբերմաբ հրատարակուող օրէնքները ունեն աշխատաւորութեան համար իրանց շահաւէտ կողմերը, որոնց չը պէտք է արհամարհել: Բայց աշխատաւոր դասը պիտի հասկանայ, որ այդ միայն մի ոսկոր է, որ կապիտալիստական դասը զցում է նրա քերանը նրան զբաղեցնելու համար: Որքան էլ մեծ լինի աշխատաւոր դասի քաղաքական ազգեցութիւնը ժամանակից պետութեան մէջ, նա չի կարող ոչնչացնել անհրաժեշտ և յաւելեալ արժէքների միջև եղած անհաշտ հակածարտութիւնը: Եւ երբ աշխատաւոր դասի որևէ ներկայացուցիչ մինիստը է դառնում կապիտալիստական կառավարութեան մէջ, նա կարող է թերես մի քանի կարկատաներ զնել հասարակական շէնքի ծակ երթիկի վրայ, բայց ոչինչ չի կարող փոխել իրան շինութեան մէջ, որի ներսում աշխատաւոր դասին յատկացրւած է այնքան անհախանձելի տեղ: Քաղաքական կուի ամբողջ նշանակութիւնը ոչ թէ նրանումն է, որ նա մտցնում է այս կամ այն բարեփոխումները աշխատաւորութեան դրութեան մէջ, այլ այն բանի մէջ, որ նա զարգացնում է դասային ինքնազիտակցութիւնը, ներկայացնում է մի հզօր միջոց աշխատաւորների միացման և նրանց գործութիւնների համաձայնեցման համար:

Քաղաքական կոփեր զարգացնում է աշխատաւոր դասի բաղարական ըթոնողութիւնը և պատրաստում նրան այն մեծ գործի համար, որ գրւած է նրա առաջ,--ապագայ սօցիալիստական հասա-

րակութեան կազմակերպման գործի համար: Աշխատաւոր դասը չը պէտք է մոռանայ, որ սօցիալիստական կարգերը կը լինեն ոչ թէ աշխատաւորութեան շահերի հաշտեցումը կապիտալիստական դասի շահերի հետ, այլ դասերի լիսակտար վերացումը:

Ուստի և սօցիալիստական կարգերի իրականացմանը նակարող է դիմել ոչ համաձայնութիւնների ճանապարհով կապիտալիստական դասի հետ, այլ անընդհատ կուով նրա հետ մինչեւ վերջնական յաղթանակը:

Այն, ինչ որ մենք ասացինք աշխատաւորութեան քաղաքական կուի նշանակութեան մասին, կատարելապէս ընդունելի է և գասային կուի այլ ձևերի վերաբերմաբ—գործադուլների և բանւորական միութիւնների: Գործադուլները և բանւորական միութիւնները անկառկած տանում են դէպի աշխատաւոր դասի դրութեան զանգաղաշրժ բարելաւումը: Բայց նրանց ահագին նշանակութիւնը ոչ թէ այդ մասնակի բարելաւմն մէջ է, այլ այն բանում, որ նրանք միացնում են աշխատաւորներին և զարթեցնում նրանց դասային ինքնազիտակցութիւնը: Ահա թէ ինչու երբեմն անյաջող գործադուլը, որը ընդգրկում է անգիտակից բանւորների մեծ մասսա և բաց անում նրանց աչքերը իրանց իսկական գրութեան վրայ, —աւելի կարեոր աշխատաւորութեան համար, քան յաջող գործադուլը, որը սահմանափակւելի է կազմակերպւած բանւորների փոքրիկ քանակով: Ընդհանրապէս դասային կուի ձևերի վերաբերմաբ աշխատաւոր դասը պիտի ունենայ մի օնփոփոխ կանոն:—

Այն ամենը, որ միացնում է իրօք աշխատաւորներին եւ պարզում նրանց գասային ինքնազիտակցութիւնը, օգտակար է աշխատաւոր դասին: Այն ամենը, որ բաժանում է աշխատաւորներին եւ մթնացնում նրանց դասային ինքնազիտակցութիւնը, վնասակար է աշխատաւոր դասին: Եթէ միշտ ձետեւի այս սկզբունքին, աշխատաւորութիւնը չի շեղի ուղիղ ճանապարհոց և և չի վատնի իր ոյժերը ի զուր տեղը—առանց գործին որևէ օգուտ հասցնելու:

Գասային կուի միջազգային բնոյթը:—Մինչև այժմ մենք ի նկատմի ունէինք արդիւնագործութիւնը և բաշխումը, ինչպէս և նրանցից բաշխող հետեանքները հոսարակութեան մէջ՝ վերցրած նրան որպէս մի անկախ ամբողջութիւն: Ենթադրուում էր, որ աշխատանքի բաժանման վրայ հիմնած հասարակութիւնը արտադրում


է այն բոլորը, ինչ հարկաւոր է նրան իր սեփական կարիքները հոգալու համար, արտադրում է բացառապէս իր համար: Ենթադրում էր այդ պատճառով, որ ապրանքների փոխանակութիւնը տեղի ունի միայն հասարակութեան ներսում, և որ արժէքները դուրս չեն գալիս այն հասարակութեան սահմաններից, որի մէջնրանք արտադրում են: Իրօք, իրերի գրութիւնը շատ աւելի բարդ է: Թուս գիւղական արդիւնագործների ձեռքով արտադրուած հացը արտահանում է արտասահման և ծառայում անգլիական, գերմանական և ֆրանսիական բանորների ապրուսի համար: Արեւտեան Եւրօպայում և Ամերիկայում պատրաստած ամեն տեսակ մէքենաներ ներմուծում են Ռուսաստան կապիտալիստական արդիւնագործութեան կարիքների համար: Հնդկաստանի բամբակը հնթարկում է մշակման Մօսկուայի որևէ բամբակի ֆաբրիկայում և որպէս չիթ արտահանում Զինսաստան կառ Պարսկաստան և այլն: Բայց այդ գեռ բոլորը չէ: Առաջաւոր կապիտալիստական երկիրներում կարող է շատ աւելի կապիտալ լինել, քան պէտք է բոլոր հասարակական-բանորական ոյժերը սպառելու համար: Իւրաքանչիւր միջին հասարակական բանորական ոյժի վրայ՝ առանձին վերցրած՝ գալիս է կապիտալի մի աւելորդ գումար, որի շնորհիւ կապիտալի միջին շահը ընկնում է: Բայց այդ առաջաւոր կապիտալիստական երկիրներում աշխատաւոր գասի ընդհանուր կոլուրական մակերեւոյթը աւելի բարձր է, քան յետամնաց երկիրներում: Ուստի այնտեղ և աշխատա վարձը աւելի բարձր է, իսկ կապիտալիստի շահը աւելի փոքր, քան այն երկիրներում, որտեղ կապիտալիստական արդիւնագործութիւնը հնարաւորին չափ գեռ ծաւալւած չէ: Այդ պատճառով կապիտալիստները՝ շահի յետերից ընկած աշխատում են իրանց կապիտալները գործադրել այն երկիրներում, որտեղից նրանք աւելի եկամուտ կըստանան: Եւ ան մենք տեսնում ենք, որ գերմանական, ֆրանսիական, բելգիական կամ անգլիական կապիտալիստները ուզարկում են իրանց գործակալներին կամ ինժեներներին, օրինակ, Ռուսաստան ամեն տեսակ կապիտալիստական ձեռնարկութիւններ չսահեղձելու, համար: Երբ ձեռնարկութիւնը ստեղծած է, նրա մէջ աշխատում են առա արդիւնագործողներ, որոնք ստանում են ուսական աշխատավարձ, այսինքն աւելի ցածր աշխատավարձ, քան անգլիականը. կամ բելգիականը:

Նրանց արտադրած յաւելեալ արժէքը գնում է (գուրս եկած հարկերը) Ռուսաստանից արտասահման և մտնում օտարերկրեայ կապիտալիստների գրաբանը կապիտալի շահի կամ ձեռնարկողական շահի ձևով:

Կարելի էր այսուեղ բերել և մի շարք ուրիշ օրինակները բայց արդէն ասածից պարզ է, որ արդիւնագործութեան և բաշխման տեսակէտից վերցրած՝ իւրաքանչիւր հասարակութիւն, իւրաքանչիւր երկիր գոյութիւն ունի ոչ որպէս առանձին անկախամբողջութիւն, այլ ընդհակառակը, բոլոր երկիրների միջն կապիտալի տիրապետութեան տակ գոյութիւն ունի այդ տեսակէտից ամենասակած կամ: Կապիտալի համար գոյութիւն չունին երկիրների մէջ եղած սահմանները, ոչ էլ ապգութիւնները: Կապիտալլը հայրենիք չունի և գնում է այսուեղ, որտեղից նա կարող է ամենամեծ շահը ստանալ: Կապիտալի միջազգային բնոյթի շնորհիւ բոլոր ժողովուրդների կապիտալիստները կապւած են մի ընդհանուր ինտերէսով՝ մեծացնել յաւելեալ արժեքը ի վեաս անհրաժեշտ արժէքի աշխատավարձի: Այդ ընդհանուր ինտերէսը միացնում է նրանց մի անբաժան միջազգային կապտալիստական գասի մէջ:

Իւրաքանչիւր ասանձին երկիր մէջ աշխատաւորութեան ինտերէսները անհաջործէն հակամարտ են կապիտալիստական գասի ինտերէսներին: Իսկ որպիշեակ առանձին երկիրների կապիտալիստական գասի ընորհիւ իրանց ինտերէսների ընդհանրութեան կազմում են մի միջազգային կապիտալիստական գաս, ուսուի և առանձին երկիրների աշխատաւոր գասի ընոյնպէս կազմում են իրանց ընդհանուր շահների միջոցով մի անբաժան՝ կապիտալիստական գասին հակամարտ միջազգային աշխատաւորութիւն: Սրանից պէտք է եզրակացնել, որ մի երկրում առաջ մըզող գասային կոիւր անխուսափելիօրէն դիպուդ է գասային շահներին և ուրիշ երկիրներում, — այդ պատճառով մենք տեսնում ենք, որ այդպիսի գէպերում կապիտալիստները օգնութիւն են գալիս կապիտալիստներին, իսկ աշխատաւորները՝ աշխատաւորներին: Օրինակի համար յիշենք այստեղ եղբայրական շնորհակալութեան զգացմունքով այն նիւթեական և բարոյական օգնութիւնները, որ հասցնում էին և հասցնում են Ռուսաստանի աշխատաւորութեանը՝ նրա ծանր կուր մէջ ուրիշ երկիրների և մողովուրդների աշխատաւոր գասիրը:

Դասերի կոիւր չէ սահմանափակւում մի երկրով մի ժողովուրդով: Խնչակը և ինքը կապիտալը, որ նրան առաջ է բերում, գասիրի կոիւր միջազգային:



“ՅԱՌԱՋԱԿԱՐԱՆ

ԼՈՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ

1.	Յախու. — Հարուստներ և ազգատներ	15	կ.
2.	Պէջիսօնով. — Հաց, լոյս և ազգատութիւն	12	»
3.	Ֆէօդօրօֆիչ. — Ինչպէս են ժողովում և ծախսում ժողովրական փողերը	5	»
4.	Կարմալիսկ. — Նոր լեբան քարոզը	2	»
5.	Չերնով. — Գիւղացին և բանւորը	15	»
6.	Պերնէրստորֆեր. — Ազգային հարցը և ազգեմոկրատիան	5	»
7.	Պրամսկօլինի. — Գիւղացիներին	5	»
8.	Ե. Թոփչիան. — Արհեստակցական ժիութիւններ	15	»
9.	Նօվօրօժմալի. — Ի՞նչ է իրաւական պետութիւնը	15	»
10.	Ե. Կարանով. — Հողային հարցը Նոր Զելանդիայում	2	»
11.	Ժան Ֆօրէս. — Բուրժուական սեփականութիւնը և նրա ապագայ գրաւումը	5	»
12.	Ա. Արեղիան. — Դեմոկրատական ընտրութիւններ	12	»
13.	Կառցիկ. — Ազգութիւնների հարցը Ռուսաստանում	3	»
14.	Ա. Անարսիան. — (Ղարիբ) Ազատութեան ճանապարհին	80	»
15.	Ֆ. Լասալ. — Սահմանադրութեան էութեան մասին	5	»
16.	Ա. Ն. — Ի՞նչպէս կարելի է լուծել հողային հարցը	12	»
17.	Վ. Գալուբեկի. — Ի՞նչ է ժողովրդապետութիւնը	2	»
18.	Ա Զաւարեան. — Վիճակագրական տեղեկութիւններ գիւղական ազգաբնակութեան անտեսական վիճ. մասին	25	»
19.	Ալֆօնս Գևոնան. — Ժողովրդական օրէնսդրութիւնը — դաշնակցական Զւիցերիայում	25	»
20.	Ֆիլոտէին. — Ո՞վ ի՞նչպէս է ապրում	7	»
21.	— Մի զրոյց հողի մասին	5	»
22.	Լ. Շիշկօ. — Ագրարային ծրագրի հարցը	7	»
23.	Ա. Նիկոլաևի. — Կօոպերացիա	5	»
24.	Շտապհեցք օգտւելու ձեր իրաւունքներից	1	»
25.	Լ. Պետրով. — Երկու ծրագրի	20	»
26.	Ա. Վշումի. — Պետական կազմակերպութեան հիմքերը Արեմութքում. —	12	»
27.	Անալից. — Գիւղացիական հարցը Ֆրանսիայում	7	»
28.	Մ. Յովիաննիսիան. — Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները	50	»
29.	Փ. Գէղ. և Պ. Լաֆարդ. — Տնտեսական զարգացումը և սօցիալիզմը	5	»
30.	Նօվօրօժմալի. — Ազգային հարցը, աւտոն. և ֆէդէրաց.	7	»
31.	Մորամանկ կարգեր	7	»

ՅԱՌԱՋԱԿԱՐԱՆ

32.	Մ. Յովիաննիսեան.—Գորդեան հանդուցը (տաճկահայ իմողերի վերջին շրջանը)	20	»
33.	Հրահանգներ գաւառների համար	10	»
34.	Վ. Չերնով.—Դասակարգային կուփ թէօրիայի շուրջը	12	»
35.	Լ. Շիշկո.—Նւազագյոյն ծրագիրը	10	»
36.	Ս. Նելրասօվ.—Ի՞նչ կարգեր են հարկաւոր ժողովրդին	30	»
37.	Ա. Շախաթունիսեան.—Թէդէրալիզմ և գեմոկրատիզմ	4	»
38.	Արամայիս.—Վասարակարը	25	»
40.	Մ. Յովիաննիսեան.—Կովկասեան վանդէան (հայ-թրքական ընդհարութները և նրանց պատճառները)	7	»
41.	Շ. Գորյել—Ի՞նչպէս իրականացնել ազգութիւնների հաւասարութիւնը	80	»
42.	Գ. Խաժակ.—Դէպի ֆէդէրացիա	18	»
43.	Վ. Չերնով.—Պրօլէտարիատը և աշխատ. գիւղացիութ.	3	»
44.	Արքամօվա.—Գիւղացին և բանւորը	45	»
45.	Է. Վանդերվէլը.—Բանւոր դասակարգի դրութիւնը Բելգիայում	15	»
46.	Ո. Զակ.—Հող և կապիտալիզմ	10	»
47.	Վահկ.—Անջատածները	10	»
48.	Մ. Յովիաննիսեան.—Փիլիսօփայ սօցիօլոցը	15	»
49.	Ֆուռովովիչ.—Ժողովրդական փողերը (քուրթերէն)	7	»
51.	Արամայիս.—Մի քանի գլուխ հայ-թրքական ընդհարութներից II մաս	20	»
52.	Յ. Թագէոսեան.—Թրանսիական մեծ յեղափոխութիւնը	10	»
53.	Գնթունի.—Յիշողութիւններ մօտիկ անցեալից I պրակ	10	»
54.	Գնթունի.—Յիշողութիւններ մօտիկ անցեալից II պրակ	15	»
55.	Յ. Թագէոսեան.—Ազգային հերոս	5	»
56.	Ն. Կարիշեւ.—Տնտեսագիտական զբոյցներ	20	»
57.	Ս. Տիգրաննիսեան.—Դաշնակցական պատգամաւորները երկրորդ պետական Դումայում	30	»
58.	Ա. Բախունիսեր և ազքատներ II մաս	20	»

Դիմել՝ Թէֆլիս «Փարոս», և «Գուշտակներեց» դրախտանութները.

Բագու՝ «Սատրուգնիկին».

Երևան.—Ս. Օհանջանեանին.

Խնդրում ենք մեր գաւառ ական գործակալներին, որ իրենց մօտ գտնող հին գրքերը յետ ուղարկեն, որոնց փոխարէն կուշարկւեննորերը Գլխաւոր պահպատուած են՝ № 5, 7 և 13.

Ցանկացողները կարող են ստանալ գրադարանի բոլոր գրքերը միասին մինչև 58 համարը, վճարելով 8 ր. 20 կ. առանց հանապարհածախոսի:

2013



